ԽՍՀՄ Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք ՀԽՍՀ

# ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## ՀԱՏՎԱԾ V

(ԽՍՀՄ-ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ)

Հ. Հ. ՊԵՏ. ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1931

# ПРОГРАММА
## ПОЛИТЗАНЯТИЙ С КРАСНОАРМЕЙЦАМИ
### РАЗДЕЛ V.

**(Капиталистическое окружение СССР и борьба трудящихся всего мира)**

---

## ՑԱՆԿ


| | | |
|---|---|---|
| I. | Իմպերիալիզմը և արդի կապիտալիզմի համաշխարհային տնտեսական ճգնաժամը | 3 |
| II. | Բանվորների հեղափոխական պայքարը կապիտալիստական յերկրներում | 24 |
| III. | Աշխատավորների ազգային ազատագրական շարժումը գաղութներում | 39 |
| IV. | Կոմինտերնը համաշխարհային հեղափոխության առաջնորդ | 51 |
| V. | Ֆրանսիա | 67 |
| VI. | Անգլիա | 80 |
| VII. | Գերմանիա | 94 |
| VIII. | Լեհաստան | 105 |
| IX. | Ռումինիա | 133 |
| X. | Մերձբալթյան յերկրներ | 143 |
| XI. | Չինաստան | 150 |
| XII. | Ճապոնիա | 160 |



ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Պատվեր 2963. Գրառեզլիտվար 6522 (բ). Տիրաժ 750.


2017

# I. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՅԵՎ ԱՐԴԻ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

1. Իմպերիալիզմի եյությունը.— 2. Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի վերջին շրջանը (ետապը): 3. Կապիտալիզմի հետպատերազմյան զարգացման շրջանը, վորպես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի շրջան: 4. Ներկա համաշխարհային տնտեսական ճգնաժամը և այժմյան կապիտալիզմի բոլոր հակասությունների աճումը: 5. Սոցիալ-ֆաշիստների և աջ ոպորտունիզմի մարգարեյության սնանկացումը, կապիտալիզմի «կազմակերպվածության» և «ծաղկման» մասին:

## 1. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

*Կապիտալիզմի ներկա շրջանը (իմպերիալիզմի շրջանը) պատմականորեն նախապատրաստվել է կապիտալիստական հարաբերությունների ամբողջ նախորդ զարգացումով և հանդիսանում է այսպես կոչված արդյունաբերական կապիտալիզմի եպոխայի անխուսափելի հետևանքը: Արդյունաբերական կապիտալիզմն աճել է ապրանքային արտադրության զարգացման հիման վրա: Կապիտալիստական արտադրության ձևերի* հիմնական հատկանիշները, *վորոնք տարբերում են կապիտալիզմը նախորդ նախակապիտալիստական շրջանի արտադրության ձևերից, հանդիսանում են.* *ա*) Անմիջական արտադրողին բաժանելը արտադրության միջոցներից *և արտադրության հիմնական ու գլխավոր միջոցները կապիտալիստական դասակարգի և խոշոր հողատերերի ձեռում կենտրոնացնելը:* *բ*) Բանվոր դասակարգի շահագործումը *կապիտալիստների*

կողմից, բանվորներ, վորոնք զրկված լինելով արտադրության միջոցներից, ստիպված ծախում են իրենց բանվորական ուժը։ գ) Շահույթ ստանալու նպատակով ապրանքների արտադրություն, քանի վոր շահ ստանալու ակնկալումը հանդիսանում է կապիտալիստական ձևի արտադրության հիմնական շարժիչ ուժը։ դ) Յեվ այստեղից բխող արտադրության կապիտալիստական յեղանակի անպլանայնությունը։ Շահ ստանալու յետևից ընկնելով, կապիտալիստներն անզուսպորեն ձգտում են դեպի արտադրության անսահման լայնացումը և կապիտալիստական արտադրական հարաբերությունների ամրացումը։

Այդ ձգտումը դեպի կապիտալիստական արտադրության անսահման լայնացումը, իր զարգացման մեջ դեմ է առնում պրոլետարական մասսաների սահմանափակ սպառմանը, վորոնք ստանալով չնչին աշխատավարձ, չեյին կարողանում սպառել վողջ արտադրված արտադրանքը։ Այստեղից էլ բխում եյին կապիտալիստական հասարակակարգում անխուսափելի գերարտադրության պարբերական ճգնաժամեր, վորոնց անմիջական հետևանքն է բանվոր դասակարգի մասսայական գործազրկությունը։ Կապիտալիստական խոշոր արտադրության տնտեսական և տեխնիկական առավելությունները, հանդեպ մանր արտադրության, անխուսափելիորեն առաջացնում եր մի կողմից՝ կապիտալիստների կողմից նախակապիտալիստական ձևի տնտեսությունների վատարում, մյուս կողմից՝ կապիտալի համախմբումն ու կենտրոնացումը, վորն ավելի ցայտուն կերպով յերևան եր գալիս կապիտալիստական ճգնաժամերի ընթացքում, յերբ անհավասար մրցության պայքարում խորտակվում եյին սակավուժ կապիտալիստական ձեռնարկությունները, իրենց տեղը զիջելով ավելի ուժեղներին։ Այդ բոլորն ստեղծում եր անհրաժեշտ նախապայմաններ՝ կապիտալիզմի ավելի բարձր աստիճանին անցնելու համար։

«Արդյունաբերական կապիտալիզմի շրջանը հիմնականում յեղել է ազատ մրցության շրջան, համեմատա-



1-292/գր

կան սահուն զարգացման և ամբողջ յերկրագնդում կապիտալիզմի զարգացման շրջան։ Զարգացումը տեղի յեր ունենում տակավին ազատ գաղութների բաժանման ու նրանց զինված հափշտակման պայմաններում։ Միևնույն ժամանակ անընդհատ աճում եյին կապիտալիզմի ներքին հակասությունները, վորոնց ծանրությունն ընկնում եր գլխավորապես սիստեմատիկորեն հափըշտակվող, հետամնաց ու կեղեքված գաղութային շրջանների վրա»։ (Կոմինտերնի ծրագրից)։

20-րդ դարի սկիզբը բնորոշվում է կապիտալիզմի շրջանն իմպերիալիզմի շրջանի փոխվելով։ Հենց այդ շրջանումն է, վոր հսկայական ծավալ է ստանում տրեստների և կարտելների զարգացումը, վորոնք դառնում են «ամբողջ տնտեսական կյանքի հիմքերից մեկը» և վորին զգալի չափով ոժանդակեց արդյունաբերության վերելքը և 90-ական թվակ. և 1900–1903 թվերի տնտեսական ճգնաժամը։

Կապիտալի համախմբումը հանդիսանում է իմպերիալիզմի վճռական նախապայմաններից և նրա եյական հատկանիշներից մեկը, վորովհետև «կոնցենտրացիան (համախմբումը) իր զարգացման վորոշ աստիճանում ինքն իրեն, կարելի յե ասել, ընդհուպ մոտեցնում է մոնոպոլիային–մենաշնորհին., վորովհետև մի քանի տասնյակ ձեռնարկություններ ավելի հեշտությամբ կարող են միմյանց հետ համաձայնության գալ, և մյուս կողմից էլ մրցությունը դժվարացվում է։ Մենաշնորհի ստեղծելու տենդենցն առաջանում է հատկապես ձեռնարկությունների խոշոր չափերով։ Մրցումները մոնոպոլիայի այդ վերածումն իրենից ներկայացնում է ամենակարևոր յերևույթներից մեկը, յեթե վոչ ամենակարևորը նորագույն կապիտալիզմի եկոնոմիկայում», (Լենին, հատ. 13—եջ՝ 247)։

Սակայն սխալ կլիներ կարծել, թե կապիտալի կենտրոնացումից առաջացած մենաշնորհն ինքն իրենով վերացնում է մրցումները և հարթում է կապիտալի հակասությունները։ Մրցումների ազատությունը, կապիտալիզմի այդ բնորոշ գիծն, իր զարգացմամբ ստեղծելով խոշոր արտադրություն և դուրս վանելով մանրե-

յին, գլխավոր լծակներ են դառնում կապիտալի համախմբման և կենտրոնացման համար և այդպիսով ճանապարհ բացում խոշորագույն կապիտալիստական միությունների համար, միություններ, որոնք կարող են իրենց կամքը թելադրել մի շարք մանր կապիտալիստական ձեռնարկություններին: «Յեվ միևնույն ժամանակ մոնոպոլիան, բխելով ազատ մրցությունից, ոչ միայն չի վերացնում մրցությունը, այլ գոյություն ունի նրա վրա ու նրա հետ միասին, առաջացնելով մի շարք առանձնապես սուր և խոշոր հակասություններ, ընդհարումներ, կոնֆլիկտներ», (ԼԵՆԻՆ, հատ. 13-եջ 305):

Կապիտալիզմի իմպերիալիստական շրջանի յերկրորդ եյական հատկանիշը հանդիսանում է. ֆինանսական, բանկային կապիտալի միաձուլման պրոցեսն արդյունաբերական կապիտալիզմի հետ:

Բանկերի և բանկային կապիտալի դերի փոփոխումը հանդիսանում է այդ միաձուլման պրոցեսի բնորոշ գիծը: Յեթե առաջ արդյունաբերական կապիտալիզմի շրջանում բանկերի դերը հանգում եր կապիտալիստների ձեռնարկություններին վարկավորելուն, ապա հետզհետե յերբ համախմբվում են հսկայական կապիտալներ խոշորագույն բանկերի ձեռքում, վերջիններս վերածվում են խոշորագույն կոլեկտիվ կապիտալիստների: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս խոշորագույն բանկերին արտադրության միջոցները բաշխել, մենաշնորհի յենթարկված կապիտալիստների փոքր խմբակի շահերին համապատասխան ձևով:

Ֆինանսական կապիտալի գերիշխումը նշանակում է ֆինանսական կապիտալիստների չնչին փերնաչերտի կարգության չտեսնված ուժեղացում. այսպես կոչված ֆինանսական օլիգարխիական տիրապետություն:

Իմպերիալիզմի շրջանում լայն կերպով տարածված արտադրության ձեռնարկների փայատիրական ընկերությունների ձևը հանդիսանում է մանր փայատերերի խնայողությունների մոբիլիզացիայի ամենահարմար միջոցը, յերբ լիովին իշխում է ֆինանսական օլիգարխիան: Փայատիրական ընկերությունների ղեկավարման ձևը հնարավորություն է տալիս արտադրության և նրա միջոցների ղեկավարման տեր ու տնօրենը դառնալ, այն ժամանակ, յերբ թեկուզ և այս կամ այն բանկի ձեռքում գտնվում է փայերի կեսից պակաս:
տակ, որի կարևոր հատկանիշն ապրանքների արտահանումն եր, իմպերիալիզմի շրջանի կարևոր հատկանիշը է, այլ ֆինանսական կապիտալի, ֆինանսական արժեքների ուժեղացման ձևերից մեկն է:

Արդյունաբերական կապիտալիզմի շրջանին հատուկ, որի կարևոր հատկանիշն ապրանքների արտահանումն եր, իմպերիալիզմի շրջանի կարոր հատկանիշը հանդիսանում է «գերարտադրած», ավելորդ կուտակված, կապիտալի արտահանումը, և այդ կազմում է իմպերիալիզմի յերրորդ բնորոշ հատկանիշը: Կապիտալի այդ ավելորդ կուտակումը առաջանում է իմպերիալիստական յերկրներում, նախ այն պատճառով, որ կապիտալիզմի գերիշխանության ժամանակ հողագործությունը հետամնացության և մասնված արդյունաբերության զարգացման հետ համեմատած, և յերկրորդն էլ, որ կապիտալիզմի հարաբերությունների տիրապետության ուրոք բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիական մասսաները մատնված են կիսաքաղց գոյության: Հենց այդ պատճառով է, որ իմպերիալիստաարդեն բաժանված են ներքին շուկաները, այդ ավելորդ կուտակում, որը յերկրի ներսում գործադրություն չի գտնում, ի վիճակի չլինելով ապահովելու բարձր շահեր: Իմպերիալիստական յերկրների ներսում կուտակված ավելորդ կապիտալները ստիպում են կապիտալիստների մոնոպոլիստական միություններին, որոնց մեջ արդեն բաժանված են ներքին շուկաները, այդ ավելորդ կուտակված կապիտալի գործադրման համար տեղ փնտրել արտաքին շուկաներում: Այստեղից էլ ձգտում է առաջանում դեպի յերկրագնդի բաժանումը՝ զանազան տեսակի համաձայնությունների միջոցով ըստ ազդեցության շրջանների, միջազգային խոշոր կապիտալիստական միությունների— կարտելների, կոնցերների միջև:

Այդ կազմում է իմպերիալիզմի չորրորդ հատկանիշը:

Բայց աշխարհի «արդարացի» բաժանման համար չկա մի այլ հիմք, քան ուժը: Իսկ իմպերիալիստական միավորությունների ուժերն էլ միշտ փոփոխվում են, վորովհետեվ կապիտալիզմի զարգացման պայմաններում, այս կամ այն յերկրի զարգացումը՝ ընթանում է վոչ հավասարաչափ:

«Առանձին ձեռնարկությունների, արդյունաբերական առանձին ճյուղերի, առանձին յերկրների զարգացման ընթացքում անհամաչափությունը, ցատկումների ձեվը կապիտալիզմի որոք անխուսափելի յեն», (ԼԵՆԻՆ, հատ. 13-եջ 284):

Իմպերիալիզմի շրջանում այդ անհամաչափությունները և ցատկումներն ե՛լ ավելի ցայտուն են դառնում:

Արագորեն զարգացող կապիտալիստական յերկրները չեն բավարարվում գոյություն ունեցող դրությամբ և պահանջում են յերկրագնդի նոր բաժանում, վորի բաժանումը 19-րդ դարի վերջում հիմնականում արդեն ավարտված եր և չկար ազատ վոչ մի յերկրամաս, վորին տիրապետած չլիներ իմպերիալիզմը:

Այդպիսի անհամաչափ զարգացման ցայտուն օրինակ է հանդիսանում Գերմանիան նախքան իմպերիալիստական պատերազմը, վորի իմպերիալիստական զարգացման շահերը սուր հակասության հանդիպեցին իմպերիալիստական Անգլիայի շահերի հետ, և այդ պատճառ դարձավ 1914—1918 թ.թ. պատերազմի:

Այս բոլորն ընկ. ԼԵՆԻՆԻՆ հնարավորություն եր տալիս իմպերիալիզմի հասկացողությունը հետեվյալ կերպ բնորոշել:

«Իմպերիալիզմը, դա կապիտալիզմ է զարգացման այն աստիճանում, յերբ կազմվել է մենաշնորհների և ֆինանսական կապիտալի տիրապետությունը, զգալի նշանակություն է ստացել կապիտալի արտահանումը, սկսվել է աշխարհի բաժանումը միջազգային տրեստների կողմից և ավարտվել է ամբողջ աշխարհի հողի բաժանումը խոշորագույն կապիտալիստական յերկրների կողմից»:



## 2. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՎԵՐՋԻՆ ԵՏԱՊՆ Է

Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի զարգացման բարձրագույն շրջան, խիստ սրեց կապիտալիզմին հատուկ հակասությունները: Հենց իմպերիալիզմի տնտեսական սիստեմը, վորի հիմնական բովանդակությունը հանդիսանում է կապիտալիստական մենաշնորհների տիրապետությունը, բռնությունների և շահագործման ուժեղ ձգտումը, սրում է իմպերիալիստական առանձին յերկրների զարգացման անհամաչափությունը և անհնար է դարձնում իմպերիալիստական պետությունների միջազգային փոքր ի շատե կայուն միավորությունները: Իմպերիալիզմի շրջանում անխուսափելի իմպերիալիստական կռիվները (վորովհետև դա յե միակ պայքարի ճանապարհն աշխարհի վերաբաժանման համար) իրենց հետ բերում են պատմության մեջ չտեսնված արտադրական ուժերի քայքայում և աննկարագրելի դժվարություններ են բարդում բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիական մասսաների վրա:

Իմպերիալիզմի շրջանում ծայրաստիճան սրվում է կապիտալիզմի հիմնական հակասությունը, այն է՝ հակասությունը կապիտալի և աշխատանքի միջեվ, սրվում է դասակարգային պայքարն իմպերիալիստական յերկրների ներսում, վորն անխուսափելի յե դարձնում իմպերիալիզմի խորտակումը՝ պրոլետարական հեղափոխության հարվածներով:

Խոշորագույն կապիտալիստական մենաշնորհային միավորությունների իշխող դրությունը շուկայում և մենաշնորհային գների սահմանումը հանգում է նրան, վոր վերանում են տեխնիկական առաջադիմության դրդիչ պատճառները, ստեղծվում է «տնտեսական հնարավորություն արհեստականորեն կանգնեցնելու տեխնիկական առաջադիմությունը» (ԼԵՆԻՆ):

Հատկապես այդ դրության փայլուն ապացույցը մենք նկատում ենք այժմ, համաշխարհային տնտեսական ճգնաժամի օրեցօր սրվող ու խորացող պայման-

ներում: Այժմ ձգնաժամի պայմաններում հիմնական կապիտալիստական յերկրներում արտադրության այնպիսի կրճատում է կատարվում, վոր արտադրության ապարատի ունակության մոտավորապես 1/3 մասը հազիվ է օգտագործվում: Սուր կերպով կրճատվում է ցանքատարածությունը, գյուղատնտեսական արտադրանքն զգալի չափերով վոչնչացվում է և այլն: Յեվ այդ բոլորը հանուն բարձր մոնոպոլիստական գների պաշտպանության: Վերջապես՝ ուղղակի միջոցներ են ձեռք առնվում տեխնիկական առաջադիմության դեմ ուղղված, յերբ արհեստականորեն արգելքներ են ստեղծվում կոնվեյերների գործադրման դեմ, նոր գյուտերի և պատենտների պլանաչափ գնումներ են կատարվում մոնոպոլիստական միությունների կողմից, վորպեսզի մահուցի տակ դրվեն և մոռացվեն դրանք և այլն:

Վերջերս գոյություն ունեցող բոլոր այս փաստերը լրիվին և ամբողջովին հաստատում են Լենինի այն թեզը, թե կապիտալիստական մոնոպոլիան «Ստեղծում է անխուսափելի ձգտում դեպի կանգառումն ու նեխվածությունը»: Իմպերիալիզմի դարաշրջանում կապիտալի կենտրոնացումը, ընդհանրապես և դրամական կապիտալի կենտրոնացումը մասնավորապես՝ հասնում է չտեսնված չափերի:

Դրա հետեվանքով աճում է հատուկ անձանց այն շերտը, վորը բոլորովին հեռու յե կանգնած և վոչ մի կապ չունի արդյունաբերության վորևէ ձեռնարկության հետ: «Ռանտյեների» այդ շերտն ապրում է բացառապես «կուպոններ խուզելով» (տոկոսներով). նրանք միանգամայն պարապ-սարապ մարդիկ են: Հանդես են գալիս ամբողջ պետություններ — ռանտյեներ, վորոնք ապրում են կուպոններ խուզելով և կապիտալ արտահանելով, վորտեղ կուտակված են դրամական կապիտալիզմի ահռելի գումարներ: Սա նույնպես հանդիսանում է վառ նմուշն այն բանի, վոր կապիտալիզմն իմպերիալիզմի շրջանում հանդիսանում է արյունախում տզրուկ և նեխված և հիմնովին:



Իմպերիալիզմի դարաշրջանը խոշորագույն փոփոխություններ է մտցնում հասարակության հարաբերությունների մեջ:

Մի շարք յերկրների բուրժուազիան դաժան կերպով շահագործելով հսկայական գաղութները, հնարավորություն ունի կաշառելու բանվոր դասակարգի վերնախավը (այսպես կոչված բանվորական արիստոկրատիային) և դրանց իր ազդեցությանը յենթարկելու, վորով և նպաստում է բանվորական շարժման մեջ օպորտունիզմի դիրքերի ամրացմանը: Բանվորության վերնախավի այդ բարձր վարձատրվող շերտը մինչեվ այժմ էլ նկատելի քանակությամբ ղեկավար կադրեր է տալիս պրոֆմիություններին, կոոպերատիվներին և այլ հիմնարկներին: Մյուս կողմից էլ աննկարագրելիորեն վատթարանում է հիմնական բանվորական մասսաների տնտեսական և քաղաքական դրությունը, վորի արմատական շահերը բանվորական վերնաշերտը կազմող արիստոկրատիայի շահերի հետ գտնվում է անընդհատ հակասությունների մեջ, ինչպիսի հանգամանքը նպաստում է բանվոր դասակարգի հիմնական մասսաներին օպորտունիզմի ազդեցությունից արագորեն ազատագրվելու պրոցեսին և նրանց կոմունիզմի կողմն անցնելուն: Պրոլետարիատի դասակարգային պայքարը ներկա մոմենտում, կոմկուսակցությունների հարաճուն ազդեցությունը, հանդիսանում է փայլուն ապացույց այն բանի, վոր «օպորտունիզմն այժմ վորևէ յերկրում յերկար տասնյակ տարիներ լրիվ հաղթանակող չի կարող լինել, ինչպես նա հաղթեց Անգլիայում 19-րդ դարի յերկրորդ կեսերին, բայց օպորտունիզմը վերջնականապես հասունացել է, կծվել է և փտում է մի շարք յերկրներում, լրիվին ձուլվելով բուրժուազիայի քաղաքականության հետ...» (ԼԵՆԻՆ, հատ. 13-եջ 321):

Այս բոլորը բերում են այն յեզրակացության, վոր իմպերիալիզմը, դա փտող ու մեռնող կապիտալիզմն է, վոր դա կապիտալիզմի վերջին շրջանն է և համաշխարհային պրոլետարական հեղափոխության նախօրեն է: Վերջապես՝ արտադրության պրոցեսների ընդ-

հանրացման հսկայական ուժեղացումով, կապիտալի կենտրոնացման հիման վրա ստեղծելով գեր-ուժեղ ձեռնարկություններ կապիտալիզմի դարաշրջանն ավարտում է սոցիալիզմի համար անհրաժեշտ նյութական նախադրյալներ ստեղծելը:

«Այդպիսով, միջազգային պրոլետարական հեղափոխությունը բխում է կապիտալիզմի զարգացման պայմաններից ընդհանրապես, և նրա իմպերիալիստական փուլից՝ մասնավորապես: Կապիտալիստական վողջ սիստեմը հասնում է իր վերջնական սնանկացմանը: Ֆինանսական կապիտալի դիկտատուրան խորտակվում է, իր տեղը զիջելով պրոլետարական դիկտատուրային»: (Կոմինտերնի ծրագիր):

## 3. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆԸ, ՎՈՐՊԵՍ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԻ ՇՐՋԱՆ

1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմը պայքար էր խոշորագույն իմպերիալիստական պետությունների և առաջին հերթին գերմանական և անգլիական իմպերիալիզմի միջև՝ հանուն աշխարհի վերաբաժանման:

Այդ կռիվը ցնցեց համաշխարհային կապիտալիզմի վողջ սիստեմը, ծայրատիճան մերկացրեց և սրեց իմպերիալիզմի բոլոր հակասությունները և առաջին հերթին սրեց դասակարգային հակասությունները և սկիզբ դրեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի շրջանին: Այդ պատերազմի անմիջական հետևանքը յեղավ այն, վոր վոչնչացրին հսկայական քանակությամբ արտադրության միջոցներ և բանվորական ուժ, չտեսնված չափով քայքայվեցին հսկայական պրոլետարական մասսաներ, սոսկալի բեռ դրվեց բանվոր դասակարգի, կապիտալիստական յերկրների բազմամիլիոն աշխատավոր գյուղացիության և գաղութային ժողովուրդների վրա:

Այս բոլորը սրեց բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դասակարգային պայքարը և մի շարք յերկրներում առաջ բերեց բացարձակ հեղա-



փոխական ելույթներ, զինված ապստամբություններ և քաղաքացիական կռիվներ: Այդ շրջանի ամենանշանակալից յերևույթը պետք է համարել 1917 թ. Հոկտեմբերի պրոլետարական հաղթական հեղափոխությունը Ռուսաստանում, վորը ճեղքելով իմպերիալիզմի ընդհանուր ճակատը, նրա ամենաթույլ օղակում հաստատապես նվաճեց իմպերիալիզմից աշխարհի մի վեցերորդ մասը և այդպիսով իսկ բաժանեց ամբողջ աշխարհը, յերկու հակառակ բանակի՝ սոցիալիզմի բանակի— ՍՍՀՄ և իմպերիալիզմի բանակի: Ռուսաստանի պրոլետարական հաղթական հեղափոխության անմիջական ազդեցության տակ 18–19 թ. ծայր առան մի շարք հեղափոխություններ կապիտալիստական յերկրներում և գաղութներում. Ֆինլանդիայի բանվորական հեղափոխությունը, Բավարիայի Խորհրդային իշխանությունը, պրոլետարական հեղափոխությունը Հունգարիայում, Գերմանիայի և Ավստրիայի հեղափոխությունները, վոր վերջացան միապետության տապալումով, նույնը և մյուս յերկրներում: Այդ ժամանակվանից բանվոր դասակարգի բացարձակ դասակարգային պայքարը ցնցում է մի շարք կապիտալիստական յերկրներ և գաղութներ հետպատերազմյան ամբողջ շրջանում:

Այդ պայքարն իր ամենասուր արտահայտությունը գտավ 1920 թվին Իտալիայում բանվորների կողմից գործարանների գրավումով, Բուլղարիայի զինված ապստամբությամբ, 1923 թ. Գերմանիայում հեղափոխական ճգնաժամով, 1927 թվին Վիեննայի բանվորության ապստամբությամբ, 1926 թ. Անգլիայում տեղի ունեցած ընդհանուր գործադուլով, Մարոկկոյի, Սիրիայի ապստամբություններով և այլն:

Վերջապես՝ բանվոր դասակարգի և գաղութային աշխատավորության կողմից իմպերիալիզմի դեմ տարվող սուր պայքարի ցայտուն արտահայտությունը պետք է համարել Չինական մեծ հեղափոխությունը, վորը միջազգային հսկայական նշանակություն ունի. ինչպես նաև որ ավուր աճող հեղափոխական շարժումը Հնդկաստանում և մյուս գաղութային և կախյալ յերկրներում:

Ճիշտ է, կապիտալիզմը գրոհելու հեղափոխական առաջին փորձերը, որ տեղի ունեցան նրա սուր ճգնաժամի շրջանում, յերբ կապիտալիզմը նոր էր դուրս յեկել պատերազմից, մի շարք յերկրներում յետ մղվեցին, վերջանալով միայն Ռուսաստանում լրիվ հաղթությամբ:

Կապիտալիստներին հաջողվեց այդ հեղափոխական գրոհի առաջին փորձերը յետ մղել գլխավորապես այն պատճառով, որ նրանք հեղափոխական պրոլետարիատի դեմ իրենց մղած պայքարում մենակ չէյին, այլ յեռանդուն աջակցություն էյին ստանում սոցիալ-դեմոկրատներից, ռեֆորմիստական պրոֆմիությունների վարձու ու բյուրոկրատիկ վերնաշերտից ու գաղութային և կախյալ յերկրների հակահեղափոխական բուրժուազիայի կողմից: Հատկապես հարկավոր է խիստ ընդգծել միջազգային սոցիալ-դեմոկրատիայի դավաճան դերը, որը հրաժարվեց Մարքսի և Ենգելսի ուսմունքից իմպերիալիստական պատերազմի հենց սկզբից, քվեարկելով հօգուտ ռազմական վարկերի, կոչ անելով բանվոր դասակարգին պաշտպանել իմպերիալիստական պետություններին և այլն, իսկ պատերազմից հետո, ստանձնեց բանվորական հեղափոխությունների խեղդման դահճի դերը մի շարք յերկրներում:

Մյուս կողմից՝ կոմունիստական կուսակցությունների թուլությունը, մանավանդ հետպատերազմյան առաջին շրջանում, նրանց ոչ բավականաչափ ազդեցությունը բանվորական լայն խավերի վրա, ստեղծում էր այնպիսի պարագա, որով սոցիալ-ֆաշիստները կարող էյին հաջողությամբ խեղդել բանվորական հեղափոխական շարժումը:

Այդ բոլորը միասին վերցրած, կապիտալիզմին հնարավորություն տվեցին կապիտալիստական հարաբերությունների ժամանակավոր կայունություն ստեղծելու, այսպես կոչված կապիտալիզմի ժամանակավոր կայունացում ստեղծելու որոշ ժամանակաշրջանում: Բայց կապիտալիզմի կայունացման այդ շրջանը, ինչպես և



ցույց է տալիս Կոմինտերնի ծրագիրը, ամուր չէր, կարճատև յեղավ:

Կապիտալիզմի կայունացման անկայունությունը, նրա խախուտ լինելը և կարճատև բնույթը նախատեսելով դեռ կուսակցության 15-րդ համագումարում ընկ. Ստալինն ասել է՝ «Հենց ստաբիլիզացիայից, հենց նրանից, որ արտադրությունն աճում է, նրանից, որ տեխնիկական առաջադիմություն կա և արտադրական հնարավորություններն աճում են, այն ժամանակ, յերբ համաշխարհային շուկան, այդ շուկայի սահմանները և իմպերիալիստական առանձին խմբակների ազդեցության շրջանները մնում են փոքր ի շատե կայուն, հենց դրանից աճում է համաշխարհային կապիտալիզմի ամենասուր և ամենախոր ճգնաժամը, որը հղի յե նոր պատերազմներով և որն սպառնում է ամեն տեսակ կայունացման»:

Ներկա համաշխարհային տնտեսական ճգնաժամը հանդիսանում է փայլուն ապացույցն ընկ. Ստալինի և Կոմինտերնի այդ նախատեսության, կապիտալիզմի կայունացման բնույթի մասին:

## 4. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՅԵՎ ՆԵՐԿԱ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԲՈԼՈՐ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ.

1930 թվի սկզբներին, յերբ արդեն բավական սուր կերպով յերևան յեկան համաշխարհային տնտեսական ճգնաժամի հիմնական բնութագծերը, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ինչպես Միացյալ Նահանգների վարչապետ Հուվերը, նույնպես և բուրժուական աշխարհի քաղաքական գործիչներն ու բուրժուական մամուլն առատ խոստումներ էյին անում աղքատության, գործազրկության և այլ թշվառությունների վերացման մասին: Յե՛վ Յեվրոպայում, և՛ Ամերիկայում չէյին ուզում հավատալ, որ «ծաղկման» շրջանն անվերադարձ անցավ գնաց, նույնիսկ այնպիսի հուժկու կապիտալիստական յերկրի համար, ինչպիսին է՝ Ամերիկան:

Այն ժամանակվանից անցել է մեկ տարի, համաշ-

խարհային կապիտալիստական սիստեմի մեծագույն ցնցումների տարի: 1930 թիվը գլխավոր կապիտալիստական յերկրների բուրժուազիայի համար իր հետ բերեց արտադրության հրեշավոր կրճատում և մասսայական սնանկացումներ: Այդ ժամանակաշրջանում գործազրկությունը հասել ե չտեսնված չափերի. և 1931 թ. նախօրեին բուրժուական աշխարհի բոլոր հեռատես տնտեսագետները և քաղաքական գործիչներն ըսկսում են այլ կերպ գնահատել ստեղծված դրությունը: Բուրժուական տնտեսագետներից ավելի խոշոր դեմքերը, ինչպես որինակ՝ Քեյնսը 1930 թ. վերջին ստիպված եր խոստովանել, վոր կապիտալիստական աշխարհն այժմ ապրում ե «նորագույն պատմության տնտեսական միթխարի աղետի նշանաբանի տակ»:

**Այդ բուրժուական տնտեսագետը միանգամայն արդարացի յե:**

Համաշխարհային կապիտալիզմի ներկա դրությունն իրոք վոր աղետաբեր ե (կատաստրոֆիկ ե), վորն ամբողջովին ապացուցվում ե հետեվյալ տվյալներով:

Ճգնաժամի սկզբից մինչեվ այս վերջին տարին Ամերիկայի արտահանումը կրճատվել ե 38 տոկոսով, ներմուծումը՝ 36 տոկոսով: Չուգունի արտադրությունն այդ նույն շրջանում կրճատվել ե 39 տոկոսով, պողպատինը՝ 40 տոկոսով, նոր շինարարությանը՝ 40 տոկոսով, բամբակի սպառումը՝ 30 տոկոսով: Ամերիկայի ավտոմոբիլային հսկա արդյունաբերությունն այնպիսի անկում ե ապրում, վոր այդ արդյունաբերության արքա Հենրի–Ֆորդն ստիպված ե նույնիսկ վորոշ ժամանակով բոլորովին դադարեցնել այդ արտադրությունը: 1930 թվի 11 ամսվա ընթացքում Ամերիկայի 800 բանկ դադարել են վճարումներ կատարել: Սնանկացումների թիվն աճել ու հասնում ե 146 տոկոսի, այդ նույն ժամանակամիջոցում: Հյուսիսային Ամերիկայի կապիտալիզմը վերապրում ե այնպիսի դաժան ճգնաժամի շրջան, վորի նմանը կապիտալիստական Ամերիկայի պատմությունը չգիտի ու չունի:



Լավ չե նաև մյուս յերկրների դրությունը: Յունգի ծրագրի ճանկերում ճզմվող կապիտալիստական Գերմանիան այդ տեսակետից յետ չի մնում Ամերիկայից:

1930 թվի 10 ամսվա շրջանում արտադրությունը Գերմանիայում կրճատվել ե ավելի, քան 14 տոկոսով, իսկ 1929 թ. հոկտեմբեր ամսվա հետ համեմատած, 1930 թ. հոկտեմբերին արտադրանքն ընկել են 20,7 տոկոսով:

Զգալի չափով կրճատվել ե Գերմանիայի արտաքին առեվտրի չափն, ու ավելի սուր կերպով կրճատվել ե ներքին առեվտրի շրջանառությունը:

Վորոշ ժամանակ անփոփոխ դրության մեջ մնալուց հետո, Անգլիայի արտադրության կորագիծը նույնպես ուժգնորեն ընկավ, տալով այդ նույն տարում կրճատում 8,4 տոկ.: Արդյունաբերական արտադրանքի հսկայական կրճատում ե կատարվում փաշիստական Լեհաստանի արդյունաբերության մեջ, վորը հասնում ե 26,2 տոկոսի: Ֆրանսական արդյունաբերությունն այդ նույն տարում, ճիշտ ե, տալիս ե վորոշ աճ, բայց այդ աճը չնչին ե—2,5 տոկոս: Սակայն այդ դեռ ամենեվին չի ասում, վոր կապիտալիստական Ֆրանսիան դեռ չի մտել ընդհանուր ճգնաժամի ցանցի մեջ: Վերջին ամիսները ցույց են տալիս, վոր Ֆրանսիան նույնպես մտել ե համաշխարհային ճգնաժամի ընդհանուր շրջանի մեջ:

Արդյունաբերության արտադրանքն ամսեամիս ընկնում ե: Ընկնում են մեծածախս առեվտրի գները, շշմեցուցիչ արագությամբ ընկնում ե բորսաների արժեթղթերի գինը և այլն: Այս բոլորը փայլուն կերպով ապացուցում են այն, վոր Ֆրանսիան թեվակոխել ե ճգնաժամի շրջանը և հետագայում արտադրության կորագիծն անխուսափելիորեն գլորվելու յե ցած: Այս ստիպված եր խոստովանել նույնիսկ Ֆրանսիայի նախկին մինիստր–նախագահ Տարդյեն: Տարդյեն նախքան իր կաբինետի անկումը, հայտարարեց հետեվյալը.—

«Փաստորեն 13 ամիս իշխանության գլուխ կանգնած ներկա կառավարության քաղաքականության դե–

կավարող սկզբունքն այն եր, վոր Ֆրանսիային հնարավորություն տրվի հաղթահարելու տնտեսական ճգնաժամը, բայց ավաղ, ճգնաժամը Ֆրանսիայի համար նույնպես անողոք իրականություն դարձավ, ինչպիսին ե նա և մյուս յերկրների համար»:

Այսպես ե տնտեսական դրությունն աշխարհի մի շարք կարևորագույն կապիտալիստական յերկրներում ներկա մոմենտում:

Ներկայումս աշխարհում կա միայն և միմիայն մի յերկիր— ԽՍՀՄ,— վորի սոցիալիստական արդյունաբերությունը 1930 թվին ավելացրեց իր արտադրանքը 25 տոկոսով, վորը հանդիսանում ե սոցիալիստական ձևի տնտեսության առավելության փայլուն ապացույցը կապիտալիստականի նկատմամբ:

Արդյունաբերության անողոք ճգնաժամի հետ զուգընթաց, կապիտալիստական յերկրների գյուղատնտեսությունը նույնպես գտնվում ե սուր ագրարային ճգնաժամի պայմաններում:

Այս բոլորն ապացուցում են, վոր ներկա տնտեսական ճգնաժամը հանդիսանում ե համաշխարհային, վոչ միայն այն տեսակետից, վոր նա «ընդգրկում ե աշխարհի արդյունաբերական բոլոր, կամ համարյա թե բոլոր յերկրները», այլ նաև այն պատճառով, վոր արդյունաբերական ճգնաժամը, ժամանակի տեսակետից զուգադիպելով գյուղատնտեսության ճգնաժամի հետ, վորն ընդգրկում ե արդյունաբերության հում նյութերի և կենսամթերքների բոլոր տեսակները, աշխարհիս հիմնական ագրարային յերկրներում»: (ՍՏԱԼԻՆ):

Իսկ վո՞րոնք են այդ ճգնաժամի պատճառները: Այդ ճգնաժամի պատճառները թաղնված են հենց կապիտալիզմի սեփական սիստեմի մեջ, նրա մեջ, վոր ավելի մեծ շահ ստանալու ջանքից ընկնելով, կապիտալիստները ձգտում են անսահման չափով լայնացնել արդյունաբերությունը, վորն անխուսափելիորեն առաջացնում ե ապրանքների գերարտադրություն, այնքան, վորքան կապիտալիզմի պայմաններում, բանվոր դասակարգի և գյուղացիական մասսաների գնողունա-



կությունը և սպառումը մնում ե ամենացածր մակարդակի վրա: Ներկա ճգնաժամը, վորպես գերարտադրության ճգնաժամ, փայլուն կերպով ապացուցում ե այդ դրությունը, վորովհետև բանը վոչ թե նրա-րը և հսկայական ռազմական ծախքերը և նոր պատե-գրված, այլ նրանումն ե, վոր «արտադրված ե կտորեղեն, վառելիք, գործարանային արտադրանքներ, սննդամթերքներ ավելի շատ, քան թե այդ գնելու կանխիկ դրամ ունեն հիմնական սպառողները, այսինքն՝ ժողովրդական մասսաները, վորոնց յեկամուտը մնում ե ամենացածր մակարդակի վրա» (ՍՏԱԼԻՆ):

Հետպատերազմյան կապիտալիզմի զարգացման այսպես կոչված 3-րդ շրջանի բնորոշ գիծը հանդիսանում ե ներկա կապիտալիզմի հակասությունների հասունացումն ու նրանց սրումը: Բայց այդ հակասությունները հատկապես սուր կերպարանք են ստանում այժմ, տնտեսական սոսկալի ճգնաժամի այս շրջանում:

Խոշոր կապիտալիստական պետությունները ճգնաժամի հարվածների տակ հսկայական չափով ուժեղացնում են պայքարը, հանուն կապիտալի արտահանման, նոր սպառման շուկաների և հում նյութի համար: Ավելի ու ավելի կտրուկ ե դրվում յերկրագնդի նոր բաժանման խնդիրը, վորովհետև նախկին դրա բաժանումը «ըստ ազդեցության շրջանների», այժմ վոչ վոքի չի բավարարում:

Այդ հակասություններից գլխավորը հանդիսանում ե Անգլիայի և Հ. Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև յեղած հակասությունները:

Այնուհետև գալիս են բավական նյական հակասություններ Ֆրանսիայի և Իտալիայի միջև, Գերմանիայի և Ֆրանսիայի միջև և այլն: Այստեղից են բխում են կատաղի տենդագոտության սպառազինումները և հսկայական ռազմական ծախքեր և նոր պատերազմների պատրաստումը, վորոնց տեմպն արագորեն աճում ե: Խաղաղության շուրջն յեղած խորհրդակցությունները, զինաթափման կոնֆերենցիաները, այժմ վոչ վոքի չեն մոլորեցնում: Դրանց չեն հավատում ամենից առաջ հենց իրենք դրանց հեղինակները—կապ-

մակերպիչները, որի մասին և իրենք բացարձակապես հայտարարում են: Իմպերիալիզմի խոշորագույն քաղաքական գործիչ Լլոյդ Ջորջն այդ մասին վերջերս հայտարարեց.— «Զինաթափման մասին յեղած խոսակցությունները—ասում է նա—վոչ այլ ինչ են, յեթե վոչ հմուտ խաբեյություն: Վոչ մի յերկիր լրջորեն մտադիր չե իր սպառազինումները կրճատելու»:

Ճգնաժամը նպաստում է իմպերիալիստական պետությունների և գաղութների միջև յեղած հակասությունների ե՛լ ավելի սրմանը, վորովհետև իմպերիալիստական յերկրների բուրժուազիան ե՛լ ավելի յե սեղմում սպառման հիմնական շուկաներ հանդիսացող գաղութներին իր ճիրաններում:

Տնտեսական ճգնաժամը խիստ սրում է դասակարգային հակասությունները կապիտալիստական յերկրների ներսում: Բանվորների համար ճգնաժամի անմիջական հետեվանքն է գործազրկությունը, վորը ներկայումս հասել է հրեշավոր չափերի, այն է 30 միլիոն հոգու:

Կապիտալիստները վճռական հարձակում են ընկել սկզբներում նվաճած աշխատավարձի մակարդակի և աշխատանքի պայմանների դեմ: Դրա հետեվանքով աճում է բանվորության հեղափոխականությունը, վորոնք արագորեն սթափվում են սոցիալ-դեմոկրատական մշուշից և անցնելով կոմունիզմի կողմը, բռնում են դասակարգային պայքարի վճռական ուղին:

Այս բոլորը վկայում են և այն մասին, վոր մի շարք յերկրներում տնտեսական ճգնաժամն անխուսափելիորեն վերաճում է քաղաքական ճգնաժամի:

«Այդ նշանակում նախ և առաջ, վոր բուրժուազիան ստեղծված դրությունից յելք է փնտրելու ներքին քաղաքականության բնագավառի հետագա ֆաշիստացման մեջ, այդ նպատակի համար օգտագործելով բոլոր ռեակցիոն ուժերը, դրանց թվում նաև սոցիալ-դեմոկրատիային:

Յերկրորդը, այդ նշանակում է, վոր արտաքին քաղաքականության բնագավառում բուրժուազիան յելք է փնտրելու նոր իմպերիալիստական պատերազ-



մի և ինտերվենցիայի մեջ: Յեվ վերջապես՝ այդ նշանակում է, վոր պրոլետարիատը կռվելով կապիտալիստական շահագործման և պատերազմի վտանգի դեմ, յելք է փնտրելու հեղափոխության մեջ» (ՍՏԱԼԻՆ):
Վերջապես՝ ճգնաժամի պայմաններում հատուկ սրության է հասել ներկա դարաշրջանի համաշխարհային հիմնական հակասությունը— հակասությունը Խորհրդային Միության և կապիտալիստական աշխարհի միջև, վորպես յերկու հակադիր տնտեսական և քաղաքական սիստեմների:

Բոլոր յերկրների բուրժուազիան ձգտում է լուծել իր հակասությունները ի հաշիվ ԽՍՀՄ-ի, վորը սոցիալիստական շինարարության ճակատում հաղթություն հաղթության յետևից տանելով, որեցոր դառնում է միջազգային պրոլետարական հեղափոխության ե՛լ ավելի հզոր գործոնը—(ֆակտորը):

Այստեղից էլ բխում է ԽՍՀՄ-ի դեմ ավանտյուրիստական հարձակման տենդենցը և ինտերվենցիայի ձգտումը, «մի տենդենց, վորն ավելի ուժեղանում է համաշխարհային տնտեսական ճգնաժամի ծավալման ու խորացման հետ, վորը մի կողմից ցայտուն կերպով յերեվան հանեց այսպես կոչված «արդյունաբերական կուսակցության» նողկոտ ավարտված դավադրության ընթացքը և մյուս կողմից էլ այսպես կոչված Խորհրդային «դեմպինգի» դեմ տարվող կատաղի կամպանիան, Խորհրդային Միությունում «հարկադրական աշխատանքի» մասին յեղած բարբաջանքները և այլն: Խորհրդային Միության դեմ ինտերվենցիա կազմակերպելու գործին ակտիվ կերպով մասնակցում են սոցիալ-ֆաշիստները: Ահա թե ինչու հատուկ նշանակություն է ստանում 16-րդ կուսհամագումարի Կենտկոմի դեկտեմբերյան (1930 թ.) պլենումի ցուցումը մեր յերկրի պաշտպանունակության ուժեղացման և Կարմիր բանակի մարտունակության ամրացման մասին:

## 5. ՍՈՑԻԱԼ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ԱՋ–ՕՊՈՐՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՐԳԱՐԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՆԱՆԿԱՑՈՒՄԸ, ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ «ԾԱՂԿՄԱՆ» ՅԵՎ «ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ.

Միջազգային սոցիալ–դեմոկրատիան և նրա կողմից ղեկավարվող պրոֆմիությունների բյուրոկրատական ղեկավար վերնաշերտն ստեղծել են մի ամբողջ թեորիա—(տեսություն), այն մասին, վոր կապիտալիզմի ապրած ներկա շրջանի վոչ թե նրա նեխվածության, քայքայման և անկման շրջանն է, այլ կապիտալիզմի ծաղկման շրջանն է, վոր իբր թե կապիտալիզմը հիմա ավելի կայուն է և «կազմակերպված», քան եր իմպերիալիստական պատերազմից առաջ: Նրանք բանվորներին կոչ են անում կապիտալիզմին պաշտպանել, հենվելով այսպես կոչված «տնտեսական դեմոկրատիայի» վրա, վորի համաձայն, կապիտալիստական տնտեսության սիստեմն արդեն դադարել է բանվոր դասակարգին շահագործող սիստեմ լինելուց, վոր այդ սիստեմը հանդիսանում է «համաժողովրդական», վոր կապիտալիզմի տնտեսության ծաղկման մեջ շահագրգռված են և՛ բանվոր դասակարգը և՛ կապիտալիստները: Կարիք չկա խոսելու այն մասին, վոր նման տեսություններն ամբողջովին ձեռնտու յեն բուրժուազիային և նրա կողմից սիրալիր ընդունելության են գտնում, վորովհետև նման «թեորիաները» օգնում են բուրժուազիային ե՛լ ավելի ուժեղացնելու բանվոր դասակարգի շահագործումը:

Բայց մենակ սոցիալ–ֆաշիստները չեն այդպես գնահատել այժմի կապիտալիզմը: Ընկ. Բուխարինի գլխավորությամբ աջ օպորտունիստներն ըստ եյության այդ նույն գաղափարն եյին քարոզում «կազմակերպված» կապիտալիզմի մասին:

Յերբ ընկ. Բուխարինը 1929 թ. այսինքն՝ համաշխարհային ճգնաժամի նախօրյակին գրում եր այն մասին, վոր այժմ «շուկաների, գների, մրցությունների, ճգնաժամերի պրոբլեմները քանի գնում այնքան ավելի յեն համաշխարհային տնտեսության պրոբլեմներ



դառնում, փոխարինելով յերկրի ներսում «կազմակերպվածության» պրոբլեմով, այդպիսով նա արդեն կապիտալիզմի դրությանը տալիս եր մի գնահատական, վորը միանգամայն հակառակ եր Կոմինտերնի ծրագրում տված գնահատականին: Ընկ. Բուխարինի յետևից գնացող յերկրների կոմունիզմի աջ դավաճանները նույնն եյին կրկնում, նրանք չեյին տեսնում, կամ չեյին ուզում տեսնել այն հակասությունները, վորոնք թաղնված են կապիտալիզմի կայունացման մեջ:

Այսպես օրինակ՝ սեննետոր Լովատոնը Միացյալ Նահանգների ճգնաժամի սկզբում գրում եր—«Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգների ածխային, նավթային, մանածագործության շրջանում սկսած ճգնաժամը չի նշանակում, թե դրանք ամերիկական իմպերիալիզմի անկման սկսվելու նշաններ են: Դրանք բոլորը ժամանակավոր ճգնաժամեր են և յենթակա յեն վերացման. ռացիոնալացման հետագա ծավալման ընթացքով, և այդպիսով ապացուցում են միայն ամերիկական իմպերիալիզմի ե՛լ ավելի ուժեղացումը ու նրա աճումը»:

1930 թ. համաշխարհային ճգնաժամի ընթացքը գլխովին ջարդ ու փշուր արեց կապիտալիզմի ամրության և «կազմակերպվածության» մասին այն բոլոր դատողությունները, վորը կրկնում եր սոցիալ–ֆաշիզմի հետևից ընկ. Բուխարինը:

Այժմ արդեն բուրժուական տնտեսագետները իրենք են խոստովանում ժամանակակից կապիտալիզմի կատաստրոֆիկ դրությունը: Այդ մինչեվ հիմա միայն աջ օպորտունիստներն են, վոր չեն հասկանում, չնայած այն բանին, վոր ինքը կյանքը հերքում է կապիտալիզմի «կազմակերպվածության» մասին դրանց տեսությունը:

## II. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

1․ Բանվորների տնտեսական և քաղաքական դրությունը կապիտալիզմի որոք:

2․ Բանվոր դասակարգի դրությունը համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում:

3․ Բանվորների հեղափոխական շարժման վերելքը կապիտալիստական յերկրներում, և կոմկուսակցությունների ու կարմիր պրոֆմիությունների ազդեցության ուժեղացումը:

4․ Աջ ոպորտունիզմի և «ձախ» սեկտանտության դեմ պայքարելը, հիմնական նախապայմանն է բանվոր դասակարգի մեծամասնությունը կոմունիզմի կողմը նվաճելու համար:

### 1․ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՐՈՔ

*Արտադրության կապիտալիստական յեղանակի պայմաններում բանվորության հիմնական և միակ յեկամուտի աղբյուրը հանդիսանում է իր աշխատավարձը: Բայց բանվորության աշխատավարձը բոլորովին չի համապատասխանում բանվորի ուժի իսկական արժեքին, նա հավասար է բանվորի արտադրածի մի մասին միայն, իսկ մյուս մասը կապիտալիստների կողմից յուրացվում է, վորպես հավելյալ արժեք: Հետզհետե, յերբ զարգանում է կապիտալիզմի տեխնիկան, ծավալվում ու զարգանում է կապիտալիստական ռացիոնալացումը, վորը հիմնականում կիրառվում է բանվորության ֆիզիկական ուժի ե՛լ ավելի լարման միջոցով, արտադրության պրոցեսում (աշխատանքի ինտենսիֆիկացիա) բանվորի աշխատանքի չվճարվող մասն ան-*



*ընդհատ մեծանում է, ուրեմն և ուժեղանում է բանվորության շահագործումը: Ընդհանրապես կապիտալիզմը որոշ աշխատավարձն իջնելու տենդենց ունի, վորն իր ժամանակ ապացուցեց գիտական կոմունիզմի հիմնադիր Կարլ Մարքսը և վորը գտնում է իր լիակատար հաստատությունը ներկայումս:*

*Դրա հետեվանքով մենք ունենք ամենագլխավոր կապիտալիստական յերկրներում ժողովրդական յեկամուտի բաշխման հետեվյալ պատկերը․*

*Գերմանիայում բանվորության և գյուղի ու քաղաքի այլ աշխատավորության բաժինը ժողովրդական յեկամուտի մեջ կազմում է 55 տոկոսը: Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ 54 տոկոս, Անգլիայում 45 տոկոսը, իսկ կապիտալիստների բաժինը կազմում է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ 46 տոկոս, Գերմանիայում՝ 45 տոկոս, Անգլիայում 55 տոկոս: Իսկ չե՞ վոր կապիտալիստները քանակի տեսակետից ազգաբնակչության չնչին մասն են կազմում:*

*Մյուս կողմից՝ կապիտալիզմի զարգացումն ընթանում է կապիտալի օրգանական կազմի աճման պայմաններում, վորի հետեվանքով համեմատաբար կրճատվում է արտադրության մեջ գրաված բանվորների քանակը:*

*Իմպերիալիզմի դարաշրջանում արտադրության մեջ գրաված բանվորների կրճատման ձգտումն այնքան է ուժեղանում, վոր մի շարք յերկրներում, աշխատանքի մեջ գտնված բանվորության քանակի բացարձակ կրճատում է տեղի ունենում:*

*Այդ բոլորը հանգում են նրան, վոր առաջ է գալիս մշտական արդյունաբերական հսկայական պահեստի բանակ, այսինքն՝ գործազրկության հսկայական աճում: Պահեստի այդ ահռելի բանակն իր ամբողջ ծանրությամբ ճնշում է դեռ արդյունաբերության մեջ աշխատող բանվորության վրա և կապիտալիստների համար բարենպաստ պայմաններ է ստեղծում բանվոր դասակարգի կյանքի մակարդակի, աշխատավարձի ու աշ-*

խատանքի պայմանների դեմ հարձակումն ուժեղացնելու գործում և այլն, վորովհետև կապիտալիզմին ծառայելու համար միշտ պատրաստ կան ավելորդ բանվորական ձեռքեր: Այսպես ուրեմն՝ կապիտալիզմի զարգացումն անխուսափելիորեն «պայմանավորվում է կապիտալիզմի կուտակման համաչափ նաև աղքատության կուտակմամբ: Հետևապես՝ հարստության դիզումը մի բևեռում առաջացնում է միևնույն ժամանակ աղքատություն, աշխատանքի տանջանքներ, ստրկություն, տգիտություն, վայրենացում և բարոյական հետադիմություն հակառակ բևեռում, այսինքն՝ այն ինքն՝ այն դասակարգի կողմում, վորն արտադրում է իր սեփական արտադրանքը, վորպես կապիտալ: (Կ. ՄԱՐՔՍ):

Քաղաքական բնագավառում, իմպերիալիզմի դարաշրջանը հիմնականում բնութագրվում է վորպես մենաշնորհների տիրապետություն, հսկայական չափով ուժեղանում է իշխելու տենդենցը, բռնությունը և չահագործումը: Հսկայական նշանակություն է ստանում «պետական իշխանությունը, վորը դառնում է ֆինանս-կապիտալիստական օլիգարխիայի դիկտատուրան, նրա կենտրոնացած հզորության արտահայտությունը» (ԿՈՄԻՆՏԵՆԻ ԾՐԱԳՐԻՑ):

Սոցիալ-դեմոկրատիայի ղեկավար խավի միաձուլումը պետական ապարատի հետ հեշտացնում է բուրժուազիայի համար այդ ապարատի պայքարը բանվոր դասակարգի դեմ, այնքան, վորքան սոցիալ-դեմոկրատները դեռ ազդեցություն են վայելում բանվոր դասակարգի վորոշ շերտերի մեջ: Իմպերիալիզմի դարաշրջանի համար բնորոշ է պառլամենտարիզմի սնանկացումը և բավական մեծ թվով պետությունների ֆաշիստական դիկտատուրայի ձևերին անցնելը, այսինքն բանվորական հեղափոխական շարժման բացարձակ ճնշման ձևերին անցնելը:

Այս բոլորն առաջանում են ֆաշիստական բուրժուազիայի կողմից քաղաքականության ռեակցիայի



ուժեղացում, և մյուս կողմից՝ իմպերիալիստական երկրների բանվորության կողմից դասակարգային պայքարի ուժեղացում, ու վերջին հաշվով տանում են իմպերիալիզմի ամբողջ սիստեմի հեղափոխական անխուսափելի պայթում:

## 2. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Կապիտալիստական երկրներում բանվորության քաղաքական և տնտեսական ծանր դրությունը խորապես վատթարանում է հատկապես կապիտալիստական ճգնաժամերի շրջանում: Իսկ ճգնաժամերը հանդիսանում են կապիտալիզմի անխուսափելի ուղեկիցները. նրանք կվերանան կապիտալիստական հասարակակարգի վերացման հետ, ինչպես այդ այժմ գործնականապես ապացուցվում է Խորհրդային Միության սոցիալիստական շինարարության փորձով:

Ճգնաժամերի ժամանակ բանվորության հսկայական մասսաներ դուրս են նետվում արտադրությունից և մատնվում են աղքատության, թշվառության և սովամահության: Այդ է ամենից պերճախոս կերպով վկայում է բանվորության ներկա դրությունը, երբ վողջ կապիտալիստական կարգերը ցնցվում են համաշխարհային տնտեսական ճգնաժամից:

1930 թվին, համեմատած 1929 թ. հետ, գործազրկությունը կապիտալիստական երկրներում աճել է հսկայական չափերով և այժմ հասնում է 30 միլիոնի, իսկ 1929 թ. 17 միլիոն էր:

1931 թ. նախօրյակին, գործազրկությունն առանձին երկրներում հետևյալ պատկերն ուներ. Ամերիկայում՝ ավելի քան 10 միլիոն մարդ, Գերմանիայում՝ ավելի քան 4 միլիոն, Անգլիայում՝ մոտավորապես 3 միլիոն, իսկ վորովհետև ճգնաժամը, գնալով, ավելի է ծավալվում և խորանում, հետևապես՝ և ավելի է աճում գործազրկությունը: Օրինակ՝ Անգլիայում մի շաբաթվա ընթացքում (դեկտեմբերի 15-ից

մինչև 22-ը) ցուցակագրված գործազուրկների թիվը ավելացավ 108.779 մարդով, իսկ հետագա շաբաթում (դեկտեմբերի 22–29) գործազուրկների թիվն ավելացավ արդեն 234.757 մարդով: Գործազրկությունը հրակայական չափով աճում է Գերմանիայում:

Դեկտեմբերի սկզբի յերկու շաբաթում գործազրկության թիվը Գերմանիայում ավելացավ 278.006 մարդով, ըստ վորում արդյունաբերությունից դուրս քշնըված բանվորների թիվն որեցոր ավելանում է:

Նույնիսկ Գերմանիայի բուրժուական տնտեսական կյանքը հետազոտող ինստիտուտը գտնում է, վոր գործազրկության աճման տեմպերից դրությունը հետագայում ավելի յե վատանալու: Հիշյալ ինստիտուտի հաշիվներով մինչեվ փետրվար ամիսը Գերմանիայում գործազրկությունը պետք է ավելանա ևս մի միլիոն մարդով և հասնելու յե 5—5 և կես միլիոնի: Ֆրանսիայում, վորը կապիտալիստական մյուս պետություններից ավելի ուշ ընդգրկվեց համաշխարհային ճգնաժամի մեջ, նոյեմբերից սկսած գործազրկությունն սկսեց աճել և ներկայումս հասնում է մոտ 100 հազար մարդու: Սրան հարկավոր է ավելացնել և այն բանվորների թիվը, վորոնք աշխատում են վոչ լրիվ բանվորական շաբաթով:

Միմիայն Խորհրդային Միությունում, հաղթական սոցիալիզմի կառուցման յերկրումն է, վոր 1931 թվի նախօրյակին գործազրկությունը բոլորովին վերացված է, իսկ 1931 թ. բանվորների և ծառայողների թիվը նորից ավելացավ 2 միլիոն մարդով և կազմեց 16 միլ. մարդ՝ 1930 թ. 14 միլ. մարդու դիմաց:

Բուրժուազիան, գտնվելով տնտեսական չտեսնված ճգնաժամի ճիրաններում, ջանում է նրա ամբողջ ծանրությունը գցել բանվոր դասակարգի վրա: Այժմ ամբողջ աշխարհի բուրժուազիան ուժեղացնում է բանվորների ճնշումը:

Օրինակ՝ բանվորության յեկամուտը Գերմանիայում 1930 թ. կրճատվել է ավելի քան 1 յերրորդով:



Մյուս յերկրներում բանվորների դրությունը վոչնչով լավ չէ:

1930 թիվն անցավ՝ ամբողջ աշխարհի կապիտալիստների կողմից բանվոր դասակարգի կյանքի մակարդակի վրա դաժան հարձակման նշանաբանի տակ: Բոլոր գույնի սոցիալ-ֆաշիստների օգնությամբ կիրառվում են բանվորության աշխատավարձի չտեսնված կրճատումներ, ըստ վորում ձեռնարկատերերի ընկերությունն այն սահմանի յե հասնում, վոր նրանք (օրինակ՝ Գերմանիայի ածխահանքերում և կոշիկեղենի արդյունաբերությունում) պահանջում են աշխատավարձի 50 տոկոս կրճատում: Աշխատավարձի վրա կատարած արշավով չի սահմանափակվում կապիտալի հարձակումը: Մի շարք յերկրներում արդյունաբերության մեջ զբաղված բանվորների օրը յերկարացվում է և այդ նույն ժամանակում սուր կերպով աճում է կիսագործազուրկ բանվորների թիվը, այսինքն՝ այն բանվորների, վորոնք զբաղված են շաբաթվա ընթացքում 3–4 օր: Ուժեղանում է կապիտալիստական «ռացիոնալացման» ճնշումը, վորն անց է կացվում բանվոր դասակարգի մկանների և ջղերի հաշվին: Բոլոր այն յերկրներում, վորտեղ բանվորներին տրվում է վորևէ նպաստ, ուժեղ կամպանիա յեն մղում սոցիալական կարիքների կրճատման օգտին: Այդ այն ժամանակ, յերբ այդ յերկրներում բուռն կերպով աճում են ռազմական բյուջեները և սպառազինումները:

Կապիտալիստական յերկրների բանվորության այդ դրության հակառակ պատկերն է ներկայացնում Խորհրդային Միության բանվորների դրությունը, վորը 1930 թվին ուներ 167 տոկոս նախապատերազմյան աշխատավարձի մակարդակ, ամբողջովին վերացված է գործազրկությունը, սոցիալիստական ինդուստրիայի աճման հետ կապված բանվորության կյանքի բարելավումը խոշոր հեռանկարներ ունի: 1931 թիվն իր հետ բերում է Խորհրդային Միությունում սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը և ռեալ աշխատավարձի աճում արդյունաբերական բանվորների

համար 6 տոկոսով, տրանսպորտի բանվորների համար 8 տոկոսով: Սոցապահովության ֆոնդը սահմանված է 2 միլիարդից ավելի, բանվորության կենցաղի բարելավման ֆոնդն հասնում է ավելի քան 2 անգամ, համեմատած 1930 թվի հետ: 1931 թվին յերկաթուղային ամբողջ բանվորությունն անցնում է 7-ժամյա բանվորական որվան, 7 ժամյա բանվորական որվա յե անցնում ԳԺՏ-ի արդյունաբերության մեջ զբաղված բանվորության 92 տոկոսը, նույնպես նախատեսվում է ԳԺՏ-ի կողմից պլանավորվող արդյունաբերության մեջ զբաղված ամբողջ բանվորության (բացառությամբ մանածագործների) և Մատակարարման ժողկոմատի արդյունաբերության բանվորների 98 տոկոսի հնգօրյա շաբաթվա անցնելը: Այս բոլորը կատարվում է աշխատավարձի հետագա աճման հետ զուգընթաց:

Խորհրդային Միության բանվորների դրության այսպիսի տարբերությունը կապիտալիստական յերկրների բանվորների դրությունից բացատրվում է կապիտալիզմի նկատմամբ սոցիալիզմի ունեցած առավելություններով, վորը գործնականորեն ապացուցված է ներկայումս և վորի մեջ գործնականում համոզվում են ամբողջ աշխարհի բանվորները:

Այդ պատճառով «ԽՍՀՄ խորհրդային պրոլետարիատի առաջ բացվում է քաղաքական, տնտեսական և կուլտուրական վերելքի շրջան, նրա բարեկեցության անընդհատ բարելավում, այն կապիտալիստական յերկրների պրոլետարիատի առաջ, սուր կերպով հարց է դրվում կամ կյանքի մակարդակի հետագա անկում, մինչև լրիվ ֆիզիկական վերասերման աստիճանի, կամ խորհրդային պրոլետարիատի ուղին, այսինքն՝ կապիտալի իշխանության տապալում և բանվոր դասակարգի դիկտատուրայի հաստատում» (Պրոֆմիությունների 5-րդ կոնգրես):



## 3. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՃՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԿՈՄԿՈՒՍՆԵՐԻ ՈՒ ԿԱՐՄԻՐ ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ.

Կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգը, դաժան շահագործման յենթարկվելով, վորն ուժեղացել է հատկապես ճգնաժամի ընթացքում, կապիտալի կողմից բանվորության կյանքի մակարդակի վրա կատաղի հարձակման ու մասսայական գործազրկության պայմաններում, ավելի վճռականորեն է բռնում այդ յերկրորդ ուղին, այսինքն՝ կապիտալի դեմ կռվելու հեղափոխական պայքարի ուղին:

Բուրժուազիան, սոցիալ-ֆաշիստները, ռեֆորմիստական արհմիությունների բյուրոկրատները, ոգտագործում են բոլոր միջոցները բանվորական շարժման դեմ կռվելու համար:

Կոմունիստներին և մյուս հեղափոխական բանվորներին մասսայորեն հեռացնելը արդյունաբերություններից, գործադուլների ղեկավարներին աշխատանքից հեռացնելը և բանտարկությունը՝ բուրժուական բանտերին հատուկ բոլոր սարսափներով, վոստիկանության և զորքի միջոցով բանվորական ցույցերի և գործադուլների արյունահեղ ճնշումները, բանվորական հեղափոխական կազմակերպությունների ցրումը, արգելումը, հեղափոխական մամուլի արգելումը, ժողովների արգելումները, բանվորներին կաշառելու և խաբելու կազմակերպումը և այլն,—ահա այն բոլոր միջոցները, վորոնց ոգնությամբ բուրժուազիան կռիվ է մղում բանվորական հեղափոխական շարժման դեմ:

Բայց այս բոլոր միջոցները բուրժուազիային ցանկացած արդյունքները չեն տալիս:

Բանվորները բոլոր յերկրներում հուժկու գործադուլային պայքար են մղում. գործադուլների և քաղաքական ցույցերի ժամանակ, բախվելով վոստիկանության հետ, նրանք պայքարի ուժեղ հաստատակամություն են ցուցաբերում: Մի շարք յերկրներում

(օրինակ՝ Գերմանիայում) բանվորներն իրենց պայքարով տեր են դարձել փողոցին և վորևէ վոստիկանական ուժ այլևս անկարող է խանգարել բանվորների յելույթը պրոլետարական դիկտատուրայի, խորհրդայնացման, Խորհրդային Միության պաշտպանելու և այլ լոզունգների տակ:

Այդ են ապացուցում մայիսմեկյան և օգոստոսյան հակապատերազմական հսկա ցույցերը և մյուս ելույթները ամբողջ աշխարհում:

Հօդս են ցնդում սոցիալ-ֆաշիստների առասպելները գործատերերի և բանվորների միասնական շահ ունենալու և «արդյունաբերության մեջ խաղաղության» մասին:

Հօդս է ցնդում աջ օպորտունիստների պրոլետարիատի մասին ունեցած «թեորիան», այն է՝ «գործադուլային հոգնածության» և պրոլետարիատի ակտիվության նվազելու մասին: Ջարդ ու փշուր յեղավ սոցիալ-ֆաշիստների և աջ օպորտունիստների «թեորիան» ճգնաժամերի ժամանակ, բանվորների կողմից տնտեսական պայքար մղելու անհնարինության մասին:

1930 թիվը Գերմանիայում անցավ պրոլետարիատի նյութական մակարդակի դեմ կապիտալի հարձակումներին հերոսական պայքարով պատասխանելու նշանաբանի տակ:

11.000 կարողների գործադուլը, Մանսֆելդի և Գերմանիայի մյուս շրջանների անհաշտ պայքարը—այս բոլոր փաստերը մեզ ասում են այն մասին, վոր բանվորական լայն մասսաների տրամադրությունն արմատականորեն փոխվում է և նրանք լցված են վճռական հեղափոխական պայքարի պատրաստակամությամբ: Սակայն վերջին ժամանակներս հեղափոխական շարժման ամենանշանակալից դեպքը պետք է համարել Բեռլինի 140 հազար մետաղագործների յերկու շաբաթ տևող գործադուլը: Այդ գործադուլը հանդիսացավ գերմանական պրոլետարիատի պայքարի վճռական շրջադարձը: Այդ գործադուլը բանվորական մասսաների հեղափոխականացման ցնող հսկա գործոն դարձավ: Գործադու-



տերերի կողմից 10 տոկոսով աշխատավարձի իջեցնելու պահանջին Ռուրի 60.000 հանքագործներն այս վերջերս պատասխանեցին գործադուլ հայտարարելով: Այդ գործադուլների արդյունքն ինչպիսին էլ ուզում է լինի, դա միևնույնն է: Այդ բոլոր փաստերը ցույց են տալիս այն, վոր գերմանական պրոլետարիատը մտել է տնտեսական լուրջ պայքարների մեծ շրջանի մեջ:

Անգլիայում անընդհատ կրկնվում են հանքափոր բանվորների գործադուլները, և չնայած պրոֆբյուրոկրատների սաբոտաժին ու շտրեյկբրեխերությանը, կոնֆլիկտներն ընթանում են մեծ վերելքով: Ներկայումս Անգլիայում գործարանատերերի հետ կոնֆլիկտային պայմաններում են գտնվում մեքենայագործ, կաշվե-կոշկագործ, կառուցող և արդյունաբերական մյուս ճյուղերի բանվորները (բացի քաղաքային և մանածագործ բանվորներից), վորոնց ընդհանուր թիվը հասնում է 4 ու կես միլ. մարդու: Բանվորական հեղափոխական պայքարի ձևերը փոխվում են և այդ պայքարի ղեկավարությունն ամրանում է: Աճում է գործադուլների շարժումը, վորոնք ընդգրկվում են գործադուլավոր բանվորների հեղափոխական պայքարի ցանցի մեջ, մասնակցում են բանվորական պահակներում, ինքնապաշտպանության ջոկատներում և այլն:

Այս բոլորը վկայում են այն մասին, վոր անընդհատ աճում է բանվոր դասակարգի պատրաստակամությունը, վճռական հեղափոխական պայքար մղելու համար:

Կապիտալի հարձակման դեմ բանվոր դասակարգի այդ մղած պայքարում սոցիալ-ֆաշիստները և Ամստերդամյան Յերկրորդ Ինտերնացիոնալը, պրոֆբյուրոկրատները ամենագզվելի դավաճանների դերն են կատարում: Նրանք այժմ արդեն գործադուլների ժամանակ շտրեյկբրեխերությամբ և սաբոտաժով չեն բավականանում, նրանք վոստիկանության հետ ուղղակի ֆաշիստական տեռորի մեթոդներով ջլում ու քայքայում են բանվորական կազմակերպությունները ու

ճնշում են հեղափոխական բանվորական շարժումը:

Դրա հետեվանքով բանվորական մասսաներն ավելի արագորեն են ազատվում սոցիալ-դեմոկրատական յերազային մշուշներից և քանի գնում, այնքան ավելի վճռականորեն են անցնում կոմունիզմի դրոշի տակ:

Կոմկուսակցությունների և կարմիր պրոֆմիությունների ազդեցությունն անընդհատ աճում է:

Կոմկուսակցության ազդեցության ուժեղացման փայլուն ապացույց է ծառայում 1930 թվի գերմանական պարլամենտական ընտրությունների ժամանակ գերմանական կոմկուսակցության ստացած հսկայական քվեն (4 ու կես միլիոնից ավելի): Այդ նույն Գերմանիայում մետաղագործների գործադուլի հետեվանքով հսկայական չափով աճեց հեղափոխական արհմիությունների օպոզիցիայի շարքերը, իսկ Ռուրի հանքագործների գործադուլն ընթանում եր կարմիր պրոֆմիությունների անմիջական ղեկավարությամբ:

Մի շարք դեպքերում կապիտալի հարձակումների դեմ բանվոր դասակարգը չի սահմանափակվում պաշտպանությամբ, այլ անցնում է հակագրոհի: Աճում են պրոլետարական համերաշխության գործադուլները: Կապիտալի կատաղի հարձակումը բանվոր դասակարգի վրա, պայքարի յե հանում բանվորական նոր շերտեր, ինչպիսի շերտեր սկզբներում թույլ մասնակցություն են ունենում պրոլետարիատի տնտեսական և քաղաքական պայքարում: Հեղափոխական շարժման մեջ քանի գնում, այնքան շատ են ընդգրկվում գործադուլներն, կանայք և յերիտասարդությունը:

Տնտեսական գործադուլներն օրեցօր եվ ավելի յեն զուգորդվում քաղաքական ցույցերի հետ: Քանի գնում բանվորական լայն մասսաներն սկսում են ավելի պարզ և վորոշ գիտակցել այն, վոր տնտեսական պայքարն ինքնանպատակ չե, վոր տնտեսական պայքարը միայն միջոց է դասակարգային պայքարում վերջնական նպատակի հասնելու համար, իսկ «կապիտալիզմի օրոք գործադուլային պայքարի վերջնական նպատակն է հանդիսանում պետական ապարատի խորտա-



կումը, տվյալ դասակարգային պետական իշխանության տապալումը» (ԼԵՆԻՆ):

Այս բոլորը բանվոր դասակարգի տնտեսական պայքարը վեր է ածում քաղաքական պայքարի. պայքար, վորն ընթանում է գոյություն ունեցող կապիտալիստական կարգերի խորտակման և պրոլետարական դիկտատուրա հաստատելու ուղղությամբ:

## 4. ԱՋ ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ ՅԵՎ «ՁԱԽ» ՍԵԿՏԱՆՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԿՈՂՄԸ ԳՐԱՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ. ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆ Ե ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ.

Պրոլետարիատի պայքարի ներկա վերելքի պայմաններում մի շարք յերկրներում տնտեսական ճգնաժամը քաղաքական ճգնաժամի յե վերածվում. այս պայմաններում բանվոր դասակարգի մեծամասնությունը կոմունիզմի կողմը գրավելը Կոմինտերնի գլխավոր խնդիրն է հանդիսանում:

Բանվոր դասակարգի ահագին մասը կապիտալիստական յերկրներում դեռ ռեֆորմիստական պրոֆմիությունների մեջ է:

Ինչ գնով էլ ուզում է լինի պետք է նրանց ռեֆորմիստական առաջնորդների և սոցիալ-դեմոկրատների ազդեցության տակից հանել: Պետք է կարմիր պրոֆմիությունները և հեղափոխական օպոզիցիաները դարձնել իսկական պրոլետարական մասսայական կազմակերպություններ: Իսկ բանվոր դասակարգի մեծամասնությունը գրավելու լավագույն ճանապարհը՝ պրոլետարիատի առօրյա դասակարգային պայքարը ղեկավարելու մեջ է:

Այս պայմաններում աջ օպորտունիստների «գործադուլային հոգնածության» մասին քարոզած բարբաջանքները, ճգնաժամերի ժամանակ տնտեսական պայքար մղելու անհնարինության մասին նրանց դիրքավորումը, իրականում նշանակում է պրոլետարիատի դասակարգային պայքարին դեմ գնալ, օգնել սոցիալ-

ֆաշիստներին, բանվորական հեղափոխական շարժումը ջախջախելու գործում: Աջ օպորտունիստների դիրքը, բանվոր դասակարգին հեղափոխականացնող ներկա ընթացքը բացասելու, նոր հեղափոխական վերելքը ժխտելու մասին Կոմինտերնի գծին հակառակ է, որի նկատմամբ և անհրաժեշտ է անողոք պայքար մղել:

Բոլոր երկրներում դասակարգային պայքարի ներկա վերելքի պայմաններում սոցիալ-ֆաշիստների և ռեֆորմիստական պրոֆմիությունների բյուրոկրատների ուղղակի ոստիկանական մեթոդներով գործադուլների դեմ պայքարելուն անցնելը, հեղափոխական արհմիությունների թևի նկատմամբ սոցիալ-ֆաշիստների պառակտիչ աշխատանքի ուժեղացումը, դասակարգային մարտերի ինքնուրույն ղեկավարությունից հրաժարվելը, ինչպես այդ մասին քարոզներ են կարդում աջ օպորտունիստները, որոնք ինչ էլ ուզում է լինի պահանջում են միասնականություն պաշտպանել, այս բոլորը բանվոր դասակարգի շահերին ուղղակի և բացարձակ դավաճանություն է: Աջերի դեմ վճռական պայքար մղելը, անհրաժեշտ նախապայմանն է բանվոր դասակարգի մեծամասնությունը հեղափոխության կողմը գրավելու համար:

Ներկա ամբողջ կացությունը վկայում է այն մասին, որ կոմկուսակցությունները բոլոր երկրներում կանգնած են ինքնուրույն կարմիր պրոֆմիություններ կազմակերպելու անհրաժեշտության առաջ:

Բայց սխալ կլիներ բոլոր երկրներում պրոֆմիությունների պառակտման գիծ տանելը, առանց հաշվի առնելու տվյալ երկրի հեղափոխական շարժման դրության կոնկրետ յուրահատկությունները: Պառակտման տակտիկան դա սոցիալ-ֆաշիստների տակտիկան է: Պառակտման այդ տակտիկան ուղղված է նրան, որպեսզի պրոֆմիությունների հեղափոխական տարրերին, որոնք դեռ գտնվում են ռեֆորմիստական պրոֆմիությունների շարքերում, բանվորական լայն մասսաներից կտրեն, կղզիացնեն:

Այս տեսակետից ելնելով բանվոր դասակարգի



մեծամասնությունը կոմկուսակցությունների և հեղափոխական կարմիր պրոֆմիությունների կողմը գրավելու գործում պակաս խոչընդոտ չեն ներկայացնում իրենցից նաև «ձախ» ֆրազներով ճչողները, որոնք առանց հաշվի առնելու տվյալ երկրի հեղափոխական շարժման կոնկրետ յուրահատկությունները, պահանջում են դուրս գալ ռեֆորմիստական արհմիություններից: Տարբերություն չդնելով մի կողմից՝ ռեֆորմիստական արհմիությունների պրոֆբյուրոկրատական ու պետական և ձեռնարկությունների ապարատի հետ միաձուլված վերնաշերտի ու սոցիալ-ֆաշիստների և մյուս կողմից՝ տակավին նրանց ետևից գնացող բանվորական մասսաների մեջ, «ձախերը» ջուր են լցնում սոցիալ-ֆաշիստների ջրաղացին և խոչընդոտ են հանդիսանում կարմիր արհմիությունների և հեղափոխական պրոֆօպոզիցիաների իսկական հեղափոխական մասսայական կազմակերպություններ դարձնելու գործում:

Ինչպես աջ, նույնպես և «ձախ» օպորտունիստները չեն հասկանում այն, որ բանվորներին այդ ռեակցիոն պրոֆմիությունների ազդեցությունից ազատելու կարևոր մեթոդը—ճանապարհը հանդիսանում է «ներքևից միասնական ճակատ կազմելու ճիշտ տակտիկան, նախ և առաջ տնտեսական պայքարների հետ կապված»:

Այս երկու թեքումն էլ տանում են դեպի պրոլետարիատի դիրքերի թուլացումը և սոցիալ-ֆաշիստների ամրացումը:

Պահանջելով ինչ գնով էլ ուզում է լինի պաշտպանել միասնականությունը, մինչև իսկ դասակարգային պայքարից հրաժարվելու գնով, արհեստակցական շարժման «ձախ» թեքումը խանգարում է պրոֆշարժման մեջ գլխավոր կրակը կենտրոնացնել աջ օպորտունիստների դեմ: Ամուր և վճռական պայքարն այդ թեքումների դեմ, պրոֆշարժման մեջ պետք է հանդիսանա անբաժան մասը մասսայական կարմիր պրոֆմիությունների համար տարվող պայքարում, հանուն պրո-

լետարիատի տնտեսական մասսերի ինքնուրույն ղեկավարության, հանուն հեղափոխական արհմիությունների ամրացման: Ահա թե ինչու «անհրաժեշտ է վճռական պայքար մղել «ձախ» օպորտունիզմի և սեկտանտության դեմ, ըստ վորում վոչ մի րոպե չմոռանալով, վոր հիմնական վտանգը հանդիսանում է աջ վտանգը, վորի դեմ և պետք է ուղղվի գլխավոր կրակը, միևնույն ժամանակ վճռական հակահարված տալով աջ օպորտունիստների այն միտումներին, վորոնք ջանում են «ձախ» թեքման դեմ տարվող պայքարը, վորակել վորպես աջ վտանգի դեմ տարվող պայքարի թուլացում» (Պրոֆինտերնի 5-րդ կոնգրեսի վորոշումը):

---



# III. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԿԱԽՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

1. Կապիտալիզմի համաշխարհային տնտեսական կրիզիսը և գաղութների և կախում ունեցող յերկրների բանվոր դասակարգի և աշխատավորության դրությունը: 2. Հեղափոխական վերելքի նոր շրջան գաղութներում և կիսագաղութներում: 3. Հեղափոխական շարժման խնդիրներն Արևելքի յերկրներում ժամանակակից ետապում:

## 1. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԻԶԻՍԸ ՅԵՎ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ՈՒ ԿԻՍԱԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

«Իմպերիալիզմի բնորոշ գիծը հանդիսանում է այն, վոր ամբողջ աշխարհը, ինչպես մենք տեսնում ենք, ներկայումս բաժանվում է մեծ թվով կեղեքվող ժողովուրդների և աննշան թվով կեղեքող ժողովուրդների, վորոնք տիրապետում են հսկայական հարստությունների և ուժեղ ռազմական ուժի» (Լենին, հ. 19-րդ, եջ 222): Շատ յերկրների հարյուր միլիոնավոր մարդկանց, վորոնք բնակված են յերկրի հսկայական տարածությունների վրա, տնտեսական և քաղաքական ստրկացումը հանդիսանում է մի շարք իմպերիալիստական պետությունների ուժի կարևորագույն աղբյուրներից մեկը: Մի քանի իմպերիալիստական յերկրներ հարստահարում են այնպիսի գաղութներ, վորոնք մի քանի անգամ գերազանցում են այդ իմպերիալիստական պետություններին թե տերրիտորիայի մեծությամբ և թե

ազգաբնակչության քանակով: Օրինակ՝ Անգլիան, վորի ազգաբնակչությունը կազմում է մոտավորապես 50 մլն. մարդ, 400 մլն. ավելի բնակչությամբ գաղութներ ունի: Անգլիայի ամենախոշոր գաղութը Հնդկաստանն է, վորի բնակչությունը հարյուր միլիոնների յե հասնում: Մյուս յերկրները՝ Ֆրանսիան, Ճապոնիան, ԱՄՆ-ը և այլն, նույնպես ունեն բավականին գաղութներ:

Գաղութներն իմպերիալիստների համար հանդիսանում են հումքի հսկայական պահեստարաններ, կապիտալիստական յերկրներում արտադրած ապրանքների համար շուկա, կապիտալներ արտահանելու շրջաններ և էժան բանվորական ձեռքերի աղբյուրներ: Գաղութային բանվորների և բազմամիլիոն գյուղացիության մասսաներ ամենադաժան շահագործման շնորհիվ, շահագործման, վորը կատարվում է բացարձակ կերպով աշխատավոր բնակչության կողոպտելով, իմպերիալիստական յերկրների բուրժուազիան ստանում է գաղութներից հսկայական գերարտադրանք, վորը հանդիսանում է «ժամանակակից կապիտալիզմի գլխավոր աղբյուրի միջոցները: Գաղութների բնակչության շահագործման միջոցով ֆինանսական իմպերիալիզմն ի վիճակի յե մի շարք փոքրություն-կոմպենսացիաներ վերապահել բանվորական արիստոկրատիային Յեվրոպայում» (Կոմինտերնի 2-րդ կոնգրեսի թեզերն ազգային և գաղութային հարցերի մասին):

Սակայն բացի սեփական գաղութային յերկրներից, իմպերիալիստները կողոպտում են նույնպես և այսպես կոչված կախված յերկրները (կիսագաղութները): Այդ տեսակ յերկրների թվին պետք է դասել ամենից առաջ Չինաստանին: Այդ յերկրներն ի տարբերություն գաղութների, վորոշ աստիճանի անկախություն, ինքնուրույնություն ունեն: Սակայն իրականում այդ յերկրների ամեն տեսակ ինքնուրույնության ընդունելն այնքան չնչին է, վոր իմպերիալիստներն այդ յերկրներում հանդիսանում են իսկական և կատարյալ տերեր: Անհավասար պայմանագրերի միջոցով, վորոնք փաթաթում են կախյալ յերկրների վզին իմպերիալիստները, հենվելով իրենց տնտեսական ռազմական հզոր ուժին, իմպերիալիստական տերությունները իրականացնում են իրենց կատարյալ տիրապետությունն այդ յերկրներում: Իմպերիալիստների անսահման իշխանության աչքի ընկնող օրինակ կախյալ յերկրներում հանդիսանում է Չինաստանը, վորը թեև վոչ ձևականորեն, այլ իրականում բաժանված է ազդեցության շրջանների մեծ իմպերիալիստական պետությունների՝ ԱՄՆ, Ճապոնիայի, Անգլիայի միջև:

Իրենց տիրապետությունն այդ տեսակ հսկայական յերկրում, ինչպես Չինաստանն է, պահպանելու համար, իմպերիալիստները ոժանդակում են Չինաստանի գեներալների կռիվներին, վորոնք հոշոտում են Չինաստանի բանվորներին և գյուղացիներին մի շարք տարիների ընթացքում և վորոնց հաշվին հարստանում են իմպերիալիստների աննշան խմբեր և նրանց վարձու գործիքները չինական բուրժուազիայից և գեներալականությունից:

Բայց յեթե գաղութային և կախյալ յերկրները յենթարկվում են անխնա կողոպտման «նորմալ» զարգացման ժամանակ, սակայն այդ կողոպուտը հարյուր անգամ ուժեղանում է այն ժամանակ, յերբ կապիտալիստական տնտեսությունը կրիզիս է ապրում: Այդ մասին վկայում է ներկայումս չինական և հնդկական բանվորների դրությունը: Աշխատավարձի չտեսնված խիստ անկում, մասսայական գործազրկություն, աշխատանքի որվա յերկարացում, ավելի խիստ դաժան քաղաքական ռեակցիա,— ահա թե ինչ է բերում իր հետ համաշխարհային կրիզիսը գաղութների բանվորների, ծառայողների և արհեստավորների համար:

Չինական բանվորի աշխատանքի որը արդյունաբերության տարբեր ճյուղերում հասնում է 10-ից մինչև 16 և ավելի ժամի, ընդ վորում 10 ժամից չանցնող բանվորական որ ունեն բանվորների շատ քիչ կատեգորիաներ (մետաղագործները, յերկաթուղայինները, ծովա-

յինները)։ Իսկ բանվորների մյուս խմբերի (օրինակ՝ մանածագործների) բանվորական օրը 12–14 ժամ է, խանութներում ծառայողներինը՝ 14–16 ժամ, լեռնագործներինը՝ 14 և ավելի ժամ և այլն։

Աշխատավարձը, չնայած նրա խիստ ցածր մակարդակին, շարունակում է իջնել։ Այժմ չինական լեռնագործների օրավարձը 12 ժամյա բանվորական օրվա դեպքում 70–75 կոպեկից անց չի կենում։ Մի քանի հանքերում բանվորական օրը երկարացրած է մինչև 17 ժամի նույն աշխատավարձով։ Արդյունաբերության մյուս ճյուղերում բանը փոքրինչ ավելի չէ, նույնիսկ մի քանի տեղերում ավելի վատ է։ Սակայն և այդ խղճուկ աշխատավարձը չինացի բանվորը ստանում է ոչ լրիվ ամբողջությամբ։ Բոլոր ձեռնարկություններում տարածված է տուգանքների սիստեմը, որը հասնում է չլսված չափերի։ Տուգանում են ամեն դատարկ բանի համար՝ բանվորների միմյանց հետ խոսակցության համար, ծխելու համար, մի քանի րոպե ուշանալու համար և այլն։ Օրինակ՝ Շանհայի էլեկտրական կայարանում հինգ րոպե ուշանալու համար սահմանված է տուգանք երեք օրվա աշխատավարձի չափով։

Հնդկաստանի բանվորների աշխատավարձն ավելի ցածր է, քան չինական բանվորներինը։ Հնդկաստանի ջուտի արդյունաբերության մեջ աշխատավարձն ամսական 12–15 ռուպիուց չի անցնում, իջնելով մինչև 8–10 ռուպիու։

Մանր գյուղացիության, որը գաղութներում և կախյալ երկրներում կազմում է բնակչության հսկայական մեծամասնությունը, տնտեսական դրությունը բնութագրվում է ամենից առաջ սակավահողությամբ, հսկայական ավանդներով, բարձր կապալավարձով և անհավատալի ծանր հարկերով։ Այդ բոլորը հասցնում է այն բանին, որ աշխատավոր գյուղացիության հսկայական մասսաներ դատապարտված են քաղցի և մահվան։ Քաղցն այդ երկրներում, առանձնապես վերջին տարիներում, ընդունում է սպառնալից չափեր։



Չինաստանում, օրինակ՝ մի քանի ռայոններում մեռնում է գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը։ Չինաստանի հյուսիս-արևմտյան մի քանի նահանգներում տասնյակ տարիների ընթացքում բնակչության քանակը երկու և երեք անգամ նվազել է։

Դրան պետք է ևս ավելացնել բանվորների, արհեստավորների և գյուղացիության կատարյալ քաղաքական իրավազրկությունը և իմպերիալիստների, տեղական բուրժուազիայի և ֆեոդալների անազդարույն տերրորը, որոնք չլսված դաժանությամբ հաշիվ են տեսնում ամեն տեսակ երևան եկած հեղափոխական բանվորական և գյուղացիական շարժման հետ, այս դեպքում օգտվելով ինչպես իրենց զինված ուժերից, նույնպես և իմպերիալիստների ուժերից։ Գաղութային երկրների աշխատավոր մասսաներն զգում են ինչպես «իրենց»՝ գաղութային բուրժուազիայի, նույնպես և առանձնապես իմպերիալիստական երկրների բուրժուազիայի ճնշումը։

Իմպերիալիզմի անդադար ուժեղացող տերորը և գաղութների և կախյալ երկրների բանվորների և գյուղացիական մասսաների վատթարացող տնտեսական և քաղաքական դրությունը ևս առավել աշխատավոր մասսաներին մղում է իմպերիալիզմի դեմ կռվի։ Պրոլետարական հեղափոխության փորձը և սոցիալիզմի շինարարությունը ԽՍՀՄ-ում ցույց է տալիս գաղութների աշխատավորներին կռվի ուղին և կոփում է նրանց կամքը իմպերիալիստների և գաղութային բուրժուազիայի հետ յեղած կռվում ամբողջովին ազատելու գաղութների և կիսագաղութների աշխատավորությանն իմպերիալիզմի իշխանության տակից։

## 2. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԿԻՍԱԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ

Հակասությունների սրվելը իմպերիալիստական պետությունների և գաղութների միջև հանդիսանում է կապիտալիզմի զարգացման իմպերիալիստական փուլի բնորոշ նշան։ Այդ հակասությունները հասնում են

առանձին սրվածության ժամանակակից կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի շրջանում, որի մեջ նա մտավ 1914—1918 թ.թ. պատերազմից հետո: Գաղութների և կախյալ երկրների հեղափոխական շարժման մեծությունը հանդիսանում է կապիտալիզմի այդ ընդհանուր կրիզիսի ուղիղ արտահայտություն: «Պատերազմի հետևանքով յեվրոպական իմպերիալիզմի զգալի թուլացումը, կապիտալիզմի զարգացումը գաղութներում, խորհրդային հեղափոխության ազդեցությունը, կենտրոնախույս ձգտումներ ամենաուժեղ ծովային և գաղութային տերության՝ Մեծ Բրիտանիայի ներսում (Կանադա, Ավստրալիա, Հարավային Աֆրիկա)՝ հեշտացրին համարձակ ապստամբությունները գաղութներում և կիսագաղութներում» (Կոմինտերնի ծրագիր):

Իմպերիալիստական պատերազմից հետո Ռուսաստանում և Արևմտյան մի շարք յերկրներում կատարված պրոլետարական հեղափոխության անմիջական ազդեցության տակ, գաղութների ճնշված ժողովուրդները մի քանի անգամ ապստամբեցին իմպերիալիստ կեղեքիչների դեմ: Այդ է վկայում Սիրիայի, Մարոկկոյի, Յեգիպտոսի, Հնդկաչինի, Լատինական Ամերիկայի և այլ յերկրների աշխատավոր մասսաների հերոսական կռիվը: Բայց գաղութային ժողովուրդների շարժման մեջ ամենից աչքի ընկող յերևույթը չինական մեծ հեղափոխությունն էր, որը շարժման մեջ գրեց Չինաստանի հարյուր միլիոնավոր աշխատավորներին: Այդ հեղափոխությունը ճնշվեց իմպերիալիստների կողմից, որոնք հենվում էին վաճառված չինական ռեակցիոն բուրժուազիայի և միջազգային ֆաշիստական սոցիալ-դեմոկրատիայի վրա:

Օտարերկրյա փողի և զենքերի օգնությամբ իշխանության գլուխ անցած Նանկինի կառավարությունը չկարողացավ լուծում տալ չինական հեղափոխության հիմնական հարցերից ոչ մեկին: Չինաստանն առաջվա նման մնում է բաժանված առանձին գեներալների զինվորական խմբերի մեջ, որոնք անդադար կռվում են միմյանց հետ, օժանդակություն ստանա-



լով հյուսիս ամերիկական, ճապոնական և անգլիական իմպերիալիզմից: Գյուղացիության հարցը, հողի հարցը նույնպես մնում է անլուծելի, ինչպես և բանվորական հարցը: Չինաստանի արդյունաբերությունն ապրում է անհավասարելի դադար: Միլիոնավոր բանվորներ և արհեստավորներ մնում են առանց աշխատանքի, տասնյակ միլիոնավոր գյուղացիներ դատապարտված են քաղցի: Ուստի զարմանալի չէ, որ այս իրադարձությունների մեջ չինական բանվորների և գյուղացիների կռիվն իմպերիալիզմի դեմ ավելի ու ավելի սրվում է, որ բանվոր դասակարգը և բազմամիլիոն գյուղացիությունը կանգնում է կոմունիստական կուսակցության դրոշների տակ:

Իմպերիալիստների և ներքին ռեակցիոն բուրժուազիայի և ֆեոդալ-կալվածատերերի հետ անդադար կռվում Չինաստանի աշխատավորները վերջին տարիներս ստեղծեցին հզոր Կարմիր Բանակ, որը գրավեց բավական ընդարձակ յերկրամաս՝ տասնյակ միլիոնավոր բնակչությամբ: Չինաստանի հարավում Կարմիր Բանակի գրաված նահանգներում, կազմակերպված է Խորհրդային իշխանություն, որպես բանվորա-գյուղացիական դիկտատուրան իրականացնելու ձև: Այդ ժամանակվա ընթացքում աճեց և ամրացավ չինական կոմկուսակցությունը, որն իր շարքերում հաշվում է մոտ 200.000 անդամ: Չինական կոմկուսակցությունը կարողացավ վերականգնել իր շարքերը և, հաղթահարելով աջ և «ձախ» օպորտունիստական թեքումները, հաջող ղեկավարում է Չինաստանի բանվորների և գյուղացիների կռիվը:

Այժմ իմպերիալիստների և Նանկինի միացյալ ուժերով վճռական փորձեր են արվում ոչնչացնելու Կարմիր բանակը և վերացնելու Խորհրդային իշխանությունը Չինաստանում: Չան-Կայ-Շին խնդիր է դրել յերեք ամսվա ընթացքում ոչնչացնել Կարմիր բանակը: Մինչդեռ կռվի առաջին ամիսը ցույց է տալիս, որ Նանկինի կառավարության գործերը շատ հեռու

յին այդ խնդիրը լուծելուց: Կարմիր կորպուսները վոչ միայն չեն ջախջախված, այլև մի շարք նահանգներում շարունակում են իրենց գործողություններն ավելի մեծ ակտիվությամբ: Կարմիր կորպուսները ջարդելու փոխարեն, Չան-Կայ-Շին հաճախ հակառակ հետևանքներ է ստանում: Կառավարական զորքերի շատ զորամասեր հրաժարվում են կռվել կարմիրների դեմ և ամբողջ զորամասերով անցնում են կարմիրների կողմը՝ զենքով սպառազինությամբ: Չան-Կայ-Շիին չի հաջողվում ջախջախել չինական Կարմիր բանակը և խեղդել հեղափոխությունը, վորովհետև Չինաստանի հեղափոխական բանակի կարմիր կորպուսները հենվում են բանվորների և գյուղացիական մասսաների աճող հեղափոխական շարժման վրա, վորոնք պահանջում են իմպերիալիստների արտաքսումը և բանվորների ու գյուղացիության դիկտատուրայի հաստատում Խորհրդային իշխանության ձևով: Չինաստանի աշխատավորներն այժմ փորձով համոզվում են, վոր Խորհրդային իշխանությունն իրեն հետ բերում է իմպերիալիստների, կալվածատերերի, վաշխառուների, գեներալների արտաքսումը, բանվորների համար 8-ժամյա բանվորական օր մտնելը, կալվածատերերի ամբողջ հողի գրավումը և գյուղացիության տալը, բոլոր հին պարտքերի և պարտավորությունների և այլնի վերացումը: Այս բոլորը տասնապատկում են հեղափոխության ուժերը, բարձրացնում է այն նոր, ավելի բարձր աստիճանի, երբ վոչ չինական, վոչ օտարերկրյա ծագումն ունեցող վոչ մի տեսակ դահիճների չի հաջողվի խեղդել հեղափոխությունը:

Հեղափոխական շարժումն աճում է և ընդարձակվում է նաև Արևելքի այլ երկրներում: Ամբողջ 1930 թ. Հնդկաստանի բանվոր դասակարգն անցկացրեց կապիտալիստների հետ լարված կռիվ: Հարատև աճող գործազրկության հանգամանքներում Հնդկաստանի բանվորներն անցկացրին մի շարք գործադուլներ, վորոնց զգալի մասն իր զարգացման ընթացքում փոխվեց պրոլետարիատի քաղաքական ելույթների: Գործա-



դուլների մեծ մասը վերջանում է վոստիկանության և զորքերի հետ ընդհարումով: Շատանում է քաղաքական ցույցերի թիվը, վորոնց մասնակցում են ել ավելի շատ բանվորական մասսաներ:

Հեղափոխական բանվորական շարժման աճման հետ միասին ուժեղանում է շարժումը գյուղացիության մեջ, վորն օրեցոր ավելի վճռականորեն է դնում հողի հարցը, պարտքերի հարցը և այլն: Պարտքերի վերացման, կալվածատերերի հողի գրավման լոզունգները դառնում են ավելի ու ավելի ընդհանրացած լոզունգներ հնդկական գյուղում: Դրա հետ միասին աճում է գյուղացիության կապը բանվոր դասակարգի հեղափոխական շարժման հետ: Գյուղացիության քաղաքական զարթոնքը, նրա հեղափոխական աճումն իր արտահայտությունն է գտնում Հնդկաստանի մի շարք նահանգների գյուղացիության հեղափոխական ելույթներում: Գյուղացիության այդ ելույթներին մի քանի նահանգներում հետևեց վաշխառուների և կալվածատերերի կալվածների վոչնչացումը և հասավ վոստիկանության և զորքերի հետ ընդհարման:

1930 թ. երկրորդ կիսամյակում տեղի յե ունենում գյուղացիության հզոր ապստամբություն կոմկուսակցության ղեկավարությամբ ֆրանսիական գաղութ Հնդկաչինում: Այդ ապստամբության դեմ ֆրանսիական իմպերիալիզմը դաժանաբար ապստամբների դեմ հանեց իմպերիալիստների ժամանակակից տեխնիկայի ամբողջ ուժը մինչև ավիացիան ներառյալ: Այդ ապստամբությունը խեղդվեց Հնդկաչինի աշխատավորության արյան մեջ, վորի մասին մեծագույն լկտիությամբ պատմում են իրենք բուրժուազիայի գրչակները. «Մի քանի րոպեյում, նույնիսկ առանց մեր ոդաչուների գլխներից մեկ մազ անգամ կորցնելու խռովարարները զգացին իրենց շուրջը մահվան շունչը: Տասնյակներով, հարյուրներով հնձվեցին ավելի հանդուգները: Չնայած պատկերի սարսափելի լինելուն մենք ասում ենք, այդպես լավ է»: Այդպես է պատմում ա-

ապստամբության ճնշման մի միջադեպի մասին ռեակցիոն մամուլը: Բայց դա միակ միջադեպը չէր: Մի ամբողջ ամսվա ընթացքում իմպերիալիզմի արնախում շները հաշիվ էյին տեսնում ապստամբների հետ: Իմպերիալիստներին հաջողվեց այս ապստամբությունը վերջացնել: Բայց դա նրանց խորտակման կարճատև նահանջ է միայն: Արևելքի հարյուրավոր միլիոն աշխատավորներ շարժման են անցել: Այդ շարժումն օրեցօր ընդարձակվում է իմպերիալիստների տիրապետության դեմ, գաղութների և կախյալ յերկրների կալվածատերերի և բուրժուազիայի դեմ հոգուտ բանվորի և գյուղացու իշխանության: Աճում և ամրանում է պրոլետարական առաջապահի (ավանգարդի) և նրա կուսակցության ազդեցությունը գաղութների գյուղացիական լայն մասսաների մեջ: Դրանում է հեղափոխական շարժման հաջողության վճռական գրավականը արևելյան յերկրներում, աշխատավորության ազատագրման գրավականը իմպերիալիստների, վաշխառուների և կալվածատերերի ճնշումից:

## 3. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՏԱՊՈՒՄ.

Սեղմված օտարերկրյա տիրապետության օղակում գաղութային յերկրներն ապրում են ծանր տնտեսական կրիզիս: Արդյունաբերության լրիվ ավերումը (Չինաստան), գյուղատնտեսության անկումը (Չինաստան, Հնդկաստան և այլն), բանվորների և տնայնագործների մասսայական գործազրկությունը, նրանց նյութական դրության անընդհատ վատթարացումը, տասնյակ միլիոնավոր գյուղացիության սովը, որի զգալի մասը դատապարտված է սովից մահվան, այդպես է գաղութների և կախյալ յերկրների աշխատավոր մասսաների դրության ընդհանուր պատկերը: Կապիտալիզմի համաշխարհային տնտեսական կրիզիսն ավելի ևս վատացնում է դրությունը գաղութներում, որովհետև այդ կրիզիսը իմպերիալիստներին մղում է գաղութներն ավելի մեծ դաժանությամբ կողոպտելու ա–



ղին, ավելի ևս խիստ դաժան կառավարման միջոցների աշխատավորության նկատմամբ: Գաղութների և կախյալ յերկրների իմպերիալիստների կողոպուտը, որն իրականացնում է օտարերկրյա կապիտալը միաբանված այդ յերկրների կալվածատերերի և կապիտալիստների հետ, ստեղծեց այնպիսի պայմաններ, որոնցում բոլորովին շղթայվում են արևելյան հսկայական յերկրների ազատագրական ուժերը:

Միակ յելքն այդ փակուղուց հանդիսանում է հեղափոխության ուղին, որին արդեն բռնել են գաղութների աշխատավոր մասսաները: Ամենագլխավոր ուղին, որը կաշկանդում է Արևելքի բազմամիլիոն աշխատավորության ազատագրական ուժերի զարգացումը, հանդիսանում է առաջին՝ իմպերիալիզմի տիրապետությունն այդ յերկրներում. ազգային բաժանեյության պաշտպանության մեջ շահագրգռված լինելով, որպեսզի հեշտ լինի կողոպտել և բռնության քաղաքականությունն իրականացնել, իմպերիալիստներն ըստ ամենայնի խոչընդոտ են հանդիսանում ազգային միաբանության և աջակցում են գեներալական պատերազմներին, որոնք ամայի յեն դարձնել այդ յերկրները նյութապես և ֆիզիկապես (Չինաստան): Յերկրորդ՝ խոշոր ֆեոդալական հողատիրության առկայությունը հարյուր միլիոնավոր գյուղացիության չտեսնված սակավահողության հետ կողք-կողքի առաջանում է կալվածատերերի և վաշխառուների կողմից գյուղացիության կողոպուտը, որովհետև հողազուրկ գյուղացիներն ստիպված են համաձայնվել հողի կապալի ամենաստրկացուցիչ պայմաններին, որպեսզի քաղցից չմեռնեն: Յերրորդ՝ բանվոր դասակարգի տնտեսական անելանելի և քաղաքականապես իրավազուրկ դրությունը, որն անընդհատ վատթարանում է համաշխարհային տնտեսական կրիզիսի աճման հետ միասին:

Այդ բոլորից հետևում է, որ հեղափոխական շարժման հիմնական խնդիրները Չինաստանում տվյալ մոմենտին պետք է լինեն. ա) մասսաների մոբիլիզա–

ցիան գլխադրելու համար իմպերիալիստական ինտերվենցիան, բռնագրավելով իմպերիալիստների բոլոր տիրապետած կալվածները (արդյունաբերական ձեռնարկությունները, հողամասերը և այլն), այսինքն՝ կռիվ ամբողջովին վերացնելու ազգային ճորտությունը. բ) հեղափոխական ճանապարհով վճռականորեն վերացնել ֆեոդալիզմի ամբողջ մնացորդներին, այսինքն՝ բռնագրավել կալվածատիրական, աբբայական և այլ ամբողջ հողերը և հանձնել այն գյուղական չքավոր-միջակ մասսաներին, և այդ հիման վրա մոբիլիզացիայի յենթարկել գյուղացիության չքավոր-միջակ լայն մասսաներին կռվի հանելու վոչ միայն իմպերիալիստների դեմ, այլև նրանց դաշնակից՝ կալվածատերերի, վաշխառուների և կուլակության. գ) կռիվ գործարաններում և գավառներում 8-ժամյա բանվորական օր սահմանելու համար, աշխատավարձի վորոշ մինիմումի համար, գործադուլներ ընտրելու համար և այլն. դ) ուժեղ կանոնավոր կարմիր բանակ ստեղծել, վորպես պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի զինված հենարանի և կոմունիստական կուսակցության ազդեցության ապահովումը նրա վրա:

Այդ խնդիրների կատարելը պահանջում է վճռական կռիվ խորհուրդներ ստեղծելու համար, վորպես պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի հեղափոխական-դեմոկրատական ձև կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: Այժմ Չինաստանում խորհուրդներ են կազմակերպված բավական ընդարձակ յերկրամասում մի քանի տասնյակ միլիոն բնակչությամբ: Ուստի խորհուրդների համար կռիվը պահանջում է ստեղծել ուժեղ խորհրդային կառավարություն, վորը հենված լինի Կարմիր բանակի վրա և ուժեղ ձեռքով իրականացնի հակաիմպերիալիստական և ագրարային միջոցառումները:

Ի՞նչ լոզունգներով այժմ պետք է մոբիլիզացիայի յենթարկել Հնդկաստանի աշխատավոր մասսաներին: Առաջին՝ անգլիական իմպերիալիզմի տնտեսական և քաղաքական տիրապետության դեմ կռվի լոզունգով:



Այդ հիման վրա Հնդկաստանի բանվոր դասակարգը պետք է մոբիլիզացիայի յենթարկի աշխատավորության հսկայական քանակ և նրանց առաջնորդի վոչ միայն դեպի կռիվ Անգլիայի իմպերիալիզմի դեմ, այլ նաև «իրենց» ֆեոդալների դեմ; բռնագրավելու ֆեոդալական հողերի տիրապետությունը և հողը հանձնելու գյուղացիական աշխատավոր մասսաներին: Յերկրորդ՝ ագիտացիա և գործնական պատրաստություն զինված ապստամբության համար: Պետք է այս լոզունգը դարձնել աշխատավորության ամենալայն մասսաների սեփականություն, վորովհետև զինված ապստամբության հարցը կարող է դրվել հնդկական հեղափոխության օրակարգում վոչ հեռու ապագայում: Անգլիական իմպերիալիստների փորձերը վողորմություն տալու միջոցով հնդկական բուրժուազիային՝ թուլացնել հեղափոխական շարժման թափը պարզ կերպով դատապարտված է անհաջողության: Հնդկական բուրժուազիայի և անգլիական իմպերիալիզմի միջև յեղած առևտուրը կհանգի ուրիշ վոչ մի այլ բանի, քան ավելի ևս արագորեն ազատելու աշխատավորների լայն մասսաներին Հնդկաստանում բանվոր դասակարգը ամենայն վճռականորեն անցումը հեղափոխության կողմը: Վերջապես Հնդկաստանի բանվոր դասակարգը ամենայն վճռականությամբ պետք է դնի խորհուրդների հարցը, վորպես ապստամբության օրգանների և բանվորագյուղացիական իշխանության: Խորհուրդների լոզունգը պետք է դառնա ամենատարածված լոզունգ Հնդկաստանի աշխատավոր մասսաների մեջ:

Այս բոլորը պահանջում է պարզ պատասխան Արևելքի յերկրներում հեղափոխության շարժող ուժերի մասին յեղած հարցին տվյալ էտապում, այն մասին, թե ո՞վ է այժմ ի վիճակի վճռելու հեղափոխության հիմնական հարցերը: Մեծ հեղափոխության փորձը Չինաստանում, Չան-Կայ-Շիի գոմինդանական կառավարության գլուխ անցնելը, հեղափոխական շարժման փորձը Հնդկաստանում ցույց են տալիս, վոր

գաղութային յերկրների բուրժուազիան հայտաբերում է ամենամեծ ակտիվություն ջախջախելու հեղափոխական շարժումը միացած իմպերիալիստների հետ, իմպերիալիստների դեմ ոպոզիցիա կազմելու խաղով ծածկվելով: Այդ յերկրների բուրժուազիան նրանով մեծ վտանգ է ներկայացնում, վոր իր արարքներն իմպերիալիզմի հետ հեղափոխական շարժման ճնշման տակ քողարկում է այն խոսակցություններով, վորպես թե ինքը պատրաստ է կռվել ազգային անկախության համար և նույնիսկ կալվածատիրական հողերի գյուղացիությանը հանձնելու համար, բայց փրկանք (հողերի գինը) վճարելով: Իսկապես, ինչպես Չինաստանի փորձը վկայում է, բուրժուազիան անմիջապես և բացարձակ անցնում է կալվածատեր-ֆեոդալական վոհմակի և իմպերիալիստների կողմը, հենց վոր բանը հասնում է հեղափոխության հիմնական հարցերը հեղափոխականորեն վճռելու. չինական Գոմինդանի ամբողջ հակահեղափոխական գործունեությունը հանդիսանում է դրա փայլուն ապացույցը: Ուստի գաղութներում հեղափոխության հետագա ծավալումը պահանջում է ամենավճռական կռիվ հակահեղափոխական բուրժուազիայի դեմ:

Հեղափոխության միակ շարժող ուժն Արևելքի յերկրներում հանդիսանում է բանվոր դասակարգը և նրա ղեկավարած գյուղացիության չքավոր-միջակ մասսաները: Միայն բանվորների դաշնակցությունը գաղութների հիմնական մասսաների հետ, վորի հիմքում դրված է գյուղացիության վճռական կռիվը կալվածատիրական հողերի գրավումը պրոլետարիատի ղեկավարությամբ ապահովում է հեղափոխության հիմնական խնդիրների վճռումը, ապահովում է պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի ամրացումը, վորովհետև «պրոլետարիատի ղեկավարությամբ կալվածատերերի հողերի բռնագրավման կռվում, գյուղացիության հաղթանակը հենց է պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դիկտատուրան» (Լենին):

Հնդկաստանում և Չինաստանում հեղափոխության



բնույթը ժամանակակից ետապում—բուրժուա-դեմոկրատական է, չնայած այն բանին, վոր այդ հեղափոխությունը կատարվում է բուրժուազիային հակառակ և նրա դեմ է կռվում: Բայց դրանից չի հետևում, վոր Արևելքի յերկրներում հեղափոխությունը դրա վրա յել կանգ կառնի:

Միջազգային ամբողջ հանգամանքները, կապիտալիզմի անտեսական կրիզիսի գերազանցումը, վորն անցավ քաղաքական կրիզիսի Արևմուտքի մի շարք յերկրներում, ամբողջ աշխատավորության սոցիալիստական հայրենիքի—ՍՍՀՄ գոյությունը, վորն հաջողությամբ ավարտում է սոցիալիստական տնտեսության կառուցվածքի հիմքը,—այդ բոլորն այնպիսի գործոններ են, վորոնք անխուսափելիորեն կաջակցեն բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերածելու գործողության արագացմանը:

Գաղութային և կախյալ յերկրների կոմունիստական կուսակցությունները, վորոնք ղեկավարում են հեղափոխական կռիվն ամենաբարդ պայմաններում, պետք է վճռականապես վերացնեն մի քանի դեպքերում նկատված «ձախ» տրոցկիստական և աջ-ոպորտունիստական բնույթի թեքումները: Պրոլետարիատի հեգեմոնիայի համար կռվում աջ ոպորտունիզմը, վոր քարոզում է դաշնակցել կուլակության հետ, հողն ըստ արտադրական միջոցների բաշխել, իսկ յերբեմն գլորվում է դեպի Գոմինդանի հակահեղափոխական դիրքը, գլխավոր վտանգ է ներկայացնում: «Ձախ» և աջ ոպորտունիստների դրված հարցերն անխուսափելիորեն տվյալ մոմենտին հեղափոխական շարժման կազմալուծումն առաջ կբերեյին: Ուստի այդ թեքումների դեմ կռիվը հանդիսանում է ներկայումս անբաժան մասը և' հեղափոխությունը ծավալելու անհրաժեշտ պայման և' պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխա-դեմոկրատական դիկտատուրայի հաստատումը:

# IV. ԿՈՄԻՆՏԵՐՆԸ—ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ

1. Կոմինտերնը—միջազգային հեղափոխության շտաբն է: 2. Կոմինտերնի խնդիրները ներկա մոմենտում:

## 1. ԿՈՄԻՆՏԵՐՆԸ—ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՏԱԲՆ Է.

Բանվորների հեղափոխության դասակարգային փորձը բոլոր յերկրներում ցույց է տալիս, վոր բանվորների բուրժուազիայի վրա հաղթանակը հսկայական չափով կախված է նրանից, թե բանվոր դասակարգը կարող է արդյոք ստեղծել իսկական հեղափոխական կուսակցություն, վորը հետեվողականաբար կռվում է կապիտալիզմի հետ և ղեկավարում է պրոլետարիատին այդ կռվում. առանց պրոլետարական ավանգարդ—կոմունիստական կուսակցության—կողմից դասակարգային կռվի ղեկավարման, բանվորների հաղթանակը կապիտալիստների վրա անհնար է, վորովհետեվ կուսակցությունը «դասակարգային կռվի բարձր ձեվն է: Կուսակցությունը պրոլետարիատի կազմակերպման բարձր ձեվըն է. դրա հետ միասին կուսակցությունը զենք է պրոլետարիատի ձեռքում դիկտատուրան գրավելու, յերբ նա դեռ ևս գրված չէ, դիկտատուրան ամրացնելու և ընդարձակելու, յերբ այն արդեն գրավված է» (Ստալին):

Կապիտալիզմին հաղթահարելու համար, անհրաժեշտ է բանվորների ամբողջ ճիգերը յենթարկել մեկ կամքի, այդ ճիգերն ուղղել ընդհանուր նպատակի—կա-



պիտալիստական հասարակակարգը խորտակելու: Իսկ դրա համար անհրաժեշտ է այնպիսի կազմակերպություն, վորը միացնի իր մեջ պրոլետարիատի դասակարգային կռվի ամբողջ փորձը և այդ փորձի և հեղափոխական տեսության հիման վրա նշի կռվի ուղիները, նշի բանվորների ընդհանուր գիծն այդ կռվում: Այս բոլորն ամբողջությամբ ապահովում է պրոլետարիատի կուսակցությունը: Նա «այդ բոլորի համար բոլոր տվյալներն ունի, վորովհետեվ. առաջինը՝ վոր կուսակցությունը դասակարգի լավագույն տարրերի հավաքավայրն է, վորոնք ուղղակի կապեր ունեն պրոլետարիատի անկուսակցական կազմակերպությունների հետ և շատ հաճախ ղեկավարում է նրանց, յերկրորդ՝ վոր կուսակցությունը, վորպես բանվոր դասակարգի լավ մարդկանց հավաքավայր հանդիսանում է ամենալավ դպրոցը բանվոր դասակարգի առաջնորդներ (լիդերներ) պատրաստելու համար, վորոնք ընդունակ են ղեկավարել իր դասակարգի կազմակերպության բոլոր ձեվերը. վորովհետեվ յերրորդ՝ վոր կուսակցությունը վորպես բանվոր դասակարգի լիդերների լավագույն դպրոց հանդիսանում է իր փորձով և հեղինակությամբ միակ կազմակերպությունը, վորն ընդունակ է կենտրոնացնել պրոլետարիատի կռվի ղեկավարությունը և այդպիսով բանվոր դասակարգի բոլոր և ամեն տեսակի անկուսակցական կազմակերպությունները դարձնել սպասարկող մարմիններ և շարժիչ փոկեր, վորոնք միացնում են նրան դասակարգի հետ» (Ստալին):

Պրոլետարիատի կուսակցության թուլությունը, ևս առավել այդ տեսակ կուսակցությունների բացակայությունը բանվորների մի շարք հեղափոխությունների հաղթվելու վճռական պատճառ դարձավ: Հետեվողական հեղափոխական կուսակցության բացակայությունը 1871 թ. Փարիզի կոմունան ջախջախման հասցրեց: Բոլշեվիկների կուսակցության թուլությունը 1905 թ. հանդիսացավ 1905 թվի հեղափոխության ջախջախման պատճառներից մեկը Ռուսաստանում: Վերջապես թուլությունը և նույնիսկ պրոլետարական, իսկա-

կան հեղափոխական կուսակցությունների ամբողջովին բացակայությունն Արևմուտքում 1918–19 թ. վճռական պատճառ հանդիսացան Արևմուտքի մի շարք յերկրներում հեղափոխության խորտակման։

Սակայն յուրաքանչյուր յերկրում իսկական հեղափոխական, պրոլետարական կուսակցություններ ստեղծելով պրոլետարիատի կռիվն իր կազմակերպության համար չի վերանում։ Պրոլետարիատը հայրենիք չունի։ Նրա շահերը մեկ են բոլոր յերկրների բանվորների համար։ Բանվորների դասակարգային կռիվը վաղուց արդեն միջազգային բնույթ է ստացել։ Բուրժուազիայի դեմ միջազգային մասշտաբով պրոլետարիատի կռվի ղեկավարության համար բանվոր դասակարգը պետք է ունենա իր միջազգային պրոլետարական կազմակերպությունը, վոր ղեկավարի նրա կռիվը պրոլետարիատի դիկտատուրայի համար ամբողջ աշխարհում։

Մինչև իմպերիալիստական պատերազմը բանվոր դասակարգն ուներ այդպիսի միջազգային կազմակերպություն հանձինս 2-րդ Ինտերնացիոնալի, վորն իմպերիալիստական պատերազմի սկզբին «կատարեց ոգտակար աշխատանքի իր պարտքը կազմակերպելով նախապես պրոլետարական մասսաներին յերկար «խաղաղ» ամենադաժան կապիտալիստական ստրկության դարաշրջանում...» (Լենին)։ Կապիտալիզմի կրիզիսի ընդհանուր շրջանում, իմպերիալիստական պատերազմների և պրոլետարական հեղափոխության շրջանում 2-րդ Ինտերնացիոնալը վոչ միայն ընդունակ չեղավ ղեկավարելու բանվորների կռիվը պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրա ձեռք բերելու համար, այլ և բացարձակ կանգնեց նեխված կապիտալիզմի պաշտպան և դարձավ խոշորագույն հակահեղափոխական ուժ, սկսեց կռվելով բոլոր յերկրների բանվորների հեղափոխական շարժման դեմ։ II-րդ Ինտերնացիոնալն այժմ իրենից ներկայացնում է սոցիալ-ֆաշիստական կուսակցությունների համաքույթ, վորոնց խնդիրները հանդիսանում են կապիտալիզմի պաշտպա-



նությունը և կռիվ Արևելքի ճնշված ժողովուրդների բանվորների հեղափոխական շարժման դեմ։

II-րդ Ինտերնացիոնալի դավաճանությունն արդեն բավական վորոշ նկատվեց իմպերիալիստական պատերազմի նախորյակին։ Իսկ համաշխարհային պատերազմը, վորին պաշտպանելու բացարձակ կերպով դուրս յեկավ 2-րդ Ինտերնացիոնալը, բոլորին ցույց տվեց, վոր այդ Ինտերնացիոնալը մեռել է վորպես պրոլետարական կազմակերպություն։ Արդեն 1914 թ. Լենինն առաջադրեց նոր միջազգային բանվորական կազմակերպության կազմակերպելու լոզունգը, 3-րդ Ինտերնացիոնալ կազմակերպելու լոզունգը, վոր կանգներ ծավալվող հեղափոխության գլուխ։ 1919 թ. Ռուսաստանի պրոլետարական հեղափոխության հաղթանակից հետո Լենինի այդ միտքը հաջողվեց իրականացնել. ստեղծելով Կոմունիստական Ինտերնացիոնալ։

Ներկայումս Կոմինտերնը միացնում է աշխարհի բոլոր յերկրների կոմունիստական կուսակցություններին, վորոնք իրենց շարքերում հաշվում են միլիոնավոր առաջավոր մարտիկներ բանվորական գործի համար։ Կոմունիստական Ինտերնացիոնալը ղեկավարում է բոլոր կապիտալիստական յերկրների և գաղութների բանվոր դասակարգի հեղափոխական կռիվը։ Այն Կոմունիստական կուսակցությունները, վորոնք մտնում են Յերրորդ Ինտերնացիոնալի մեջ, շատ յերկրներում արդեն դարձել են առաջավոր հեղափոխական բանվորների իսկական մասսայական կազմակերպություններ (Գերմանիա, Ֆրանսիա, Լեհաստան և այլն)։ Ուրիշ յերկրներում կոմունիստական կուսակցությունները կանգնած են նրանց մասսայական կուսակցություններ դարձնելու ուղու վրա։

Կոմինտերնը ղեկավարում է կարմիր արհմիությունների հեղափոխական Ինտերնացիոնալը, վորոնց հետևից գնում են բոլոր յերկրների բանվորների տասնյակ միլիոններ։ Իր սեկցիաների (կոմկուսակցության) միջոցով Յերրորդ Ինտերնացիոնալն իրականացնում է գյուղացության բազմամիլիոն մասսաների հեղափոխա-

կան կռվի ղեկավարությունը Հնդկաստանում, Չինաստանում և մյուս գաղութային յերկրներում: Յերրորդ Ինտերնացիոնալը ղեկավարում է բոլոր յերկրների բանվոր և գյուղացի յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալի հեղափոխական աշխատանքը:

Հասակավոր բանվորների ամենադաժան շահագործման հետ միասին կապիտալիստները կատաղորեն շահագործում են պատանիների և յերիտասարդության աշխատանքը: Յերիտասարդության դերն և տեսակարար կշիռն արտադրության մեջ աճում է տարեց-տարի: Դրա հետ միաժամանակ աճում է յերիտասարդության շահագործումը կապիտալիստների կողմից, վորն ուժեղանում է համաշխարհային տնտեսական կրիզիսի սրման հետեվանքով: Կապիտալիստներն իրենք ընդունում են, վոր յերիտասարդությունը 14–21 տարեկան հասակում հանդիսանում է «խոշոր հասարակական և տնտեսական ֆակտոր», վորովհետեվ կապիտալիստական ռացիոնալացումն ապահովվում է վորակյալ հասակավոր բանվորների թանկ նստող աշխատանքի փոխարինումը նվազ վորակյալ և ավելի եժան յերիտասարդ բանվորների աշխատանքով: Յերիտասարդ բանվորներն ստանում են վողորմելի աշխատավարձ: Որինակ՝ Բերլինի մի գավառում 18 տարեկանից ցած բանվորները ստանում եյին 4 անգամ նվազ աշխատավարձ, քան հասակավոր բանվորները, վորոնք կատարում եյին միեվնույն աշխատանքը, քանի դեռ նրանց յերիտասարդությունը չեր փոխարինել: Բոլոր յերկրներում յերիտասարդ բանվորը ստանում է անհավասար աշխատավարձ հավասար աշխատանքի համար:

Աճող համաշխարհային տնտեսական կրիզիսի հանգամանքներում խիստ բարձրանում է գործազրկությունը յերիտասարդության մեջ և զանազան յերկրներում կազմում է գործազուրկների ընդհանուր թվի 10-ից մինչեվ 40 տոկոսը (վորոնց թիվը կապիտալիստական յերկրներում 1931 թ. սկզբին հաշվվում եր մինչև 30 միլիոն):

Այդ բոլորը ցույց է տալիս, վոր հեղափոխական շարժման զարգացման կարևորագույն խնդիր հանդի-



սանում է յերիտասարդության միլիոնավոր մասսաների ներգրավումը կապիտալիզմի դեմ կռվում, վորովհետեվ միայն կապիտալիզմի վերացմամբ և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը կապահովվի յերիտասարդության նյութական դրության լավացումը և նրա կուլտուրական և ֆիզիքական զարգացումը: Կապիտալի հետ կռվելու համար յերիտասարդության կազմակերպության այդ խնդիրն իրականացվում է ԿԻՄ-ի և նրա սեկցիաների կողմից զանազան յերկրներում: Այժմ ԿԻՄ-ն ունի իր սեկցիաները (կոմյերիտական կազմակերպությունները) համարյա բոլոր յերկրներում: Վերջին տարիներս ԿԻՄ-ի սեկցիաները բավականին աճել են և ամրացել մի շարք յերկրներում: Այսպես, գերմանական սեկցիան իր շարքերում հաշվում է 40,000 անդամ (1923 թ. 21,000 դիմաց): Չինական կոմսոմոլն ընդգրկում է մոտ 100,000 անդամև այլն: Կոմսոմոլի թվական այդ աճումը տեղի յե ունենում չնայած այն ամենադաժան հալածանքներին, վորոնց յենթարկվում է հեղափոխական յերիտասարդությունը (արտադրությունից դուրս անելը, բանտարկությունները, բանտերը, կտտանքները): Հենց միակ Ֆաշիստական Լեհաստանում բանտերում տառապում են մինչեվ 4000 հեղափոխական բանվորներ: Հասակավոր բանվորների հետ միասին յերիտասարդությունը կատարում է մեծ հեղափոխական աշխատանք: Իր սեկցիաների շարքերում աջ և «ձախ» ոպորտունիզմի դեմ յեղած անհաշտ կռվում ԿԻՄ-ն ել ավելի սեղմ համախմբում է իր շարքերը պրոլետարիատի դիկտատուրայի համար կապիտալի հետ յեղած առաջիկա վճռական կռվի համար: Մի շարք յերկրներում կոմսոմոլը բավական ընդարձակ մասսայական աշխատանք է կատարում, ակտիվ, տնտեսական աշխատանք արհմիություններում և այլն: Բայց կապիտալիստական յերկրների կոմսոմոլը դեռ հեռու յե բանվոր և գյուղացի յերիտասարդության մասսայական կազմակերպությունը դառնալուց:

Այժմ կապիտալիզմի համաշխարհային տնտեսական կրիզիսի պայմաններում և այստեղից բխող բանվոր դասա-

կարգի դրության խիստ վատացումն ընդհանրապես և բանվոր յերիտասարդության մասնավորապես և դասակարգային կռվի լարվածությունը բոլոր յերկրներում ավելի վճռականորեն են մղում բանվոր յերիտասարդությանը հեղափոխական կռվի ուղին: Այդ բոլորը նախադրյալներ են ստեղծում ԿԻՄ-ի սեկցիաները դարձնելու յերիտասարդության մասսայական կազմակերպություններ: Ուստի ԿԻՄ-ի կենտրոնական խնդիրը ներկա մոմենտում հանդիսանում է ամեն կերպ օգտագործել այդ պարագան բանվոր և գյուղացի յերիտասարդության լայն մասսաներին հեղափոխության կողմը, ԿԻՄ-ի սեկցիաները դարձնելու բանվոր և գյուղացի յերիտասարդության իսկական մասսայական կազմակերպություններ:

ԽՍՀՄ կոմսոմոլը, վորն իր շարքերում ընդգրկում է մոտ 3 միլիոն անդամներ, հանդիսանում է ԿԻՄ-ի ամենազորեղ սեկցիան: Խորհրդային կոմսոմոլը հեղափոխական կռվի հսկայական և սոցիալիստական շինարարության փորձ ունի: Այժմ ԽՍՀՄ կոմսոմոլը շատ մեծ աշխատանք է կատարում տնտեսական և կուլտուրական ֆրոնտներում, յեռանդագին կռվելով հնգամյակը չորս տարում կատարելու համար: ԽՍՀՄ կոմսոմոլն իրենից ներկայացնում է ԿԻՄ-ի բոլոր սեկցիաների հեղափոխական կռվի և սոցիալիստական շինարարության անսպառ փորձի պահեստ, ուստի և հանդիսանում է ԿԻՄ-ի ղեկավար սեկցիան: Յեղբայրական միություններին նրանց յերիտասարդության մասսաների կռվում ամենալավ կռվի ձևը խորհրդային կոմսոմոլի կողմից հանդիսանում է ԽՍՀՄ յուրաքանչյուր կոմյերիտականի լարված աշխատանքը սոցիալիստական էկոնոմիկայի հիմունքներն ավարտելու համար, հնգամյակը 4 տարում կատարելու համար:

Տասնյակ միլիոն հասակավոր և յերիտասարդ բանվորներ և գյուղացիներ արդեն կազմակերպվածորեն գնում են Կոմունիստական Ինտերնացիոնալի յետևից: Արևմուտքի և Արևելքի միլիոնավոր բանվորներ և գյուղացիներ, վորոնք դեռ ևս կազմակերպվածորեն չեն ամրապնդված կազմակերպություններում, վորոնք ըն-



թանում են Կոմինտերնի ղեկավարությամբ, յուրաքանչյուր օր ավելի վճռականաբար են կանգնում Յերրորդ Ինտերնացիոնալի դրոշների տակ, վորովհետև նրանք ավելի հստակորեն են համոզվում այն բանում, վոր Կոմինտերնը— բանվոր դասակարգի միակ հեղափոխական կազմակերպությունն է, վորն ընդունակ է բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության բազմամիլիոն մասսաներին հասցնելու կատարյալ հաղթանակի կապիտալիզմի վրա:

Կոմինտերնում հսկայական դեր է խաղում Համամիութենական Կոմունիստական կուսակցությունը: Մեր կուսակցությունը, ունենալով հեղափոխական դասակարգային հսկայական փորձ և հաղթական սոցիալիստական շինարարության փորձ, կռվի փորձ, ամեն տեսակ ապորտունիզմի դեմ, կենտրոնական տեղ է բռնում Կոմինտերնում, հանդիսանալով Կոմինտերնի ղեկավարը: Մեր Հեղափոխության փորձը միջազգային մեծ նշանակություն ունի և դրվում է Կոմինտերնի ծրագրի և տակտիկայի հիմքում, նույնպես և բոլշևիկյան կուսակցության կազմակերպչական կառուցվածքի փորձը: Մեր փորձի վրա միջազգային պրոլետարիատը սովորում է կռվել և հաղթել կապիտալիստական կառուցվածքն ամբողջ աշխարհում:

## 2. ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԵՐԿԱ ՄՈՄԵՆՏՈՒՄ.

Կապիտալիզմի համաշխարհային տնտեսական կրիզիսը, սրելով կապիտալիստական կարգի բոլոր հակասությունները, առանձին ուժով սրեց տվյալ մոմենտին հիմական համաշխարհային հակասությունը— հակասությունը ԽՍՀՄ և կապիտալիստական աշխարհի միջև: Նոր կապիտալիստական պատերազմների պատրաստության հետ միասին բոլոր յերկրների բուրժուազիան կռվի կատաղի պատրաստություն է տեսնում Խորհրդային Միության դեմ: Դա բոլոր յերկրների Կոմկուսակցությունների առաջ դնում է վորպես կարևոր խնդիր վճռական կռիվը նոր պատերազմների պատրաստության դեմ, ԽՍՀՄ վրա զինված հարձակման պատ-

բռնության դեմ: ԽՍՀՄ նշանակությունը, վորպես համաշխարհային պրոլետարական հեղափոխության հենարանի, վորպես միջազգային բանվոր դասակարգի ուժի աղբյուր նրանց կապիտալիզմի դեմ կռվում պարզորեն ընդունված է Երրորդ Ինտերնացիոնալի մեջ մտնող բոլոր Կոմունիստական կուսակցությունների կողմից: Կոմինտերնի 4-րդ կոնգրեսը (1929 թ.) նշեց ռազմական վտանգի դեմ կռվի վորոշակի ծրագիր, առաջին հերթին Խորհրդային Միության վրա հարձակվելու պատրաստության դեմ: Նա բոլոր կուսակցություններին առաջարկեց անդադար պրոպագանդա մղել ԽՍՀՄ վրա հարձակվելու դեմ, բացատրել բանվորական լայն մասսաներին և բոլոր աշխատավորներին պատրաստվող նոր պատերազմի հակահեղափոխական բնույթը. բացարձակ մերկացնել զինաթափման մասին ամեն տեսակ խոսակցությունները, վորոնց տակ թաքնվում է նոր պատերազմների կատաղի պատրաստությունը, կազմակերպել հակապատերազմական ցույցեր. ստեղծել ինտերվենցիայի դեմ գործող կոմիտեներ. անխնա կռվել ֆաշիզմի և սոցիալ-ֆաշիզմի դեմ, ստեղծելով հակառակշիռ հակապատերազմական կազմակերպություններ Գերմանիայի Կարմիր ճակատայինների միության նման. ուժեղացնել աշխատանքը բուրժուական բանակներում, ագիտացիա անելով այդ բանակների զինվորներին Կարմիր բանակի կողմն անցնելու համար: 4-րդ կոնգրեսն օգոստոսի մեկն հայտարարեց նոր իմպերիալիստական պատերազմների պատրաստության դեմ և ԽՍՀՄ վրա հարձակվելու դեմ կռվի օր: Շատ Կոմունիստական կուսակցություններ, (Գերմանիա, Լեհաստան, Ֆրանսիա), այդ բանում արդեն հասել են զգալի հաջողությունների:

Կոմինտերնի վճռական խնդիրը ներկա պայմաններում հանդիսանում է բանվոր դասակարգի մեծամասնությունը գրավել Կոմինտերնի կողմը: Կրիզիսի պարագաները և նրանից բխող դասակարգային խիստ լարվածությունը բոլոր յերկրներում մի կողմից, ֆաշիստական սոցիալ-դեմոկրատիայի բուրժուազիայի պետական ապարատին միանալը, նրա բացարձակ կռիվը



հեղափոխական բանվորական շարժման դեմ մյուս կողմից—բարենպաստ պայմաններ են ստեղծում այդ խնդրի լուծման համար: Բանվորները փորձով համոզվում են այժմ բոլոր գույների սոցիալ-ֆաշիստների հակահեղափոխական լինելու մեջ և ել ավելի վճռականորեն են անցնում կոմունիզմի կողմը:

Բայց դա չի նշանակում, վոր բանվորների մեծամասնության գրավումը պետք է կատարվի ինքնահոսով, առանց կռվի սոցիալ-ֆաշիզմի դեմ: Ընդհակառակը, բարենպաստ օբյեկտիվ պայմանները պահանջում են ամենավճռական կռիվ հակահեղափոխական Սոցիալ-դեմոկրատիայի դեմ, վորը դեռ մինչեվ այժմ ազդեցություն ունի բանվորների զգալի մասի վրա: Սոցիալ ֆաշիզմի դեմ խիստ կռվում միայն կոմկուսակցությունները կարող են բանվոր դասակարգի մեծամասնության գրավման այդ հնարավորությունները իրականություն դարձնել:

Բանվորության մեծամասնության կոմկուսակցությունների կողմը գրավելու համար գոյություն ունի միայն մի ճանապարհ—կոմկուսակցությունների կողմից բանվորների դասակարգային կռվի անմիջական, ինքնուրույն ղեկավարման ճանապարհը: Իրականացնելով բանվորների տնտեսական և քաղաքական կռվի ղեկավարությունը կապիտալիզմի դեմ, կազմակերպելով գործադուլներ և ցույցեր, Կոմկուսակցությունները պետք է ամուր անցկացնեն միասնական ճակատի տակտիկան ցածից: Նրանք պետք է միացնեն հեղափոխական ճիգերն ինչպես այն բանվորների, վորոնք արդեն գտնվում են կազմակերպություններում, վորոնք գնում են Կոմինտերնի հետեվից, նույնպես և նրանց, վորոնք դեռ գտնվում են դեղին ռեֆորմիստական արհմիություններում: Նրանք պետք է կազմակերպեն բանվ. միասնական ճակատ, անկախ նրանց ռեակցիոն արհմիություններին ձեվականորեն պատկանելիության, և այդ միասնական պրոլետարական ճակատը հակադրել բուրժուազիայի, սոցիալ-ֆաշիստների, և ռեֆորմիստական բյուրոկրատների և այլ ռեակցիոն արհմիություն-

ների միացյալ ճակատին: Միայն այդ պայմաններում, յերբ կոմկուսակցություններին հաջողվում է հակադրել պրոլետարների դասակարգը բուրժուազիայի և սոցիալ-փաշիստների բանակից նրանց արբանյակների դասակարգին, բանվորության մեծամասնությունը կանցնի կոմկուսակցությունների կողմը:

Այդ դեպքում առանձնապես վճռական պետք է լինի Կոմկուսակցության կռիվն այսպես կոչված «ձախ» Սոցիալ-դեմոկրատիայի դեմ: «Ձախ» սոցիալ-դեմոկրատներն ամենալուրջ վտանգ են ներկայացնում բանվորների մեծամասնությունը կոմունիզմի կողմը գրավելու համար, այն պատճառով, որ նրանք ավելի ճարպկորեն ծածկում են իրենց հակահեղափոխական աշխատանքը հեղափոխական ֆրազներով ուստի և մեծ շանսեր ունեն մթագնելու բանվորների գիտակցությունը և ազդեցություն ունենալ նրանց վրա:

Հակահեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դեմ հաջող կռվելու բանվոր դասակարգի մեծամասնությունը գրավելու համար, կոմկուսակցությունները պետք է ամենայն վճռականությամբ վերացնեն օպորտունիստական յերևույթները և տատանումներն իրենց շարքերից:

Աջ օպորտունիզմն այժմ ներկայացնում է գլխավոր վտանգ Կոմինտերնում: Աջ օպորտունիստները չեն հասկանում այն, որ սոցիալ-ֆաշիզմը, առաջին հերթին նրա «ձախ» թևը, հանդիսանում է հիմնական վտանգ բանվոր դասակարգի մեծամասնությունը գրավելու համար: Քարոզելով միասնականություն, ինչ էլ որ լինի, չբաժանելով բանվորական մասսաներին, որոնք գտնվում են ռեֆորմիստական արհմիություններում, այդ միությունների վաճառված սոցիալ-դեմոկրատական վերնախավից, հրաժարվելով դասակարգային կռիվները ինքնուրույն կերպով ղեկավարելուց, աջ օպորտունիստներն արգելակում են Կոմինտերնի սեկցիաների աշխատանքը Կոմինտերնի ղեկավարությամբ պրոլետարիատի դասակարգային միասնականության պաշտպանության գործում, դանդաղեցնում են բանվորների մեծամասնությունը գրավելու գործողությունը Կոմունիզմի կողմը:

«Ձախ» օպորտունիստները նույնպես չեն հասկանում միասնական պրոլետարական ճակատի տակտիկայի էությունը: Պահանջելով կոմունիստների հեռացումը ռեակցիոն արհմիություններից, պահանջելով արհշարժման անմիջական բաժանումը և անմիջապես բոլոր յերկրներում ստեղծել ինքնուրույն կարմիր արհմիություններ, «ձախ» օպորտունիստներն օգնում են հակահեղափոխական սոցիալ-դեմոկրատիային չեզոքացնելու պրոլետարական հեղափոխականներին բանվորական լայն մասսաներից, որոնք գտնվում են ռեֆորմիստական արհմիություններում: «Ձախ» օպորտունիստները, խոսքով չհամաձայնվելով աջերի հետ, գործնականում, ինչպես նաև աջերը, չեն հավատում բանվոր դասակարգի ուժին:

Այժմ Կոմինտերնի սեկցիաները մեծ աշխատանք են կատարում իրենց շարքերը մաքրելու աջ և «ձախ» օպորտունիստներից: Հակահեղափոխական տրոցկիզմը և աջ օպորտունիզմն ամբողջովին պարտություն կրեցին: ում, ակտիվ տնտեսական աշխատանք է կատարում, Տրոցկիստների փորձերը դուրս գալ ինքնուրույն գծով և ստեղծել առանձին կուսակցություն՝ վիժեց: Բանվոր դասակարգը յերես շուռ տվեց այդ հակահեղափոխական դավաճանական ճահճից, որի մասին վկայում է Գերմանիայի փորձը, որտեղ տրոցկիստական Բրանդլերի խմբակը կորցրեց ամեն տեսակ կապ բանվոր դասակարգի հետ: Բայց այդ բոլորովին չի նշանակում կռվի դադարեցման անհրաժեշտություն օպորտունիստական թեքումների դեմ Կոմինտերնի սեկցիաների ներսում:

Պրոլետարիատի հսկայական դասակարգային կռիվները հաջող ղեկավարելու համար, Կոմինտերնի սեկցիաներն ապագայումն էլ պետք է մղեն ամենալարված և անհաշտ պայքար յերկու ճակատով. աջ օպորտունիզմի դեմ, որպես ներկա մոմենտի ամենամեծ վտանգ և «ձախ» թեքման դեմ, որն ամրացնում է աջ օպորտունիստների դիրքը: Վերջապես՝ կոմկուսակցությունները նույնպես պետք է անխնա մերկացնեն ամեն տեսակ հաշտվողականություն թեքումների նկատմամբ, որոնք

գործի էության տեսակետից ներկայացնում են նույն օպորտունիզմը քողարկված ձևով:

Միայն այս պայմանով կոմկուսակցությունները կարող են լուծել պրոլետարիատի դասակարգային պայքարի ղեկավարության ամենաբարդ խնդիրներն ամբողջ աշխարհում պրոլետարական դիկտատուրայի հաղթանակի ձեռք բերելու համար:



# V. ՖՐԱՆՍԻԱ

1. Ընդհանուր տեղեկություններ.— 2. Ֆրանսիան և ԽՍՀՄ.— 3. Ֆրանսիայի միլիտարիզմը.— 4. Համաշխարհային ճգնաժամը և դասակարգային պայքարը Ֆրանսիայում.— 5. Ֆրանսիայի զինված ուժերը:

Ֆրանսիան հանդիսանում է ամենազորեղ բուրժուական պետությունը յեվրոպական մայր ցամաքում ինչպես տնտեսական, այնպես ել ռազմական տեսակետից: Ֆրանսիայի հզորությունը բավական չափով բացատրվում է նրանով, վոր նա, Անգլիայի նման, տիրապետում է հսկայական գաղութային յերկրների, վորոնցից մեծ յեկամուտ է ստանում: Այդ յերկրներից շատերը խլված են Գերմանիայից համաշխարհային պատերազմից հետո: Ֆրանսիայի գաղութները գտնվում են յերկրագնդի բոլոր մասերում, բռնելով 11 ու կես միլիոն քառ. կիլոմետր տարածություն և ունեն 62 միլ. բնակիչ: Իրեն Ֆրանսիայի տերրիտորիան Յեվրոպայում բռնում է 551 հազար քառ. կմ. և ունի 40,7 միլիոն բնակչություն:

Ֆրանսիան—հին կապիտալիստական յերկիր է: Բայց կապիտալիստական արտադրության զարգացումը Ֆրանսիայում մինչև 20-րդ դարի սկիզբն ընթանում եր չափազանց դանդաղ, շատ յետ մնալով Անգլիայից և յերիտասարդ կապիտալիստական յերկրներ—Գերմանիայից և ԱՄՆ-ից: Միայն վերջին տասնամյակում արտադրության զարգացումն առաջ գնաց արագ տեմպով:

Ֆրանսիայի զարգացման դանդաղկոտության գլխավոր պատճառը հանդիսանում է սեփական ածխի պակասությունը: Սակայն յերկաթահանքի պաշարները Ֆրանսիայում հսկայական են: Ածխի պակասության պատճառով հանած հանքի զգալի մասը ստիպված եյին

արտահանել արտասահման: Այդ դրությունն իմպերիալիստական պատերազմից հետո գլխովին փոխվեց: Վերսալի համաշխարհային թալանչիական դաշնագրությամբ Ֆրանսիան խլեց հաղթված Գերմանիայի նահանգները. խիստ զարգացած արդյունաբերությամբ և հանածոների մեծ պաշարներով—գլխավորապես ածխի և երկաթի (Լոթարինգիա, Էլզաս, Սաար): Դա ուժեղ զարկ տվեց ֆրանսիական արդյունաբերության զարգացմանը պատերազմից հետո:

Ներկայումս արդյունաբերական տեսակետից Ֆրանսիան յետ է մնում ԱՄՆ-ից և Գերմանիայից, մի քանի ճյուղերում գերազանցում է անգլիական արդյունաբերությանը (օրինակ՝ չուգունի արտադրանքները): Ածխի ամսական հանույթը Ֆրանսիայում բարձրացավ 1913 թ. 3300 տ-ից մինչև 4400 տ. 1929 թ., իսկ չուգունի և պողպատի արտադրանքը 1913 թ. 434 հազ. և 391 հազ. տ. մինչև 871 հազ. և 805 հազ. տ. 1929 թ. համեմատ: Գերմանիայից խլված Ֆրանսիայի և նոր նահանգների կցման հետևանքով, յերկաթահանքի պաշարները Ֆրանսիայում ավելացան 100 տոկոսով, իսկ ածխի պաշարները—40 տոկոսով: Համաշխարհային առևտրում Ֆրանսիան բռնում է չորրորդ տեղը, ընդ վորում նրա մասնակցությունը համաշխարհային առևտրական շրջանառությունում կազմում է 6,2 տոկոս:

Ֆրանսիական արդյունաբերության արագ աճումը պատերազմից հետո, ագրարա-արդյունաբերական յերկրից Ֆրանսիային հանդիսանալով միաժամանակ բանկային կապիտալի յերկիր դարձրեց, ուժեղ զարգացած ինդուստրիալ յերկիր: Ֆրանսիական արդյունաբերության զարգացմանը և հատկապես մետաղագործությանը զուգընթաց զարգացավ ռազմական արդյունաբերությունը, դարձնելով Ֆրանսիան ուժեղ ռազմական արդյունաբերության բազա: Շնեյդերի և Վենդելի խոշոր մետաղագործական կոնցերները, վորոնք կազմակերպվել են Ֆրանսիայում, ուղղակի ազդեցություն են անում Ֆրանսիայի քաղաքականության վրա: Այդ կոնցերների կողմից մի քանի յերկրների (Բելգիայի, Ավստրիայի, Չեխո-Սլովակիայի և Լեհաստանի) մետաղագործական ձեռնարկությունների գրավումը նպաստում են ֆրանսիական ազդեցության ուժեղացմանը յեվրոպական մայր ցամաքում:



Արդյունաբերության զարգացման հետ Ֆրանսիայում սկսում է շտկվել և նրա ֆինանսական դրությունը, վորը խիստ ցնցված եր պատերազմի ժամանակ: Մինչև պատերազմը Ֆրանսիան համաշխարհային բանկիր եր, իսկ պատ. հետևանքով նա վարկատուից դարձավ պարտքատեր: Պատերազմի սկզբին Ֆրանսիան ուներ 45 միլիարդ ֆրանկ, վորը գտնվում եր արտասահմանում. պատերազմի հետևանքով կորցրեց այդ դրամագլուխների դրսի մասը, բայց արդեն 1927 թ. վերջին ֆրանսական կապիտալները, վորոնք գտնվում էյին արտասահմանում, նորից հասան 20 մլրդ. ֆրանկի: Դրա հետ միաժամանակ կատարվում է ֆրանսիական վալյուտայի կայունացումը (ստաբիլիզացիան), վոր խիստ ընկել եր պատերազմից հետո, և նկատվում է վոսկու հոսանք դեպի Ֆրանսիա: Այսպես, յեթե 1927 թ. Ֆրանսիայում վոսկին կազմում եր թղթադրամի շրջանառության 35 տոկոսը, ապա 1930 թ. սկզբին դա արդեն կազմում եր 48 տոկոսը:

Վերսալի դաշնագիրը, վոր զինաթափ արեց Գերմանիային և խլեց նրանից նրա բոլոր գաղութները և ամենահարուստ արդյունաբերական նահանգները, ապահովեց Ֆրանսայի ռազմական քաղաքական տիրապետությունը Յեվրոպայում: Ֆրանսիայի ամբողջ ճիգերն ուղղված էյին գրավածները պահպանելու համար, վորոնք ամրագործվում էյին Վերսալի թալանչիական հաշտությամբ: Այդ նպատակին հասնելու համար Ֆրանսիան խոչընդոտ է հանդիսանում հաշտության պայմանագրերի վերանայման բոլոր փորձերին, ամեն կերպ խանգարելով Գերմանիայի ռազմական և տնտեսական կարողության վերականգնմանը:

## 2. ՖՐԱՆՍԻԱՆ ՅԵՎ ԽՍՀՄ.

Բուրժուական բոլոր յերկրներից ամենից շատ Խորհրդային միության վերաբերմամբ թշնամի պետություն հանդիսանում է Ֆրանսիան:

Կապիտալիստական Ֆրանսիան ցարական Ռուսաստանի դաշնակիցն և վարկավորողն էր: Ցարական կառավարության փոխառությունները Ֆրանսիայում մինչև պատերազմը — բանակի բանվորների և գյուղացիների հեղափոխական շարժումը խեղդելու համար — և պատերազմի ժամանակ հասան ահուելի գումարների՝ 2 միլրդ. ռուբլուց ավելի: Այդ տեսակ պարտավորությունը ցարական Ռուսաստանին դարձրեց ֆրանսիական բանկիրների հլու գործիքը: Դրա շնորհիվ էլ Ֆրանսիական կապիտալիստներին հաջողվեց իրենց ձեռքը գցել Ռուսաստանի շատ հարստությունները, — նրանք իրենց ձեռքում ունեյին շատ գործարաններ, ֆաբրիկներ և հանքեր ամբողջ Ռուսաստանում, հատկապես հարավում՝ Դոնբասում: Ֆրանսական կապիտալիստների տիրապետությունները ցարական Ռուսաստանում ավելի շատ եյին քան մյուս բոլոր տարբերկրայինները միասին: Խորհրդային կառավարության հրաժարումը ցարական պարտքերը վճարելուց և օտարերկրյա ձեռնարկությունների ազգայնացումը ֆրանսական բուրժուազիային մղեցին գինալած կռվի Խորհրդային իշխանության դեմ: Ֆրանսիական բուրժուազիան ֆինանսավորում և զինում էր Դենիկինի, Վրանգելի, Կոլչակի, Սավինկովի սպիտակ գվարդիական բանակները, նույնպես և պանական Լեհաստանին Խորհրդային իշխանության դեմ կռվելու համար:

Միայն 1924 թ. Ֆրանսիան ճանաչեց ԽՍՀՄ, բայց ճանաչելուց հետո յել, պահպանելով դիվանագիտական հարաբերությունները ԽՍՀՄ հետ, ֆրանսիական կառավարությունը շարունակեց Խորհրդային Միության դեմ թշնամական քաղաքականություն վարել, Անգլիայի հետ գինելով և ստեղծելով մեր արեվմտյան հարևաններից բլոկ: Ֆրանսիան դաշնագիր և զինվորական կոնվենցիա յէ կնքել Ռումինիայի և Լեհաստանի հետ, որոնք ուղղված են ԽՍՀՄ դեմ:



Վերջին տարիները նշանակալից են Ֆրանսիայի հակախորհրդային գործունեյության ուժեղացմամբ և հակախորհրդային բլոկի պատրաստության մեջ իր վերջնական ամրացմամբ: Այդ գործունեյությունն իր արտահայտությունը գտավ ֆրանսիական գլխավոր շտաբի աշխատանքի աշխուժացմամբ մեր սահմանակից պետություններում, ֆրանսիական զինվորական ներկայացուցիչների Լեհաստան, Ռումինիա, և Մերձբալթյան յերկրները գնալով: Մամուլի տեղեկությունների համաձայն Ֆրանսիայի և Անգլիայի միջեվ 1928 թ. կնքված են գաղտնի համաձայնություններ, որը վերաբերում են նրանց ռազմային ուժերի գործողությունների համաձայնեցմանը, հետախույզ ծառայությանը և գաղութներում աշխատանքին և բոլոր այդ համաձայնություններն ուղղված են ուղղակի և կողմնակի կերպով Խորհրդային Միության դեմ: Սկսած 1929 թ., Ֆրանսիան պաշտպանում է յեվրոպական պետությունների միության կազմելու իր ծրագիրը, որը հայտնի յէ Պան-Յեվրոպա անունով, որի սուր ծայրն ուղղված է մի կողմից ԱՄՆ-ի և մյուս կողմից Խորհրդային Միության դեմ:

Ամբողջ 1929 թ. ընթացքում շարունակվում է ֆրանսիական գլխավոր շտաբի աշխույժ աշխատանքը նոր ինտերվենցիա պատրաստելու ԽՍՀՄ-ի դեմ:

Ինչպես յերեվում է «արդկուսակցության» հակահեղափոխական կազմակերպության անդամների ցուցմունքներից, 1928–1929 թ. թ. ընթացքում ամուր կապ է հաստատվում ֆրանսիական գլխավոր շտաբի, սպիտակ գվարդիական կազմակերպությունների՝ «Տորգպրոմի» և «արդյունաբերական կուսակցության» միջեվ: Ֆրանսիական գլխավոր շտաբին կից ստեղծվել էր հատուկ հանձնաժողով ԽՍՀՄ դեմ ինտերվենցիա պատրաստելու համար և մշակված էր այդ ինտերվենցիայի պլանը:

Վերջին յերկու տարիների անցքերն ստիպեցին կա-

պիտալիստական աշխարհին, և առաջին հերթին Ֆրանսիային, շտապել ինտերվենցիայի իր պատրաստությամբ: Սոցիալիստական շինարարության հաջողությունները զրկեցին միջազգային բուրժուազիայի վերջին հույսերից՝ վերասերել Խորհրդային Միությունը, իսկ կոլեկտիվացման աճումն և այդ հիմունքով կուլակի վորպես դասակարգ վերացումը կապիտալիստներին զըրկեցին Խորհրդային Միությունում վերջին հենարանից:

Այդ յերևույթի արագացումը պահանջող նոր փակտոր հանդիսանում է համաշխարհային տնտեսական կրիզիսը և հեղափոխական շարժման աճումն ամբողջ աշխարհում: 1929 թ. վերջը և ամբողջ 1930 թ. լի յեն փաստերով, վորոնք վկայում են զինված կոնֆլիկտի մոտալուտ լինելը կապիտալիստական աշխարհի և Խորհրդային Միության միջև: Այդ մասին են խոսում մի շարք կամպանիաները, վոր կազմակերպել է կապիտալիստական աշխարհը, նպատակ ունենալով մեզ հետ կռվի բարոյական պատրաստությունը:

Բոլոր այդ կամպանիաներում գործոն մասնակցում է Ֆրանսիան. նա հանդիսանում է ԽՍՀՄ դեմ անտեսական պատերազմի գլխավոր կազմակերպողը, վորպիսին հայտարարել են բուրժուական մի շարք յերկրներ: Ֆրանսիան խորհրդային «դեմպինգի» դեմ կռվի անվան տակ, յեվրոպական յերկրներից կազմում է զինվորական բլոկ, վորն ուղղված է Խորհրդային Միության դեմ: Բալկանյան ագրարային յերկրների և Լեհաստանի կոնֆերանսներն, Բալկանյան պետությունների կոնֆերանսներն Աթենքում, վերջապես Ֆրանսիայի փորձերն Ազգերի Լիգայի միջոցով տնտեսական միջոցառումների յե տանում—այդ բոլորը խոսում են Ֆրանսիայի լարված աշխատանքի մասին հակախորհրդային բլոկ կազմելու համար:

## 3. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԻԼԻՏԱՐԻԶՄԸ.

Ֆրանսիայի արտաքին քաղաքականության հիմնական ձգտումները վորոշելու համար ամենից ցուցադրականը հանդիսանում է նրա վերաբերմունքը դեպի Գերմանիան: Մի կողմից՝ Ֆրանսիան ձգտում է գի-



ջումների ճանապարհով գերմանական բուրժուազիային դարձնել նրան իր դաշնակիցն իմպերիալիստական քաղաքականության մեջ և օգտագործել նրա ԽՍՀՄ դեմ պատերազմ պատրաստելու համար: Մյուս կողմից Ֆրանսիան ամեն կերպ կռվում է Գերմանիայի ամեն տեսակ փորձերի դեմ հասնելու հաշտության պայմանագրերի վերանայմանը և յեռանդով հետևում է այն բանին, վորպեսզի հնարավորություն չտալ Գերմանիային ուղղվելու:

Իր իմպերիալիստական քաղաքականությունն ապահովելու համար Ֆրանսիան կնքել է մի շարք պայմանագրեր իրեն յենթակա պետությունների հետ, ինչպես՝ Լեհաստանի, Ռումինիայի, Չեխո-Սլովակիայի, Հարավ-Սլավիայի և Բելգիայի հետ:

Այդ բոլոր պայմանագրերը յերկու տեսակ նպատակ ունեն. առաջին՝ նրանք ուղղված են համաշխարհային պատերազմի հետևանքով հաղթող պետությունների գրավածներն ապահովելու համար կամ, այլ խոսքերով, ապահովելու Ֆրանսիայի զինվորական և քաղաքական գերակշռությունը Յեվրոպայում. յերկրորդ՝ նրանք նպատակ ունեն պայքար կոմունիստական վտանգի դեմ և գլխավորապես կռիվը Խորհրդային Միության դեմ:

Իր բազմաթիվ գաղութներն իրեն յենթակա պահելու, Վերսալի կողոպտիչ դաշնագրի անձեռնմխելիությունն ապահովելու և իմպերիալիստական քաղաքականություն վարելու համար, Ֆրանսիան պատերազմից հետո պահում է աշխարհում ամենամեծ բանակ, (վորի քանակն է 678 հազար մարդ): 1923 թ. մինչև 1930 թ. Ֆրանսիայի ռազմական բյուջեն 211 միլ. դոլլարից հասավ մինչև 435 միլ. դոլլարի: Ֆրանսիան հատուկ ուշադրություն է դարձնում ռազմական տեխնիկայի վրա: Ֆրանսիայի օդային նավատորմիղը՝ նույնպես ամենամեծն է աշխարհում (մոտ 3000 սավառնակ): Վերջին ժամանակներս մեծ ուշադրություն է դարձնում ծովային նավատորմիղի վրա: Միմիայն ցամաքային զինված ուժերի վրա Ֆրանսիան ծախսում է իր յեկամուտների

5-երորդ մասից ավելին։ Ֆրանսիայում հազար հոգուն ընկնում է 17 զինվոր (ԽՍՀՄ՝ 3,8)։ Անընդհատ սպառազինումները ահռելի ծախսեր են պահանջում, որը խիստ անդրադառնում է ֆրանսիական աշխատավորության կյանքի մակարդակի վրա։ Ֆրանսիայի իմպերիալիստական քաղաքականությունն ընդհարում է նրան այլ իմպերիալիստների հետ։ Ամերիկային ունեցած պարտքերի մասին հարցը ավելի ևս բարդացնում է Ֆրանսիայի միջազգային դրությունը։ Իսկ ֆրանսիական հսկայական բանակը և նրա չդադարող սպառազինումը— ուղղակի սպառնալիք է խաղաղությանը։ 1928 թ. ամառը Ֆրանսիայի և Անգլիայի միջեվ կնքված է գաղտնի ռազմական համաձայնություն, վորը նախատեսել է այդ տերությունների ռազմա-ծովային համագործակցությունը, վորը մի կողմից իր սուր ծայրով ուղղված է ԽՍՀՄ դեմ և մյուս կողմից՝ ամերիկական իմպերիալիզմի դեմ։ Այդ համաձայնությունը հսկայական չափով սրում է հակասությունն ամերիկյան և անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի միջեվ և հանդիսանում է խաղաղության ուղղակի սպառնալիք և ազդակ ֆրանսիական միլիտարիզմի նոր աճման համար։ Իր իմպերիալիստական քաղաքականության մեջ ֆրանսիական բուրժուազիան կատարյալ աջակցություն է գտնում սոցիալ-դավաճանների կողմից։ Ֆրանսիական «սոցիալիստները» պատրաստեցին յերկրի պաշտպանության ռեակցիոն օրենքը, վոր ուղղված էր նրան, վորպեսզի բանվորական կազմակերպությունները պատերազմի դեպքում տրամադրվեն բուրժուազիային։ Ֆրանսիական «սոցիալիստները» ներկայացնում են ֆրանսիական բուրժուազիային իմպերիալիստական Ազգերի Լիգայում։ Ֆրանսիական «սոցալիստները» ամեն կերպ օգնում են ամրացնելու Ֆրանսիայի մարտական հզորությունը։ Ֆրանսիական «սոցիալիստների» ձեռքերով բուրժուազիան խեղդել է հեղափոխական շարժումը գաղութներում։



## 4. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՅԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ.

Համաշխարհային տնտեսական կրիզիսն սկսում է ընդգրկել նաև Ֆրանսիային և սրում է այդ յերկրի ներքին հակասությունները։ Գործազրկությունը թափանցել է ֆրանսիական ինդուստրիալ բանվորների շարքերը, վոր մինչեվ այժմ համարյա ծանոթ չէր այդ չարիքի հետ։

Ռեպարացիաների ոգտագործումը ավերված նահանգների վերականգնման համար, ֆրանսիական արդյունաբերության արագ աճումը և ոտարերկրյա բանվորների դեպի Ֆրանսիա հոսանքի բանիմաց կանոնավորումը, հնարավորություն տվին ֆրանսիական արդյունաբերությանը լրիվ բեռնվածությամբ աշխատել մինչեվ այժմ անընդհատ և Ֆրանսիային ազատեցին մեծ գործազրկություններից։ Ներկայումս այդ միջոցները հանդիսանում են արդեն անբավարար,—կրիզիսն և գործազրկությունն ընդգրկել են և այդ յերկիրը։

Կրիզիսն անդրադարձել է վոչ միայն արդյունաբերության վրա, այլ և գյուղատնտեսության վրա։ Գյուղատնտեսության դրությունն առանձնապես ծանր է, վորովհետեվ նա արդեն վաղուց զգում է մեծ դժվարություններ։ Վերջին տարիների ընթացքում նկատելի յե մշակվող հողի տարածության կրճատում Ֆրանսիայում և ֆերմերների և բատրակների հոսանք գյուղից դեպի քաղաք։ Գյուղի աստիճանաբար աղքատացումն առաջ բերեց յերկյուղ ֆրանսիական բուրժուազիայի մեջ, վոր դա կուժեղացնի հեղափոխական տրամադրությունները յերկրում և ֆրանսիական խոշոր բուրժուազիան կկորցնի հուսալի պատվար մանր-բուրժուական մասսաների մեջ, վորի վրա նա հենվում էր բոլոր ընտրական կամպանիաների ժամանակ։ Սակայն բոլոր այն արհեստական միջոցները, վորոնք ձեռք են առնել մինչեվ այժմ այդ յերեվույթի առաջն առնելու համար, մնացին անհետեվանք։ Համաշխարհային տնտեսական կրիզիսն անկասկած կարագացնի այդ պրոցեսը և ավելի կբարդացնի—ընդհանուր պարագան Ֆրանսիայում։

Ֆրանսիայի աշխատավոր մասսաները սկսում են դուրս գալ սոցիալ-դավաճանների ազդեցության տակից և աստիճանաբար հեղափոխականանում են: Տնտեսական կրիզիսը, հարկային ճնշումն և թանկությունն առաջ են բերում Ֆրանսիայի աշխատավորության կռվի սրումը բուրժուազիայի դեմ:

Վերջին տարիները մենք տեսնում ենք գործադուլային շարժման զգալի աճում: Այդ կռիվը ղեկավարում է Կոմկուսակցությունը, որն ունի 56 հազար անդամ և մեծ ազդեցություն ունի աշխատավոր մասսաների վրա: Վերջին ժամանակներս զգալիորեն մեծացել է կոմունիստների ազդեցությունը բանակում և հատկապես նավատորմում: Ֆրանսիական Կոմկուսակցությունը ղեկավարում է հեղափոխական արհմիությունները: Ֆրանսիական Կոմկուսակցությունը մերկացնում է ֆրանսիական բուրժուազիայի կողմից կատարվող պատրաստությունը նոր պատերազմի համար: Ֆրանսիական Կոմկուսակցությունը կարողացավ յեռանդուն աշխատանք կատարել զորքերի մեջ Մարոկկոյի հետ պատերազմի ժամանակ: Ֆրանսիական կոմունիստները մերկացրին Ֆրանսիայի ԽՍՀՄ վրա նոր հարձակման պատրաստությունը:

Մոբիլիզացիայի յենթարկելով հարյուր հազարավոր բանվորներ պատերազմի վտանգի դեմ պայքարելու լոզունգով, ֆրանսական կառավարությունը բոլոր միջոցներով կռվում է ֆրանսական կոմկուսակցության դեմ, ձերբակալելով առաջնորդներին, փակելով թերթերը և այլն:

## 5․ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Ֆրանսիայում գոյություն ունի ընդհանուր զինապարտություն: 21 տարիքին հասած բոլոր քաղաքացիները կանչվում են զինվորական ծառայության: Զորակոչը տեղի յե ունենում տարեկան 2 անգամ, գարնանը (ապրիլ–մայիս) և աշնանը (հոկտեմբեր–նոյեմբեր): Զինվորական ծառայությունը շարունակվում է 28 տարի, որից 1 տարի շարքում, 3 տարի ռազմական մի-



նիստրի տրամադրության տակ, որից հետո հաշվվում են 1-ին կարգի ոժանդակ 16 տարի և 2-րդ կարգի ոժանդակ —8 տարի:

Մարդկային ուժերի մեծ պակասության հետևանքով մեծ չափով գործադրվում է կամավորականությունը՝ համալրվում են բանակի համար ոչ միայն ֆրանսական քաղաքացիք, այլ և ոտարերկրացիները: Վերջիններից կազմված են հատուկ ոտարերկրացիների լեգեոններ (գնդեր), որոնք դասավորված են Աֆրիկայի գաղութներում: Բացի դրանից, ֆրանսական կառավարությունը լայնորեն համալրում է զինվորական ծառայության մի տարվա ժամկետն անցածներին գերակետիկ ծառայության համար: Վերջիններիս տոկոսը տարեց-տարի աճում է և ներկայումս հասնում է բանակի ամբողջ քանակի 50 տոկոսին:

Գաղութներում զինվորական ծառայության համար համալրվում են բնիկները գաղութային հատուկ զորքերի համար ծառայության 1-ից մինչև 5 տարի ժամկետով:

Ֆրանսիայի զինված ուժերը բաղկացած են ցամաքային բանակից, ռազմական ծովային նավատորմից և ռազմական ոդային ուժերից:

Ֆրանսիայի տերիտորիան բաժանվում է 20 ոկրուգի, որից 13 ոկրուգը յերկրի ներսումն է գտնվում և 7 ոկրուգ՝ Ֆրանսիայի սահմանների վրա: Յուրաքանչյուր ոկրուգի գլուխ կանգնած է նրա տերիտորիայում դասավորված բանակային կորպուսի հրամանատարը:

Ֆրանսիայում կա զորքերի 6 տեսակ՝ հետևակ, հեծելազոր, հրետանի, ճարտարագիտական զորքեր, ոդային նավատորմ և ծովային նավատորմ: Հեծանվային մասերն ու տանկերը մտնում են հետևակի կազմի մեջ. զրահապատ մասերը՝ հեծելազորի կազմի մեջ:

Ոգնական զորամասերը «ծառայությունների» անվան տակ մտնում են զորքերի համապատասխան տեսակների մեջ և կազմում են հատուկ «ոգնական» ծառայություններ, ինչպես որինակ՝ ինտենդանտային (մատակարարման) ծառայություն և այլն:

Ֆրանսական բանակը, բացի կրկնողական հավաքների կանչվող 60.000—120.000 հոգուց, 1929/30 թըվին ուներ 317.000 մարդ :

Բացի կանոնավոր բանակից, գոյություն ունի նաև ժանդարմերիա ու հանրապետական գվարդիա :

Ժանդարմերիան հավաքագրվում է բանակում ծառայած անձերից, բաժանվում է լեգեոնների ըստ ռազմական շրջանների քանակի : Նրա թիվն է 33.000 մարդ, որոնց մի քառորդը՝ հեծյալ : Նա իրենից ներկայացնում է ռազմական ոստիկանություն և կոչված է պայքարելու համար գործերում հեղափոխական շարժման դեմ :

Հանրապետական գվարդիան օժանդակ դեր է խաղում, ունենալով մոտ 2000 հոգի : Նա համալրվում է մանր բուրժուազիայի շարքերից :

Գաղութային բանակը բաղկացած է մասամբ սպիտակներից և մասամբ սևամորթ բնիկներից. նրա թիվը 1929/30 թ. յեղել է 150.910 հոգի, չհաշված գաղութային այն զորամասերը, որոնք դասավորված են Ֆրանսիայում և գաղութային մի քանի զորքերը, որոնք անմիջորեն ենթարկվում են գաղութային մինիստրին :

Գաղութային զորքերի կազմի մեջ մտնում են յերկու օտարերկրացիների լեգեոն, 6 գունդ զուավներ, 46 մարոկկոյական և ալժիրական հրաձիգ գունդ, 15 սենեգալյան գունդ, 12 սպահիների գունդ (բնիկների հեծելազոր է ֆրանսացի սպաներով) և այլն, համապատասխան քանակի թեթև, լեռնային ու ծանր հրետանիով : Գաղութային բանակը աչքի յե ընկնում հատուկ դաժան կարգապահությամբ և ծառայության չափազանց ծանր պայմաններով :

Ռազմածովային նավատորմ : Իր գերիշխանությունը Միջերկրական ծովում պահպանելու և իր հսկայական ծովային սահմանների պաշտպանության համար Ֆրանսիան ունի լավ ծովային նավատորմ : Ներկայումս Ֆրանսիական ծովային նավատորմն ունի 1-ին կարգի 6 գծանավ, 2-րդ կարգի 3 գծանավ, 1-ավիամատկա, 3 զրահապատ հածանավ, 11 արագընթաց հածանավ, 68



ականանավ, 55 սուզանավ և մի չարք մանր ռազմանավ :

Ռազմածովային նավատորմի պահպանման ծախսերը 1930 թվին հասել են 2.583.000 ֆրանկի (ֆրանկը=7 կոպեկի) :

Ռազմածովային նավատորմի համալրումը տեղի է ունենում մասամբ մերձափնյա բնակիչների զորակոչի և մասամբ կամավոր հավաքագրման միջոցով :

Ռազմաօդային նավատորմ : Ֆրանսիայի բոլոր օդային ուժերը համախմբված են ավիացիայի մինիստրի ձեռքում : Ռազմական ավիացիայի թիվն է՝ 36.000 բա- սպա ու զինվոր : Նրանք կազմում են 14 ավիագունդ և 5 առանձին ավիաբաժնյակ, որոնց ընդհանուր քանակն է 135 նավախումբ (էսկադրիլյա) :

Ամբողջ Ֆրանսիայում կան.— 42 հետախուզական նավախումբ, 32կործանիչ նավախումբ, 20 ցերեկվա ռմբակոծող նավախումբ և 12 գիշերային ռմբակոծող նավախումբ : Ռազմական սավառնակների թիվն է շարքում 1.730, իսկ ընդամենը Ֆրանսիան ունի մոտ 3000 ռազմական սավառնակ : Բացի դրանից, կա դիրիժաբլների 2 գունդ :

Ավիացիայի պահպանման համար ընդհանուր ծախքը 1930 թվին կազմել է 2.083.611.720 ֆրանկ (որից՝ 459.440.060 ֆրանկ՝ քաղաքացիական ավիացիայի համար) : Ֆրանսիական օդային նավատորմը համարվում է ամենահզորը և խոսակցությունների մշտական առարկա է հանդիսանում քաղաքական բոլոր կոնֆերանսներում ու մեծ սպառնալիք է ներկայացնում հարևանների համար :

Այսպիսով Ֆրանսիան հանդիսանում է ամենահզոր-կու իմպերիալիստական պետությունը, որն ունի առաջնակարգ բանակ՝ մոտոկարարված ամենակատարելագործված զենքով և հագեցված կրակային միջոցներով :

# VI. ԱՆԳԼԻԱ

1. Ընդհանուր տեղեկություններ.— 2. Անգլիան համաշխարհային պատերազմից հետո.— 3. Բանակն ու նավատորմը.— 4. Հեղափոխական շարժման աճումը.— 5. Անգլիան ու ԽՍՀՄ:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անգլիա կամ Մեծ Բրիտանիա, կոչվում է Արևմտյան Յեվրոպայի այն պետությունը, վոր գրավում է Մեծ-Բրիտանիա կղզին, մի շարք հարակից մանր կղզիներ և Իռլանդիա կղզու հյուսիսային մասը: Մինչև 1922 թիվը Մեծ Բրիտանիա կղզին ու ամբողջ Իռլանդիան կազմում եյին, այսպես կոչված, Միացյալ թագավորություն: Բայց 1922 թվին ազատագրական համառ պայքարից հետո Իռլանդիայի մեծ մասը կազմեց «Ազատ Իռլանդական Պետություն», իսկ Իռլանդիայի հյուսիս-արևելյան մասը միացավ Մեծ Բրիտանիային, վորպես առանձին մաս իր սեփական պարլամենտով: Մեծ Բրիտանիա կղզու վրա գտնվում են նրա հետևյալ բաղադրիչ մասերը՝ բուն Անգլիան, Ուելս ու Շոտլանդիա: Մեծ Բրիտանիան ու Հյուսիսային Իռլանդիան մոտիկ գտնվող մանր կղզիներով բռնում են 244·104 կիլոմետր տարածություն, 44·170·000 հոգի բնակչությամբ:

Մեծ Բրիտանիայի (սովորաբար ասում են Անգլիա) նշանակությունն ու քաղաքական կշիռը կախված է ամենից առաջ նրանից, վոր նա բրիտանական հսկայական կայսրության միջուկն է կամ գլխավոր պետությունն է. իսկ Բրիտանական կայսրությունը գրավում է յերկրագնդի ցամաքի $1/4$ մասը և նրա բնակչության $1/4$-ից ավելին, ունենալով 449 միլիոն հոգուց ավելի բնակ-



չություն: Բրիտանական կայսրության բոլոր բաղադրիչ մասերը ցրված են ամբողջ յերկրագնդով մեկ և ներկայացնում են իրենցից յերկրներ, վորոնք յերբեմնի հափշտակվել են Անգլիայի կողմից: Նրանք բոլորն էլ փոքր ի շատե սերտորեն կապված են Անգլիայից ու յենթարկվում են նրան: Ներկայումս Բրիտանական կայսրությունը բաղկացած է հետևյալ մասերից.- 1) Անգլիա, կամ Մեծ Բրիտանիա, վորը հանդիսանում է մետրոպոլիան, այսինքն՝ բրիտանական կայսրության գլխավոր պետությունը, 2) դոմինիոններ, այսինքն՝ պետություններ, վորոնք մտնում են բրիտանական կայսրության կազմի մեջ, բայց վորոշ ինքնուրույնություն ունեն և համարվում են ավտոնոմ. 3) Հնդկաստան, 4) գաղութներ և պրոտեկտորատներ. 5) մանդատային յերկրամասեր: Դոմինիոններ թվում են. Կանադան, Նյուֆաունդլենդը, Իռլանդական ազատ պետությունը, Զելանդիան. Հնդկաստանը միջին տեղն է բռնում դոմինիոնի և գաղութների միջև. այսինքն՝ փոքրիշատե ինքնուրույն պետության և այնպիսի իրավազուրկ յերկրի միջև, ինչպիսին է գաղութը: Գաղութներն իրենց հերթին բաժանվում են՝ ինքնուրույն գաղութների, վորոնք վորոշ ինքնուրույնություն ունեն, բայց յենթարկվում են անգլիական պարլամենտին (ինչպես որինակ՝ Հարավային Ռոդեզիան և Մալթան) և այնպիսի գաղութների, վորոնք մինչև իսկ ամենաթույլ ինքնուրույնություն չունեն և ղեկավարվում են անգլիական գեներալ-նահանգապետներով: Պրոտեկտորատներ կոչվում են այն յերկրները, վորոնք գաղութներից տարբերվում են նրանով, վոր ձևականորեն չեն մտնում բրիտանական կայսրության կազմի մեջ, բայց փաստորեն յենթարկվում են Անգլիային: Մանդատային յերկրամասերը գերմանական ու թյուրքական նախկին գավառներն են, վորոնք ղեկավարվում են Անգլիայի կողմից Ազգերի Լիգայից ստացած մանդատով: Վորպես նման յերկրների որինակ կարող են ծառայել Պաղեստինն ու Իրաքը:

Հասկանալու համար, թե ինչպիսի նշանակություն ունի բրիտանական կայսրությունը համաշխարհային

տնտեսության մեջ, բավական է մատնանշել, որ բրիտանական կայսրության մասնակցությունը համաշխարհային առևտրական շրջանառության մեջ կազմում է 32 տոկոսից ավելի կամ 41 միլիարդ ռուբլուց ավելի: Անգլիայի (այսինքն՝ Բրիտանական կայսրության գլխավոր երկրի) մասնակցությունը համաշխարհային առևտրական շրջանառության մեջ կազմում է 13 տոկոս (1929 թ.), կամ մոտ 18 միլիարդ ռուբլի:

Բրիտանական կայսրության մեջ առաջանում է քարածխի համաշխարհային հանույթի 25 տոկոսը և ոսկու համաշխարհային հանույթի 50 տոկոսը:

Անգլիական բուրժուազիան մյուսներից ավելի վաղ գրավեց հեռավոր ծովախորշներում բնակեցված հսկայական տերիտորիաներ աշխարհի բոլոր մասերում և վերածեց այն իր գաղութների:

Անգլիական հզորությունն ու նրա հարստությունը հիմնված են նրա բազմաթիվ գաղութների հափշտակության վրա: Բազմաթիվ գաղութներ ունենալը անգլիական բուրժուազիայի ձեռքն է տվել հսկայական հարստություններ ու անգլիական ապրանքների սպառման համար ամենաընդարձակ շուկաներ: Անգլիական բուրժուազիան գաղութային ժողովուրդներին դարձրել է իր ստրուկները, անխնա շահագործելով նրանց և նրանցից առնելով կատաղի գերվաստակ: Շնորհիվ այդ բոլորի Անգլիան դարձել է աշխարհի առաջին արդյունաբերական ու առևտրական երկիրը: Իր այդպիսի դրությունն Անգլիան պահպանել էր համարյա մինչև համաշխարհային պատերազմը:

Կուտակելով իր ձեռքում հսկայական կապիտալներ, անգլիական բուրժուազիան այդ կապիտալները տեղավորում էր գաղութների արդյունաբերական ձեռնարկությունների մեջ և արտասահմանում և այնտեղից քամում էր մեծ եկամուտներ: Այդ բոլորը նպաստում էր այդ երկրների ավելի մեծ ստրկացմանն անգլիական կապիտալի ձեռքով: Գաղութներում և տարբերկրյա պետություններում տեղավորված անգլիական կապիտալի ընդհանուր գումարը կազմում էր մոտ 40 միլիարդ



ոսկի ռուբլի, իսկ դրանից ստացած եկամուտը հասնում էր տարեկան մոտ 3 միլիարդ ռուբլու: Ոտարերկրյա պետությունների ու իր գաղութների հետ առևտուր անելու համար Անգլիան ստեղծել էր հսկայական առևտրական նավատորմ, վորի ընդհանուր տարողությունն ավելի էր քան 20 միլիոն տոնն և կազմում էր համաշխարհային նավատորմի տարողության 30 տոկոսը: Միայն այդ նավատորմից ստացած եկամուտը տալիս էր տարեկան մեկ միլիարդ 300 միլիոն ռուբլի:

## 2. ԱՆԳԼԻԱՆ ՀԱՄԱՇԽԱՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Արդեն 1914 թվի պատերազմի նախորեյին անգլիական բուրժուազիայի հզորությունը սկսեց յերերալ: Արագ զարգանում եյին այնպիսի յերիտասարդ կապիտալիստական յերկրներ, ինչպիսին եյին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Գերմանիան. նրանք անցնում եյին Անգլիայից: Հատուկ սպառնալիք եր ներկայացնում Գերմանիան, վորը ձգտում եր խախտել Անգլիայի գաղութային ու ծովային հզորությունը: Հատկապես այդ պայքարն եր 1914–1918 թ.թ. համաշխարհային պատերազմի ամենագլխավոր պատճառը: Այդ պատերազմում Անգլիան ջախջախեց իր ախոյանին՝ Գերմանիային: Սակայն պատերազմը զգալի չափով թուլացրեց անգլիական կապիտալի հզորությունը, քայքայեց անգլիական կապիտալիստական տնտեսությունը:

Պատերազմն ամենից առաջ անդրադարձավ անգլիական գաղութների տնտեսության վրա: Այն ժամանակ, յերբ Անգլիան զբաղված եր պատերազմով, գաղութների արդյունաբերությունն ամրացավ և սկսեց անգլիական ապրանքների ավելի քիչ կարիք զգալ: Անգլիական ապրանքների սպառումը գաղութներում նվազեց,— այդ առաջին հարվածն եր անգլիական արդյունաբերության ու առևտրին: Պատերազմի ընթացքում տնտեսապես անչափ ուժեղացան Ամերիկայի Միացյալ Նահանգները, վորոնք ծավալեցին իրենց արդյունաբերությունն ու առևտուրը և սկսեցին համաշխարհային շուկաներից վանել անգլիական ապրանքները: Դրա հե-

տեխնիքով անգլիական արդյունաբերությունն ու առևտուրն ընկան և մի շարք ճյուղերում մինչև այժմ ել չեն հասել նախապատերազմյան մակարդակին:

Պատերազմից առաջ համաշխարհային առևտրի մեջ Անգլիայի բաժինը կազմում եր 15,2 տոկոս, իսկ Ամերիկայի Մ. Նահանգների բաժինը՝ 11,2 տոկոս, 1929 թվին Անգլիայի բաժինը կազմում եր 13,2 տոկոս, Միացյալ Նահանգներինը՝ 14 տոկոս: Նույնպիսի պատկեր ե նկատվում նաև գաղութների, դոմինիոնների և կախյալ յերկրների հետ ունեցած առևտրում: Համաշխարհային ասպարեզ դուրս յեկած ամերիկյան կապիտալիզմն ավելի ու ավելի յե ճնշում Անգլիայի ծերացող իմպերիալիզմին թե՛ Ասիայում (Չինաստան), թե Ամերիկայում (Լատինական Ամերիկայի յերկրներ) և թե՝ Յեվրոպայում:

Անգլիական կապիտալիզմի հզորությունը խախտված ե, նա կանգ ե առել, զարգացման մեջ յետ ե մնում առաջավոր կապիտալիստական յերկրներից: Նըման դրությունը սպառնում ե անգլիական կապիտալիզմին ավելի մեծ վտանգներով թե՛ յերկրի ներսում և թե՛ յերկրից դուրս:

Համաշխարհային քաղաքականության բնագավառում Անգլիան ավելի ու ավելի յե կորցնում իր վաղեմի առաջնակարգ դերը: Նա ստիպված ե ավելի ու ավելի մեծ չափով հաշվի առնել ամերիկական իմպերիալիզմը:

Սակայն անգլիական իմպերիալիզմը առանց կռվի չի թողնում իր դիրքերը, նա զիջում ե միայն խիստ մեծ ճնշման տակ և պատրաստվում ե վճռական բռնամարտի (կատաղի «մրցակցություն» Ամերիկայի ու Անգլիայի միջև ծովային սպառազինումների ավելացման մեջ, վորոնք գունավորվում են յերկու յերկրների դիվանագետների փոխադարձ «բարեկամության» մասին քաղցր զրույցներով):

Մակդոնալդի այդ քաղցր զրույցների ու Ամերիկայի հետ կնքած դաշնագրի յետևում թաղնված ե հարաճուն հակասություններն այդ յերկրների միջև:



Անգլիայի և Ամերիկայի միջև այդ հակասությունը հանդիսանում ե արդի միջազգային դրության առանցքը:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը սաստիկ անդրադառնում ե անգլիական փտող կապիտալիզմի վրա: Արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1930 թվին կրճատվել ե 12 տոկոսով. պողպատի արտադրությունը կրճատվել ե 24 տոկոսով, չուգունի ձուլումը՝ 16 տոկոսով: Անգլիան կորցրեց արտահանման մեջ իր ունեցած յերկրորդ տեղը. նրա արտահանումը 1930 թվին կրճատվել ե 21,6 տոկոսով:

Ճգնաժամն ավելի ու ավելի յե սրում հակասությունները Անգլիայի ու Ամերիկայի միջև, Անգլիայի ու Ֆրանսիայի միջև և այլն: «Միանգամայն հասկանալի յե, վոր այդ պարագայում, այսպես կոչված պացիֆիզմը ապրում ե իր վերջին որերը: Ազգերի Լիգան կենդանի ձևով նեխում ե և զինաթափման նախագծերն անդունդն են գլորվում, իսկ ծովային սպառազինությունների կրճատման կոնֆերանսները վեր են ածվում ծովային նավատորմի վերանորոգման ու ընդարձակման կոնֆերանսների» (Ստալին):

## 3. ԲԱՆԱԿՆ ՈՒ ՆԱՎԱՏՈՐՄԸ

Յենթարկված դրության մեջ պահելու համար գաղութները և թույլ չտալու համար, վոր ուրիշ իմպերիալիստական պետություններ գրավեն այդ գաղութները Անգլիան պահում ե մեծ բանակ ու նավատորմ, անընդհատ ավելացնելով իր սպառազինությունները: Անգլիական ծովային նավատորմը մեծագույնն ե ամբողջ աշխարհում: Ցամաքային բանակում նա ունի 356000 մարդ, ծովային նավատորմում՝ 103·000 մարդ, ոդային նավատորմում՝ 43,000: Բացի դրանից, դոյություն ունի յերկրային բանակ, վորը հաշվվում ե 405·000 մարդ: Անգլիական նավատորմի ու բանակի մեծ մասը գտնվում ե գաղութներում:

Կղզու դրությունն ու աշխարհիս ամենաուժեղ ծովային նավատորմ ունենալը մի ժամանակ լիովին ա-

պահովում էին թե՛ Անգլիայի և թե՛ նրա բազմաթիվ գաղութների անվտանգությունը: Սակայն ավիացիայի զարգացումով և համաշխարհային իմպերիալիստական քաղաքականության մեջ Ամերիկայի Միացյալ Նահանգների մտնելով, այդ դրությունն զգալիորեն փոխվել է: Օդային նավատորմի ուժով Անգլիան բավական յետ է մնում Ֆրանսիայից, իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգների ծովային նավատորմը քանակով հավասարվել է անգլիականին: Այս բոլորը ստիպում է Անգլիային հատուկ ուշադրություն նվիրել իր ծովային ուժին, հսկայական գումարներ ծախսել իր սպառազինության վրա, որը ծանր ազդեցություն է գործում նրա առանց այն էլ դժվարին տնտեսական դրության վրա: Ռազմական կարիքների համար Անգլիան իր գաղութներով տարեկան ծախսում է 2 միլիարդ ռուբլի (1927 թ.): Անգլիայի յուրաքանչյուր բնակչին ընկնում է 25 ռուբլի ռազմական ծախք (ԽՍՀՄ ընկնում է 4 ռուբլուց մի փոքր ավելի):

## 4. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՃՈՒՄԸ

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը մերկացնում է ու սրում Անգլիայի ու նրա գաղութների միջև յեղած հակասությունները: «Այդ փաստ է, որ յեվրոպական բուրժուազիան այժմ գտնվում է պատերազմի դրության մեջ «իր» գաղութների հետ Հնդկաստանում, Հնդկաչինում, Ինդոնեզիայում, Հյուսիսային Աֆրիկայում» (Ստալին): Գաղութներում և Արևելքի յերկրներում անընդհատ աճում է ազատագրական շարժումը, որի նպատակն է անգլիական իմպերիալիզմի լծի տապալումը: Մեր հեղափոխության օրինակը պայքարի յե հանում անգլիական գաղութների աշխատավորներին: Այդ փաստն ամենագլխավոր պատճառն է այն ատելության, որին անգլիական իմպերիալիստները տածում են դեպի ԽՍՀՄ: Անգլիական իմպերիալիզմը բազմազան միջոցներով ճնշում է այդ շարժումը, գործադրում է դաժան ռեպրեսիաներ գաղութների աշխատավորության դեմ, թեթև բաժին է տալիս գաղութների բուրժուազիային և այլն: Սակայն պայքարն



ավելի ու ավելի յե սրվում և սպառնում է Անգլիային գաղութների կորստով:

Ճգնաժամն առանձնապես խիստ անդրադարձավ Անգլիայի բանվոր դասակարգի դրության վրա: Առ 2-ն փետրվարի 1930 թ. Անգլիայում ցուցակագրված էր 2.624.000 գործազուրկ, այսինքն 1.116.000 հոգով ավելի, քան նախընթաց տարվա նույն ամսաթվին էր:

Մասսայական գործազրկությունը և բանվոր դասակարգի դրության վատթարացումը (ռեալ աշխատավարձի իջեցումը և բանվորական օրվա ավելացումը) հեղափոխականացնում է բանվոր դասակարգին, սրում է դասակարգային պայքարը:

Արդեն իսկ 1925 թվի անգլիական ընդհանուր գործադուլը, ինչպես նաև ածխահանների գործադուլը ծանր հարված հասցրին անգլիական կապիտալին: Այդ հարվածը անգլիական կապիտալիստները վերագրում են ԽՍՀՄ հեղափոխական ազդեցությանը և նրա օգնությանը, որ ցույց տվեց գործադուլավոր բանվորներին: Այդ բոլորը չափից դուրս սրեց նրանց թշնամությունը ԽՍՀՄ դեմ:

Անգլիական կապիտալիստները անգլիական արհմիությունների ու անգլիական բանվորական կուսակցության դավաճան առաջնորդների օգնությամբ ձգտում են ձախողել անգլիական պրոլետարիատի դասակարգային պայքարը, քարոզելով «արդյունաբերության մեջ դասակարգային խաղաղության» մասին: 1929 թվին Բելֆաստում տեղի ունեցած անգլիական արհմիությունների համագումարը ցույց տվեց, որ դավաճանական առաջնորդները բացահայտ անցել են բուրժուազիայի կողմը, հայտարարելով, որ իրենք կողմնակից են կապիտալիստական ռացիոնալացման, որ կողմնակից են անգլիական իմպերիալիստների հզորության վերականգման (ի հարկե, ի հաշիվ բանվորների): Բայց անգլիական կոմունիստական կուսակցության մերկացումները և կապիտալիստների անընդհատ ճնշումը բացում են բանվորների աչքերը «առաջնորդների» դավաճանության նկատմամբ

համախմբում են մասսաների հեղափոխական լոզունգների շուրջը:

Անգլիական Կոմկուսակցությունը սակավաթիվ է (4000–5000 հոգի) բայց իր հետ ունի արհմիություններում փոքրամասնության շարժումը (մոտ մեկ միլիոն մարդ): Անգլիական բանվոր դասակարգի մեջ ուժեղ է համակրանքը դեպի ԽՍՀՄ աշխատավորությունը: Անգլիական բանվոր դասակարգը մեզ զգալի օգնություն ցույց տվեց քաղաքացիական պատերազմի տարիներում: Անգլիական պրոլետարները և առաջին հերթին հանքափորները չեն կարողանում իրենց հերթին մոռանալ մեր կողմից նրանց ցույց տված օգնությունը: Անգլիական աշխատավոր մասսաները քվեարկեցին կոնսերվատիվ կառավարության դեմ, վորը խզեց հարաբերությունները ԽՍՀՄ դեմ և անգլիական «բանվորական կուսակցությանը» հաջողվեց իշխանության գլուխ անցնել շնորհիվ նրան, վոր նա խոստացել եր վերականգնել հարաբերությունները ԽՍՀՄ հետ:

## 5. ԱՆԳԼԻԱՆ ՅԵՎ ԽՍՀՄ

Անգլիական պառամյալ իմպերիալիզմն իր կատաղությունն ուղղել է ԽՍՀՄ դեմ: Անգլիան կապիտալիստական բոլոր յերկրներից ամենից թշնամաբար է տրամադրված Խորհրդային Միության դեմ: Պատերազմից առաջ Ռուսաստանի ժողովրդական տնտեսության ներդրած անգլիական կապիտալները կազմում եյին ½ միլիարդ ռուբլուց ավելի, նախապատերազմյան փոխառությունները՝ մոտ 450 միլիոն ռուբլի, իսկ համաշխարհային պատերազմի ընթացքում Ռուսաստանի և Անգլիայի միջև կնքած փոխառությունները կազմել են 5.512 միլիոն ռուբլի: Խորհրդային իշխանության հրաժարումը ցարական պարտքերի վճարումից, ինչպես նաև ֆաբրիկների ու գործարանների ազգայնացումը, վորոնցից շատերը պատկանում եյին անգլիական կապիտալիստներին, առաջին պատճառն եյին Անգլիայի կողմից դեպի մեզ ցույց տված թշնամության: Անգլիայի դեպի Խորհրդային Միությունը տածած



թշնամության յերկրորդ պատճառն է Անգլիայի վախը մեր հեղափոխականացնող ազդեցությունից գաղութների և Արևելքի կիսագաղութ յերկրների վրա:

Հենց խորհրդային պետության ծագման մոմենտից Անգլիան մեր դեմ թշնամական քաղաքականություն է վարում: Անգլիական բուրժուազիան օգնել է ու վոգեվորել սպիտակ–գվարդիականներին, դրամ ու սպառազինություն հայթայթելով նրանց: Անգլիան ինտերվենցիայի առաջնորդն ու գլխավոր մասնակիցն եր: Հենց միայն 1918 թվի վերջից մինչև 1920 թվի կեսը Անգլիան ինտերվենցիայի և սպիտակ գվարդիականներին օգնելու համար ծախսել է 2 միլիարդ վոսկի ռուբլի: Անգլիայի փորձերը՝ քաղաքացիական պատերազմների ժամանակ մեզ ուժով խեղդելու յետ մղվեցին Կարմիր բանակի և հենց Անգլիայի ներսում բանվորական շարժման միջոցով:

Այդ փորձերի խորտակումից հետո Անգլիան մեզ հետ 1921 թվին առևտրական պայմանագիր կնքեց, վորպիսի քայլ անելու հարկադրեց նրան բանվորական մասսաների շարժումը և անգլիական արդյունաբերության՝ մեզ հետ առևտուր անելու շահագրգռվածությունը: 1924 թվին Մակդոնալդի կառավարությունը ճանաչեց ԽՍՀՄ և դաշնագիր կնքեց-վիճելի ֆինանսական (պարտքերի ու վարկերի) հարցերի կանոնավորման մասին: Սակայն այդ դաշնագիրը չհաստատվեց, վորովհետև դաշնագիրը կնքելուց հետո շուտով իշխանության գլուխ անցավ կոնսերվատորների կառավարությունը, վորը ԽՍՀՄ ամենից անհաշտ թշնամին եր:

Այդ կառավարությունն ընտրությունների ժամանակ մեծամասնություն ստացավ խարդախ կեղծիքի միջոցով («Զինովյեվի կեղծ նամակը»): Չնայած շատ հարցերի չկանոնավորված լինելուն Անգլիայի ու ԽՍՀՄ միջև առևտուրը զարգանում եր հաջողությամբ: 1925–26 թվին մենք ներմուծել ենք Անգլիա 129 միլիոն ռուբլու ապրանք և արտահանել ենք Անգլիայից 190 միլիոն ռուբլու ապրանք: Մինչդեռ դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո կրճատվեցին նաև մեր առևտրական կապերը:

Զնայած առևտրական դաշնագրին և ճանաչմանը, Անգլիան յերբեք չի դադարել ԽՍՀՄ նկատմամբ թըշնամական քաղաքականություն վարելուց: Մի քանի անգամ անգլիական կառավարությունն ուղարկել է մեզ հայտագրեր (նոտաներ) պատերազմի սպառնալիքներով (Քերզոնի վերջնագիրը, Չեմբեռլենի հայտագիրը անգլիական հանքափորների օգնության առթիվ 1926 թ., նրա հայտագիրը 927 թվին չինական գործերի ու «պրոպագանդի» առթիվ):

1924 թվից մինչև 1928 թիվն անգլիական իմպերիալիզմը հանդիսացել ԽՍՀՄ դեմ բոլոր թշնամական ուժերի կազմակերպիչը և ձգտել է ստեղծել մեր արևմտյան հարևաններից բլոկ (միություն) ԽՍՀՄ դեմ:

Անգլիայի մեր դեմ ունեցած թշնամական քաղաքականության հետևանքը յեղավ 1927 թվին մեր լոնդոնյան առևտրական ներկայացուցչության վրա գործած հանդուգն հարձակումը և ԽՍՀՄ հետ դիվանագիտական հարաբերությունների խզումը:

Անգլո-խորհրդային հարաբերությունների խզումը նշանակում էր, վոր իմպերիալիստական Անգլիան անցնում է ԽՍՀՄ դեմ բացահայտ պատերազմի պատրաստության, արձակում է իր ձեռքերը: Յեվ իրոք անգլո-խորհրդային հարաբերությունների խզման հետևանքով աշխուժացան մեզ թշնամի բոլոր ուժերը (մեր դեսպան ընկ. Վոյկովի սպանությունը Վարշավայում, տերրորիստական ակտեր ԽՍՀՄ ներսում): Սրվեց Անգլիայի քաղաքականությունը իմպերիալիստական միասնական ճակատ ստեղծելու վերաբերյալ, մի ճակատ, վոր ուղղված էր ԽՍՀՄ դեմ: Թեև Անգլիայի բոլոր փորձերն այդ ուղղությամբ անհաջողության մատնվեցին, բայց այնուամենայնիվ նա ձեռք չի քաշում այդ փորձերից:

Անգլիան հատուկ ուշադրություն է նվիրում ԽՍՀՄ դեմ մեր արևմտյան հարևաններից միություն կազմակերպելուն, ռումինական գեներալները մեկնում են Վարշավա գաղտնի խորհրդակցության Լեհական, Լատվիական և Եստոնական շտաբները ԽՍՀՄ դեմ կռվի



միասնական պլաններ են մշակում: Մեծ ճնշում է գործ դնում Անգլիան նաև խորհրդային-գերմանական հարաբերությունների վրա, ձգտելով փչացնել այդ հարաբերությունները՝ ԽՍՀՄ մեկուսացնելու նպատակով:

Անգլիայի ու Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև ավելի ու ավելի մեծ չափով սրվող հակասությունները և դրա հետ միասին անգլիական իմպերիալիզմի հարաճուն ձգտումը՝ վոչնչացնելու պրոլետարական առաջին պետությունը ստիպեցին Անգլիային հզոր դաշնակից փնտրել իրեն համար Յեվրոպայում: Այդպիսի դաշնակից հանդիսացավ Ֆրանսիան: 1928 թվի ամռանն Անգլիան ռազմածովային գաղտնի համաձայնություն կնքեց Ֆրանսիայի հետ, վորով նախատեսվում է նրանց ռազմածովային աշխատակցությունը: Այդ նպատակի համար Անգլիան ստիպված յեղավ ժամանակավորապես հրաժարվել Յեվրոպայի առաջնության համար Ֆրանսիայի դեմ պայքարելուց, գործողությունների լիակատար ազատություն տալով Ֆրանսիային յեվրոպական ցամաքում: Այդ մոմենտից Խորհրդային Միության դեմ պատերազմի պատրաստության գլխավոր ղեկավարությունն Անգլիայի ձեռքից անցնում է Ֆրանսիայի ձեռքը: Սակայն այդ ամենևին չի նշանակում, վոր Անգլիան դադարել է կապիտալիստական յերկրների հակախորհրդային բլոկի պատրաստության յեռանդուն մասնակցությունից: Ընդհակառակը՝ Անգլիան շարունակում է ԽՍՀՄ վերաբերմամբ իր թշնամական գործունեությունը և չափազանց ակտիվ մասնակցում է բոլոր հակախորհրդային կամպանիաներին:

Բանվորական կուսակցության հաղթանակը 1929 թվի ընտրություններում և Մակդոնալդի իշխանության գլուխ անցնելը չփոխեցին անգլիական բուրժուազիայի քաղաքականությունը: Մակդոնալդն ու նրա «բանվորական» կառավարությունը հանդիսանում են անգլիական բուրժուազիայի հլու սպասարկուները:

Թեև բանվորական մասսաների ճնշման տակ Մակ-

դանայկլը առնված յեղավ վերականգնել մեզ հետ դիվանագիտական հարաբերությունները և անցնել անգլո-խորհրդային նոր առևտրական պայմանագիր կնքելու բանակցություններին, բայց և այնպես նա շարունակում է մնալ Խորհրդային Միության վերաբերմամբ թշնամաբար տրամադրված:

Նա շարունակում է նույնպես կոնսերվատիվ քաղաքականություն բանվորական հարցի բնագավառում, քանի վոր մինչև այժմ վոչ մի միջոց ձեռք չի առնված կրճատելու համար գործազրկությունը, կրճատելու համար բանվորական օրը և այլն: Ընդհակառակը նա պարզապես աջակցում է կապիտալիստներին, վերջիններիս կողմից բանվոր դասակարգի հարձակման մեջ և շարունակում է ակտիվ պայքարել հարաճուն ազատագրական շարժման դեմ, մանավանդ Հնդկաստանում:

1930 թվին խիստ աճեց կապիտալիստական յերկրների թշնամությունը Խորհրդային Միության դեմ: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և հեղափոխական շարժման աճումը մի կողմից ու մեր սոցիալիստական հաջողությունները մյուս կողմից սրեցին կապիտալիստական աշխարհին շտապեցնել նոր ինտերվենցիայի պատրաստությունը: 1929 թվի վերջը և ամբողջ 1930 թիվը լի յեն այնպիսի փաստերով, վորոնք վկայում են կապիտալիստական աշխարհի ու Խորհրդային Միության միջև զինված կոնֆլիկտի մոտեցման մասին: Այդ մասին են վկայում մի շարք կամպանիաներ, վորոնք կազմակերպված են կապիտալիստական աշխարհի կողմից և նպատակ ունեն մեր դեմ մղվելիք պատերազմի բարոյական պատրաստությունը: Այդ բոլոր կամպանիաներում Անգլիան յեռանդուն մասնակցություն է ցույց տալիս: Այսպես օրինակ՝ նա մասնակցեց Հռոմի պապի կազմակերպած խաչակրաց արշավանքին և շարունակ յեռանդուն կերպով կռվում է մեր արտահանության դեմ, ամեն տեսակ սուտեր տարածելով՝ մեր կողմից իբր թե կիրառվող «դեմպինգի» քաղաքականության մասին: Անգլիան չի դադարում



նաև մեզ մեղադրել հեղափոխական պրոպագանդի մեջ և «Մոսկվայի ձեռքն» է փնտրում անգլիական գաղութներում բռնկվող բոլոր ապստամբություններում: Այդ բոլորն Անգլիան անում է ԽՍՀՄ դեմ արշավ պատրաստելու նպատակով:

---

# VII. ԳԵՐՄԱՆԻԱ

1. Տնտեսական կացությունը: 2. Դասակարգային պայքարը: 3. Գերմանական ֆաշիզմը: 4. Գերմանիայի զինված ուժերը: 5. Գերմանիան և ԽՍՀՄ:

## 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ.

*1914 թվի պատերազմից առաջ Գերմանիան աշխարհի խոշորագույն կապիտալիստական յերկրներից մեկն էր: Համաշխարհային առաջնության համար Գերմանիայի իմպերիալիստական բուրժուազիայի պայքարը 1914–1918 թ. պատերազմի գլխավոր պատճառներից մեկն էր: Գերմանիան պատերազմից դուրս յեկավ ջախջախված: Նրա նախկին հզորության հիմքերը խախտվեցին: Վերսալի պայմանագրի հիման վրա նրանից խլեցին ածխահանքերի և յերկաթահանքերի խոշորագույն շրջանները: Պատրվակ բռնելով Գերմանիայի կողմից Վերսալի պայմանագրի աննշան խախտումը, Ֆրանսիան 1923 թվի սկզբին իր զորքերով գրավեց Ռուրի շրջանը: Այդ գրավումն այնքան խորացրեց տնտեսական քայքայումը Գերմանիայում, որ 1923 թվի աշնան գերմանական կապիտալիզմը կանգնած էր խորտակման յեզրին: Ճգնաժամը ծայրահեղորեն սրեց դասակարգային պայքարը, յերկիրը գտնվում էր տնտեսական ավերածության և հեղափոխության առաջ: Գերմանական բուրժուազիային հեղափոխությունից փրկեց սոցիալ-դեմոկրատական առաջնորդների դավաճանությունը և գերմանական կոմկուսակցության սխալները, իսկ տնտեսական ավերածությունից փրկեց ամերիկյան կապիտալը: Վերջինս օգտվելով գերմանական կապիտալի անկումից, վճռեց իրեն յենթարկել*



*Գերմանիայի տնտեսությունը՝ նրա հսկայական արտադրական հնարավորություններով միասին: Ամերիկայի ճնշման ներքո Ֆրանսիան հարկադրված յեղավ մաքրել Ռուրը: Ամերիկյան գեներալ Դաուեսի նախագահությամբ գործող հանձնաժողովը կազմեց Գերմանիայի և նրա տնտեսության «փրկության» պլանը, որն ապահովեց ամերիկյան կապիտալի վճռական ազդեցությունը գերմանական տնտեսության մեջ: Դաուեսի այդ պլանով Գերմանիան ստացավ 800 միլիոնի փոխառություն, որպեսզի կարողանա դուրս գալ քայքայումից և հնարավորություն ունենա վճարելու ռեպարացիոն պարտահատուցումները: Այդ փոխառությունն ապահովելու համար վերահսկողության տակ էյին առնված գերմանական յերկաթուղիները և արդյունաբերության բազմաթիվ խոշոր բնագավառներ: Ամերիկյան կապիտալը Դաուեսի պլանով թոկ գցեց Գերմանիայի վզին: Այնուամենայնիվ, շնորհիվ այդ փոխառության, գերմանական տնտեսությունն առողջանում և 1928 թվին Գերմանիան արդյունաբերության մի շարք խոշորագույն բնագավառներում հասավ մինչպատերազմյան մակարդակին (քարածուխի արտադրությունը, չուգունի և պողպատի ձուլումը, քիմիական և մեքենաշինարարական արդյունաբերությունը) և կրկին դարձավ խոշոր արդյունաբերական յերկիր, յետ մնալով միայն Ամերիկայից, իսկ միքանի բնագավառներում, ինչպես բարձրորակ ներկերի, քիմիական արդյունաբերության մի շարք բնագավառների, ելեքտրոտեխնիկական և այլ արտադրությամբ Գերմանիան բռնում է առաջին տեղն ամբողջ աշխարհում: Աճող ճգնաժամը մեղմելու և Գերմանիային հակախորհրդային բլոկի մեջ քաշելու համար 1928 թվի մայիսին Պարիզում նոր համաձայնություն կնքվեց պարտահատուցումների մասին (այսպես կոչված Յունգի պլանը): Այդ համաձայնության հիման վրա ռեպարացիոն վճարումների տարեկան գումարը 2 միլիարդ 500 միլիոնից իջեցվում է 1 միլիարդ 800 միլիոն մարկի՝ 64 տարվա ընթացքում: Միաժամանակ գերմանական բուրժուա-*

գիան կորցնում է իր շուկաների մեծ մասը: Յունգի պլանի հիման վրա գերմանական բուրժուազիան ուժեղացնում է հարձակումը բանվոր դասակարգի վրա: Գերմանական բուրժուազիան ռեպարացիոն վճարումների ամբողջ ծանրությունը գցում է բանվոր դասակարգի վրա:

## 2. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ.

Պատերազմի ժամանակ Գերմանիայի ջախջախումը ծայրահեղորեն սրեց դասակարգային հակասությունները: Գերմանիան վերածվեց բուրժուական հանրապետության: Գերմանիայի բանվոր դասակարգը մի քանի անգամ ապստամբեց և մոտ էր հաղթանակին, բայց ամեն անգամ գերմանական սոցիալ-դեմոկրատիան, գերմանական մենշևիկները փրկեցին գերմանական բուրժուազիային՝ բանվոր դասակարգին պառակտելու ճանապարհով, դավաճանությամբ, խաբեությամբ, բանվորական առաջնորդներին սպանելով և այլն:

Հետպատերազմյան ջախջախումի ամբողջ ծանրությունն ընկավ բանվոր դասակարգի ուսին, քանի վոր Յունգի պլանը կարող է կատարվել միայն բանվոր դասակարգի վրա ճնշումն ուժեղացնելու պայմանով: Բուրժուազիան սոցիալ-դեմոկրատիայի օգնությամբ սկսում է վճռական պայքար մղել բանվորների դեմ, այդ պլանը կատարելու համար: Այդ պայքարն ընդունում է չափազանց սուր ձևեր — կարմիր ճակատայինների միության ցրումը, կոմունիստական մամուլի արգելումը, բանվորական ցույցերի գնդակահարումը, գործադուլների զինված ճնշումը և այլն: Բուրժուազիան տենդային աշխատանք է տանում արգելելու համար կոմունիստական կուսակցությանը, այսինքն գլխավորելու հեղափոխական շարժումը Գերմանիայում:

Գերմանիայի բանվոր դասակարգը դրան պատասխանում է ուժեղ հակահարձակումով (լայն գործադուլային պայքար, 1929 թվի մայիսյան բարիկադային մարտերը, օգոստոսյան ցույցերը, վորոնք տեղի ունեցան չնայած արգելման): Այդ բոլորի գլուխ է կանգնած



կոմունիստական կուսակցությունը, վորն օգտվում է բանվոր դասակարգի հսկայական վստահությամբ:

Գերմանական կոմունիստական կուսակցությունը բանվորական մասսաներին կազմակերպում է կարեվորագույն տնտեսական և քաղաքական հարցերի շուրջը (պայքար սոցիալական ապահովությունը վատացնող օրենքի դեմ, պայքար աշխատավարձը բարձրացնելու համար, պայքար պատերազմական վտանգի դեմ): Գերմանական կոմկուսակցությունը անհաշտ պայքար է մղել և մղում է աջ և «ձախ» թեքումների դեմ, կոփելով բոլշևիկյան կադրեր:

1929 թվի կեսերին սկսված և առանձնապես 1930 թվին խորացած ճգնաժամը Գերմանիայի բանվորական մասսաներին հասցրեց աղքատացման և քաղցի: Ճգնաժամի հետևանքով այժմ արդեն Գերմանիայում կան 4 միլիոնից ավելի գործազուրկներ և մոտավորապես 25 տոկոս վոչ լրիվ շաբաթ աշխատողներ: Դրա հետ միասին տեղի յե ունենում բանվոր դասակարգի վրա բուրժուազիայի հարձակման ուժեղացումը: Աշխատավարձն իջնում է 15–20 տոկոսով: Կարիքն ու աղքատությունն ընդգրկում են վոչ միայն բանվորներին, այլև քաղաքային մանր բուրժուազիայի լայն շերտերին:

Գերմանական կոմկուսի կենտկոմի պլենումում ընկ. Տելմանն այսպես բնորոշեց ստեղծված դրությունը.—

«Ճգնաժամի քաղաքական հետևանքների կենտրոնում կանգնած է հեղափոխական վերելքը: Ինչպիսիք են վերջին ժամանակներիս կարեվորագույն անցքերը, վորոնցում արտահայտվում է այդ հեղափոխական վերելքը: Այդ ամենից առաջ Ռայխստագի նախընթաց տարվա սեպտեմբեր 14-ի ընտրություններն եյին, կոմունիստական կուսակցության վիթխարի հաջողություններով:

Սեպտեմբերի 14-ին հաջորդեց Բեռլինի մետաղագործների գործադուլը, վորը ցույց տվեց, վոր մեր ընտրական հաջողությունը վոչ թե պարլամենտական այլ արտապարլամենտական հաջողություն եր՝ հեղա-

փոխական դասակարգային պայքարի համար մասսայական մոբիլիզացիայի գործում:

Վորպես յերրորդ կարեվոր փաստ հաջորդում է պայքարը Ռուրում և վերին Սիլեզիայի լեռնագործ բանվորների պայքարը, վորն արդեն ցույց է տալիս հեղափոխական դասակարգային պայքարի շատ ավելի սրված աստիճան: Հեղափոխական վերելքի չորրորդ փաստ հանդիսանում է հեղափոխական պրոֆօպոզիցիայի աճած դերը: Հինգերորդ փաստը, վորը առանձնահատուկ նշանակություն ունի, հակաֆաշիստական մասսայական մարտերի ալիքն է ամբողջ Գերմանիայում:

Դրա հետ կապված, վորպես վեցերորդ եյական մոմենտ հարկավոր է նշել սոցիալ-դեմոկրատական բանվորների, բանվոր յերիտասարդության սոցիալիստական միության, նույնպես և հանրապետական դրոշակի միության անդամների պրոլետարական կազմի վորոշ մասերի ձախացումը: Վերջապես, կուսակցության և կոմսոմոլի կազմակերպչական հաջողությունները նույնպես արտահայտում են հեղափոխական վերելքը:

Հեղափոխական վերելքին հակակշիռ գոյություն ունի բուրժուական կուսակցությունների ճգնաժամ, ներառյալ նաև սոցիալ-դեմոկրատիան և նրա հետագա ֆաշիստացումը: Յեթե մենք նայենք Գերմանիայի ֆաշիստական զարգացման առաջվա ետապներին, ապա կպարզվի, վոր գերմանական ազգային կուսակցության պառակտումն արդեն իր ժամանակին դրա համար կարեվոր յելակետ եր ներկայացնում»:

Կոմկուսակցության ղեկավարությամբ Գերմանիայի բանվոր դասակարգը ուժեղ հակահարձակման է անցնում: Գերմանական կոմկուսակցությունը Գերմանիայի բանվոր դասակարգին և աշխատավոր մասսաներին առաջադրել է ազգային սոցիալական ազատագրման ծրագիր— ճգնաժամից հեղափոխական ճանապարհով դուրս գալու ծրագիր: Կոմկուսակցությունը գլխավորում, ղեկավարում և կազմակերպում է բան-



վոր դասակարգի տնտեսական և քաղաքական բոլոր յելույթները (մետաղագործների գործադուլը 1930 թվի նոյեմբերին Բեռլինում, լեռնագործների գործադուլը Ռուրում, գործազուրկների սովարշավները):

Գերմանական Կոմկուսակցության Կենտկոմի պլենումը բնութագրելով Գերմանիայի դրությունը նշեց, վոր գոյություն ունեն դեպի անմիջական հեղափոխական սիտուացիա տանող տենդենցներ:

## 3. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԸ

Տնտեսական ճգնաժամն ու դասակարգային պայքարի սրումը հասցրին բուրժուական կուսակցությունների քայքայման, սոցիալ-ֆաշիստական կուսակցության քայքայման պրոցեսի արագացման: Սոցիալ-դեմոկրատական բանվորները սկսում են գնալ դեպի կոմունիստները: Ուժեղացել են խմորումները նաև մանրբուրժուազիայի մեջ: Բուրժուազիան ի վիճակի չե այլևս ճնշելու հեղափոխական շարժումները հին դեմոկրատական մեթոդներով և պարլամենտական մեթոդներից անցնում է բացարձակ տերրորի և բռնության մեթոդներին: Ֆաշիստացման պրոցեսն սկսվեց ավելի արագացած տեմպերով տեղի ունենալ սկսած Մյուլլերի սոցիալ-դեմոկրատական կառավարության ժամանակներից, վորը ճանապարհ եր հարթում ու հող պատրաստում Բրյունինգի կառավարության համար, կառավարություն, վորը գերմանական կոմկուսի կողմից բնութագրված եր վորպես ֆաշիստական դիկտատուրա անցկացնող կառավարություն: Ֆաշիստական շարժումը Գերմանիայում միացնում է մի շարք կազմակերպություններ, ռազմական միություններ և քաղաքական կուսակցություններ: Ֆաշիստական շարժման հիմնական և ղեկավար կուսակցությունը— նացիոնալ-սոցիալիստների կուսակցությունն է, վորը 1930 թվի պարլամենտական ընտրություններին մոտ 6 ու կես միլիոն ձայն ստացավ, իր շարքերում հաշվում է մոտավորապես 150·000 անդամ և ունի 40·000-ից մինչև 50·000 մարդու հասնող զինված ուժեր: Սոցիալ-

կան կազմը չափազանց բազմազան է, ներքին հակասությունները շատ ուժեղ են: Ֆաշիստներն աշխատում են ամեն տեսակ սոցիալական դեմագոգիայով թափանցել բանվորների շարքերը, առանձնապես գործարանների մեջ, բայց մինչև այժմ այդ նրանց չի հաջողվել և նրանք սկսում են կորցնել մինչև անգամ այն դիրքերը, վոր նվաճել եյին առաջ:

Գերմանիայի ֆաշիստները, ինչպես նաև մյուս յերկրներինը, կազմակերպում են բանվորների մասսայական սպանություններ, ծեծում են գործադուլավորներին, և անկյուններից կրակում են կոմունիստների վրա: Գերմանական սոցիալ-դեմոկրատիան, վորը պաշտպանում է Բրյունինգի կառավարության բոլոր միջոցառումները, միայն խոսքով է դուրս գալիս ֆաշիզմի դեմ, իսկ գործնականում ֆաշիստների հետ միասին դեմ է յելնում հեղափոխական բանվորական շարժման (Բեռլինի վոստիկանապետ սոցիալ-դեմոկրատ Գժեյինսկի, Պրուսիայի ներքին գործոց մինիստր—Զեվերինգը և Պրուսիայի մինիստր նախագահ Բրաունը աջակցում են ֆաշիստների զինմանը):

Ռեֆորմիստական միությունները ու ֆաշիստները 1930 թվի վերջին Բեռլինի մետաղագործների և Ռուրի լեռնագործների գործադուլների ժամանակ հանդես յեկան վորպես շտրեյկբրեխերներ:

## 4. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Գերմանիայի զինված ուժերի կազմը վորոշված է Վերսալյան դաշնագրով, վորն արգելում է Գերմանիային ունենալ ընդհանուր զինապարտություն: Գերմանիայի բանակը (ռայխսվերը) բաղկացած է 12 տարով կոնտրակտացիայի յենթարկված կամավորներից: Վարձու բանակի թիվը վորոշված է 100·000 հոգի, վորից 4000 հոգին՝՝ սպա: Վերսալյան դաշնագիրն արգելում է գերմանական բանակին ունենալ տանկեր, մարտական սավառնակներ, ծանր ու դնդային հրետանի և մինչև անգամ զրահամեքենաներ: Այսպիսով գերմանական բանակի կազմի մեջ մտնում են միայն 7 հետևակային



դիվիզիա (21 գունդ) և 3 հեծյալ դիվիզիա (18 հեծյալ գունդ): Հետևակ դիվիզիայի կազմի մեջ մտնում են բացի 3 գունդ հրետանուց, մեկ հրետանական գունդ, 1 սապյորական գումարտակ, 1 կապի ջոկատ (մոտավորապես գումարտակ), ավտոմոբիլային ջոկատ (200 մեքենայից ավելի) և գումակային ջոկատ:

Գնդերի կազմակերպությունը շատ քիչ է տարբերվում մյուս բանակների կազմակերպությունից:

Չնայած ռայխսվերում ծառայության դժվարին պայմաններին, մի ազատ տեղի համար ցուցակագրվում են 6 թեկնածու գլխավորապես գործազուրկներից: Դրա հետևանքով ռայխսվերի կազմի մեջ հաշվվում է բանվորների 50 տոկոսից ավելին:

Ռայխսվերի սպայությունը մեծ մասամբ բաղկացած է գերմանական սպաներից: Նրանցից շատերը մինչև այժմ էլ նվիրված են գահընկեց կայսրին: Նրանք իրենց պահում են ինքնապարփակ, զինվորներից առանձնացված: Հրամկազմի հետ անընդհատ տարվում են տակտիկական պարապմունքներ: Հրամկազմը կատարելագործվում է ռազմական տեխնիկայից զանազան դասընթացներում և իր վորակով չափազանց բարձր է կանգնած:

Գերմանական զինվորին առաջադրվում են մեծ պահանջներ: Ծառայության մտնելիս նա պետք է քննություն բռնի հանրակրթական առարկաներից ու ֆիզպատրաստությունից:

Առաջին 6–9 ամիսներում զինվորը սովորում է վարժական գումարտակում, եսկադրոնում կամ մարտկոցում (վարժական ստորաբաժանումներ կան բոլոր գնդերում) և այնուհետև հաշվի յե առվում ստորաբաժանման ցուցակների մեջ: Զմրան շրջանում տեղի յե ունենում գլխավորապես անհատական ուսուցումը և մարտիկի կատարելագործումն ըստ մասնագիտությունների, իսկ ամառն անցնում են տակտիկական վարժություններ զորամասերով: Ցենթասպաները նույնպես իրենցից ներկայացնում են զինվորներից առանձնացված խմբակ: Նրանք ապրում են առանձին սենյակներում, ունեն ի–

րենց ճաշարանները և չփվում են իրենց միջավայրի հետ, Զինվորի հետ վերաբերվելու յեն վորպես պետ և վոչ թե վորպես ավագ ընկեր:

Բանակի մարտական պատրաստությունը դրված է չափազանց լավ, և բուրժուական բանակների մեծ մասը ռայխսվերն այդ տեսակետից որինակելի յե համարում: Այդ միանգամայն հասկանալի յե, յեթե նկատի յենք առնում, վոր զինվորները սովորում են 12 տարի:

Բացի բանակից, Վերսալյան Դաշնագիրը թույլատրում է Գերմանիային ունենալ մեծ քանակով վոստիկանություն: Միայն քաղաքային վոստիկանությունը բաղկացած է 100.000 հոգուց: Բացի դրանից, կա գյուղական վոստիկանություն: Այդ ուժը գլխավորապես կազմված է ճնշելու ներքին ապստամբությունները:

Վերջին խնդրի հաջող լուծման համար նա առանձնապես խնամքով ուսումնասիրում է փողոցային մարտի տակտիկան:

## 6. ԳԵՐՄԱՆԻԱՆ ՈՒ ԽՍՀՄ

Նախ քան պատերազմը կապիտալիստական Գերմանիան ու ցարական Ռուսաստանը սերտ կերպով կապված եյին իրար հետ տնտեսապես: Ռուսական ներմուծման համարյա կեսը գալիս եր Գերմանիայից: Գերմանական կապիտալը մեծ մասնակցություն եր ցույց տալիս ցարական Ռուսաստանի արդյունաբերության մեջ ու բանկերում:

Պատերազմից հետո յերկու պետություններն անջատվեցին իրարից նորակազմ Լեհաստանով ու Մերձբալթյան պետություններով: Բայց չնայած դրան, Գերմանիայի ու մեր մեջ հենց սկզբից հաստատվեց տնտեսական ու քաղաքական կապ: Զինաթափ յեղած ու քայքայված Գերմանիային ճնշում եյին հաղթող յերկրները: Խորհրդային Ռուսաստանի հետ համաձայնությունն ամրացնում եր Գերմանիայի դիրքերը և միևնույն ժամանակ շահավետ է և Խորհրդային Միության համար:

Արդեն իսկ 1922 թվին Գերմանիայի ու ԽՍՀՄ միջև կնքվեց Ռապալլոյան դաշնագիրը (1925 թվին՝ առևտրական դաշնագիր): Յերկու կողմերն էլ ճանաչում եյին միմյանց և հրաժարվում են հին պարտքերից և պատերազմի ու հեղափոխության հետևանքով կորուստներից:



1926 թվի ապրիլին Գերմանիայի ու ԽՍՀՄ միջև կնքվեց փոխադարձաբար միմյանց դեմ չհարձակվելու պայմանագիր: Այդ պայմանագիրն ավելի յեվս ամրացրեց յերկու յերկրների քաղաքական ու տնտեսական հարաբերությունները:

Անգլիան ու Ֆրանսիան վաղուց արդեն քաղաքականություն են վարում Գերմանիային ԽՍՀՄ-ից կտրելու և նրան Ազգերի Լիգայի և զանազան այլ կոնֆերանսների (Լոկարնո, Կելլոգի պակտ) միջոցով ներգրավելու համար ԽՍՀՄ դեմ արևմտյան իմպերիալիստական պետությունների զանազան կոմբինացիաներին:

Վորովհետև սրվում են հակասությունները Գերմանիայի և կապիտալիստական այլ պետությունների միջև (մանավանդ Լեհաստանի հետ Գերմանիայից Վերին-Սիլեզիայի ու Դանցիգի միջանքի դրավման հետևանքով, Ֆրանսիայի հետ՝ Ելզաս-Լոտարինգիայի, Սաարայի քարածխային ավազանի գրավման և Անգլիայի հետ՝ գաղութների, վորից միանգամայն զրկված է Գերմանիան), ուստի Գերմանիային ԽՍՀՄ-ից կտրելու և նրան ԽՍՀՄ դեմ ինտերվենցիա պատրաստողների բանակը քաշելու այդ փորձերը կապված են մեծ դժվարությունների հետ: Վերջերս կրկին ուժեղացել են Անգլիայի ու Ֆրանսիայի փորձերը՝ զանազան խոստումների միջոցով Գերմանիային ներգրավելու կապիտալիստական պետությունների կազմակերպվող միասնական ճակատին:

Գերմանական արդյունաբերական բուրժուազիայի զգալի մասն ավելի ու ավելի յե թեքվում դեպի այսպես կոչվող արևմտյան կողմորոշման կողմը: Այդ տեղի յե ունենում ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության ու ներքին ամրացման պատճառով, Գերմանիայում հեղափոխական շարժման ու կոմկուսակցության հաջողությունների աճման, Գերմանիայի իմպերիալիստա-

կան կռվի աճման և սրվող տնտեսական ճգնաժամի ու պրոլետարական հեղափոխության սպառնալիքի հետևանքով։ Անհրաժեշտ է նշել, վոր գերմանական բուրժուազիայի այդ ձգտումները պատրաստվում են վոչ միայն անգլո-ֆրանսական իմպերիալիստների կողմից, վորը Խորհրդային Միության դեմ ինտերվենցիա յե պատրաստում, այլև Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատիայի, ինչպես նաև ամբողջ Յերկրորդ Ինտերնացիոնալի կողմից, վորոնք հանդիսանում են ԽՍՀՄ և ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի ամենավոխերիմ թշնամին։



# VIII. ԼԵՀԱՍՏԱՆ

1. Լեհական պետության կազմակերպումը։— 2. Լեհաստանի արտաքին քաղաքականությունը։— 3. Նոր ինտերվենցիայի ու պատերազմի պատրաստությունը ԽՍՀՄ դեմ։— 4. Լեհաստանի ներքին դրությունը։— 5. Ամփոփ տեղեկատու տվյալներ Լեհաստանի մասին։

## 1. ԼԵՀԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.

Լեհաստանը մեր ամենախոշոր հարևանն է Արևմուտքում։ Վորպես ինքնուրույն պետություն ժամանակակից Լեհաստանն առաջացել է 1918 թվի նոյեմբերին Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով, վորն առաջին անգամ աշխարհում հայտարարեց և գործով իրականացրեց ժողովուրդների ինքնորոշման սկզբունքն ինչպես նաև համաշխարհային պատերազմի և 1918 թվի գերմանական հեղափոխության հետևանքով։

Այժմյան Լեհաստանի գոյացման պրոցեսը շարունակվեց մինչև 1921 թիվը։ Պետական ինքնուրույնության առաջին իսկ որերից լեհական բուրժուազիան սկսեց իրագործել իր իմպերիալիստական պլանները։ Այդ պլաններից կարևորագույնն եր Լեհաստանի պատերազմը Խորհրդային Միության դեմ 1919–1920 թ. թ., վորի հետևանքով դեռ այն ժամանակ յերիտասարդ Խորհրդային հանրապետությունից, վորը շրջապատված եր չորս կողմից սպիտակների ու իմպերիալիստների զորքերով, Լեհաստանը խլեց Արևմտյան Բելոռուսիան և Արևմտյան Ուկրայինայի հյուսիսային մասը (Վոլին)։ Նույն այդ ժամանակներում ուկրայինացիների դեմ մղած յերկու տարվա համառ և արյունալի պատերազմից հետո Լեհաստանն իր յերկրին միացրեց Արևմտյան Ուկրայինայի մնացած ռայոնները (Գալիցիան)։ Նույն

1920 թվին նա գրավեց Լիտվայից Վիլենշչինան, իսկ 1921 թվին Գերմանիայից գրավեց Վերին Սիլեզիան, Լեհաստանի ամենահարուստ արդյունաբերական ռայոնը:

Լեհական բուրժուազիայի ռազմատենչ իմպերիալիստական քաղաքականությունը Խորհրդային Միության նկատմամբ հենց սկզբից ակտիվ աջակցություն գտավ իմպերիալիստական Անտանտայի և առաջին հերթին Ֆրանսիայի կողմից: Վերջինս միշտ էլ Լեհաստանի վրա նայել է և այժմ էլ նայում է, որպես ԽՍՀՄ դեմ ուղղված պլացդարմի վրա: Այդ տեսակետից լեհական բուրժուազիայի և Անտանտայի իմպերիալիստների շահերի զուգադիպումը, ինչպես նաև Լեհաստանի զգալի կախվածությունը օտարերկրյա կապիտալից նրան դարձրել են եվրոպական իմպերիալիզմի կույր գործիքը: Լեհաստանը դարձավ Ֆրանսիայի ամենահավատարիմ դաշնակիցն ու նրա գլխավոր գործիքը, որի օգնությամբ Ֆրանսիան անց է կացնում իր հակախորհրդային քաղաքականությունը: Պակաս կարևոր տեղ չէր բռնում Լեհաստանը նաև Անգլիայի հակախորհրդային պլաններում:

## 2. ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լեհաստանի հետ մեր փոխհարաբերությունների ամբողջ պատմությունը վկայում է այն թշնամության մասին, որ լեհական բուրժուազիան անընդհատ տածում է դեպի Խորհրդային Միությունը: Արդեն իսկ 1919 թվի սկզբից լեհական զորքերը հարված են հասցնում Մինսկին, իսկ 1920 թվի գարնանը Պիլսուդսկին կազմակերպում է խոշոր հարձակում, նպատակ ունենալով օկուպացիայի ենթարկելու մեր աջափնյա Ուկրաինան և մինչև իսկ ժամանակավորապես գրավում է Կիևը: Այդ հարձակման կազմակերպումը, բանակի հայթայթումը նյութական մասով, հրետանիով և մատակարարներով կատարվում է Անտանտայի պահեստներից ի հաշիվ Լեհաստանի աշխատավորների ապագա շահագործման: Հարվածի կազմակերպման համար Ֆրանսիայի տերիտորիայում կազմակերպված էր հատուկ լեհական բանակ մի քանի դիվիզիաների կազմով գեներալ Հալլերի գլխավորությամբ և Լեհաստան էր փոխադրըված: Լեհաստան էր ուղարկված դարձյալ Ֆրանսիայից ռազմապաշար ու ֆրանսական հրահանգիչներ:

Լեհաստանի գարնան հաջողությունները վերջացան Կիևից հարվածող խմբակի ջախջախումով: Կարմիր բանակն ինքը կանգնեց Վարշավայի դարպասների մոտ: Վախենալով կատաստրոֆայից, լեհական բուրժուազիան զորահավաքի ենթարկեց երկրի բոլոր ուժերը և օգնություն խնդրեց սոցիալ-պատրիոտներից: Հեղափոխության աճող սպառնալիքի առաջ և ճակատում ու թիկունքում տեղի ունեցող խմորումների հետևանքով շտապ կազմակերպեց «սոցիալիստական» կառավարություն: Սեյմն արտակարգ ձևով անցկացրեց բուրժուազիայի համար շահավետ «հողային ռեֆորմ»: Շնորհիվ «սոցիալիստների» դավաճանության բուրժուազիային հաջողվեց խաբել գյուղացիության բավական լայն մասսաներին և մինչև իսկ բանվոր դասակարգի մի փոքր մասին, հրահրել նրանց ազգայնական-շովինիստական տրամադրությունները և այդ ձևով փրկել բուրժուական Լեհաստանին հեղափոխության հաղթանակից: Պակաս կարևոր դեր չխաղաց այստեղ նաև Անտանտայի օգնությունը: Լեհաստան էր ուղարկված հատուկ միսիա գեներալ Վեյգանի գլխավորությամբ (ֆրանսական գլխավոր շտաբի այժմյան պետը), և փոխադրված էին ավիոջոկատների հրահանգիչների զգալի կադրեր ու տանկեր:

1920 թվի պատերազմն ավարտվեց Ռիգայում ստորագրված հաշտության դաշնագրով: Բայց դրանից հետո էլ Լեհաստանը շարունակում էր իր թշնամական քաղաքականությունը մեր դեմ, կազմակերպելով ու զինելով իր տերիտորիայի վրա Պետլյուրայի, Սավինկովի, Տյուտյունյուկի, Բուլակ-Բալախովիչի և այլ բանդաներին, և ուղղելով նրանց խորհրդային երկրի դեմ զինված հարձակումների, նպատակ ունենալով սկզբից ավերել մեր խաղաղ շինարարությունը:

Լեհաստանի մեր դեմ մղած պատերազմն սկսված էր վոչ առանց Անտանտայի աջակցության ու ճնշման: Տալով միջազգային դրության գնահատականը 10-րդ Համառուսական կուսկոնֆերանսում (1920 թ. սեպտեմբերի 22-ին), ընկ. Լենինն ասաց.

«Մեր բանակի մոտենալը Վարշավային անվիճելիորեն ապացուցեց, վոր ինչ-վոր նրա շատ մոտերքում գտնվում է համաշխարհային իմպերիալիզմի կենտրոնը, վորը թաքնված է Վերսալյան Դաշնագրում: Լեհաստանը, վերջին հենարանը բոլշևիկների դեմ, վորը գտնվում է Անտանտայի ձեռքում, այնչափ հզոր գործոն է այդ սիստեմի ձեռքում, վոր յերբ Կարմիր բանակը սպառնալիքի տակ դրեց այդ հենարանին, յերերաց ամբողջ սիստեմը»:

Միաժամանակ այդ պատերազմը հետապնդում էր վորոշ նպատակներ հենց լեհական կալվածատերերի ու կապիտալիստների համար: Նրանք յերազում էին գրավել Ուկրայնան, տարածել Արևելքից մինչև 1772 թվի սահմանները, այսինքն՝ համարյա մինչև Սմոլենսկը: Չէ՞ վոր լեհական կալվածատերերը նախ քան հեղափոխությունը տիրում էին Ուկրայնայի 2,5 միլիոն դեսյատին հողային տարածության, վորը նրանց տարեկան 100 միլիոն ռուբլու արդյունք էր տալիս: Լեհական կապիտալիստներին էին պատկանում Ուկրայնայում բազմաթիվ գործարաններ ու հանքեր և հենց Լեհաստանում գործարանների զգալի մասն աշխատում էր Կրիվորոժյեյի աժան հանքով: Ռուսական և ուկրայնական շուկան կլանում էր Լոձի ու Բելոստոկի տեքստիլ գործարանների արտադրանքի 75 տոկոսը՝ 90 միլիոն ռուբլի գումարով:

Լեհաստանի իմպերիալիստական քաղաքականությունը նրան սրված դրության մեջ դրեց Գերմանիայի ու Լիտվայի հետ: Գերմանիան չէր կարողանում հաշտվել Լեհաստանի արևմտյան սահմանների հետ, վորոնք սահմանված էին [illegible] պայմանագրով: Լեհաստանի հետ սահմանների վերանայման վերջին լայն



կամպանիաներից մեկը Գերմանիայում տեղի ունեցավ 1930 թվի աշնանը:

Լիտվայի հետ նույնպես Լեհաստանը չի հաստատել նորմալ փոխհարաբերություններ, վորովհետև նա Լիտվայից գրավել է Վիլնայի նահանգը: Այդ արված է վոչ միայն այն նպատակով, վոր Լատվիայի հետ անմիջական սահման ունենան, այլ գլխավորապես լեհական խոշոր կալվածատերերի ոգտին, վորոնց պատկանում են Վիլենշչինայի խոշոր մասը: Լեհ-լիտվական սահմանների լարված հարաբերություններն իրենց մեջ թաքցնում են հնարավոր ռազմական բարդությունների մշտական աղբյուր Յեվրոպայի արևելքում, քանի վոր լեհական բուրժուազիան չի թողնում՝ ամբողջ Լիտվան զենքի ուժով գրավելու իր միտքը: Լեհաստանի ագրեսիվ քաղաքականությունը Լիտվայի նկատմամբ թելադրվում է դարձյալ լեհական ագրարային բուրժուազիայի շահերով, ինչպես նաև այն նկատառումներով, վոր Լեհաստանը կամենում է Լիտվայից հարմար պլացդարմ ստեղծելու ԽՍՀՄ դեմ պատերազմի դեպքում և միաժամանակ ամրացնել իր ազդեցությունը Մերձբալթյան յերկրներում: 1927 թվին այդ պլանները, քիչ էր մնում, ստանում էին իրենց իրականացումը, և միայն ԽՍՀՄ յեռանդուն միջամտությունը կանխեց նոր պատերազմի հրդեհի վտանգը:

Վերջին «Լեհ-լիտվական» համաձայնության գալու փորձը, վոր ձեռնարկված էր Ազգերի Լիգայի ճնշման տակ 1930 թվի վերջում, ավարտվեց, ինչպես և պետք է սպասել, կատարյալ անհաջողությամբ:

## 3. ԽՍՀՄ ԴԵՄ ՆՈՐ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՅԻ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Լեհական քաղաքականության թշնամությունը խորհրդային իշխանության դեմ առանձնապես ուժեղացավ 1926 թվից, յերբ իշխանության գլուխ անցավ Պիլսուդսկին, վորը գլխավորում է լեհական բուրժուազիայի ամենաակտիվ հակախորհրդային իմպերիալիստական մասին: Լեհաստանի արտաքին քաղաքականության մեջ

Պիլսուդսկու ֆաշիստական բլոկը վորպես ամենահիմնական խնդիրներից մեկն իր առաջ դնում ե «Մեծ Լեհաստան» ստեղծելը, վորի կազմի մեջ ե մտնում «Ֆեդերատիվ անկախ Ուկրայնան», գոյացված Խորհրդային Ուկրայնայից: Լեհաստանն իր ծառայության մեջ պահում ե պետլյուրական բանդաների մնացորդներին: Լեհաստանի պաշտոնական մամուլը պարբերաբար զանազան «մեծ-ուկրայնական» կամպանիաներ ե մղում:

Պիլսուդսկին իշխանության գլուխ անցնելով, աշխուժացրեց յերկրում հակախորհրդային աշխատանքը, հեշտացրեց դրանում Անտանտայի իմպերիալիստների աշխատանքը և ուժեղացրեց մեր արևմտյան սահմաններում Լեհաստանի գլխավորությամբ պետությունների զինված բլոկ ստեղծելու վտանգը: Այդ աշխատանքում շահագրգռված ե ամենից առաջ Ֆրանսիան: Վերջին տարիներս մենք ունենք մի շարք ապացույցներ, վոր վկայում են հակախորհրդային քաղաքականության ակտիվության աճման մասին: 1927 թվին վերակնքված ե ռազմական միությունը Ռումինիայի հետ, վորն ուղղված ե բացառապես մեր Միության դեմ: Ֆրանսական գեներալ Լերոն մի շարք տարիների ընթացքում պարբերաբար տեսչական այցելություններ ե կատարում դեպի Լեհաստան ու Ռումինիա, վորպեսզի ճշտի ու համաձայնեցնի մեր դեմ ուղղված լեհ-ռումինական դաշինքի գործողությունների բոլոր հարցերը և վորպեսզի ոգնություն ցույց տա նրանց:

Միաժամանակ աշխատանք ե տարվում նաև Մերձբալթյան պետություններից բլոկ կազմակերպելու Լեհաստանի ռազմական գերիշխանության տակ: Վերջին տարիներս նկատվում ե դեպի Մերձբալթյան յերկրները հաճախակի դարձած՝ լեհական ու ֆրանսական գլխավոր շտաբների սպաների այցելությունները: 1930 թվի աշնանը «ինքը» լեհական պրեզիդենտ Մոսցիցկին հատկապես Եստոնիա մեկնեց, վորպեսզի «ամրացնի բարեկամական» հարաբերությունները «յերկու յեղբայրական ժողովուրդների» միջև, այսինքն՝ վորպեսզի ամրացնի նրանց մեջ ռազմական կապերը և Եստոնիայի միջոցով ուժեղացնի Լեհաստանի ազդեցությունը Մերձբալթյան յերկրներում:

Վերջապես՝ նույն 1930 թվին նկատվում եր, այսպես կոչվող, «ագրարային կոնֆերանսների» համաճարակ, վորոնք հրավիրվում եյին Լեհաստանի նախաձեռնությամբ, Ֆրանսիայի ոգնությամբ ու ղեկավարությամբ: Կոնֆերանսները տեղի ունեցան Լեհաստանում ու Ռումինիայում (Վարշավա, Բուխարեստ, Սինայ): Արդեն իսկ այդ կոնֆերանսների մասնակցողների կազմը, վորոնց մեծամասնությունը բացարձակապես վոչ մի կապով կապված չեյին տնտեսական շահերի ընդհանրությամբ («ցորենի» Ռումինիան ու Հունգարիան, «տարեկանի» Լեհաստանը, «անասնապահական» Մերձբալթյան և «անտառարդյունաբերական» Ֆինլանդիան) վկայում եր, վոր մշակման յենթակա յեն վոչ այնքան ճգնաժամի դեմ իսկական պայքարի հարցերը (իդեպ, կապիտալիզմի պայմաններում գոյություն չունի ճգնաժամի դեմ պայքարի վոչ մի ռեալ միջոց), վորքան մեր դեմ գործողությունների միասնական ճակատի հարցերը: Իրականությունն ամբողջովին ապացուցեց այդ յենթադրությունը: «Պատգամավորների» մեծամասնության ճառերը, որինակ՝ հենց ռումինական մինիստր Մաջարի ճառը, բաղկացած եյին բացառապես ԽՍՀՄ դեմ ուղղված կատաղի գրպարտական հարձակումներից:

Այս բոլոր փաստերը շատ վառ որինակ են լեհական դիվանագետների, և նրանց յետևում կանգնած Ֆրանսիայի ու Անգլիայի իմպերիալիստների, արտաքին «խաղաղասեր» քաղաքականության:

Իսկ ինչ վերաբերում ե Լեհաստանի անմիջական հարաբերություններին դեպի Խորհրդային Միությունը, այստեղ բավական ե մատնանշել այն փաստը, վոր Լեհաստանը համառորեն չի ցանկանում ընդարձակել տնտեսական կապերը մեզ հետ: Յերկու յերկրների միջև առևտուրը միանգամայն չնչին ե, չնայած լեհական եկոնոմիկայի ու մեր տնտեսության նախկին որգանական կապին:

Վերջապես՝ վերջին յերեք տարվա ընթացքում տեղի յեն ունեցել մի շարք պրովակացիոն փաստեր, վորոնք ամենեվին ուղղված չեյին կարող լինել բարյացակամ հարաբերությունների բարելավմանը։ Այդ փաստերի թվին ե պատկանում մեր լիազոր ներկայացուցիչ ընկ. Վոյկովի սպանությունը 1927 թվին, առեվտրական ներկայացուցիչ ընկ. Լիզարեվի դեմ կատարած մահափորձը և 1930 թվի ապրիլին վերջին հանցափորձը Վարշավայի մեր լիազոր ներկայացուցչության դեմ։ Միայն Խորհրդային Միության զսպվածությունը հնարավորություն տվեց խուսափելու ավելի խոր բարդություններից, չնայած լեհական կառավարության անհանդուրժելի վարքին և վերջինիս բարյացակամ վերաբերմունքին դեպի սպիտակ-գվարդիական բազմաթիվ մնացորդները, վորոնք իրենց համար տաք ու հարմար ապաստարան են գտել լեհական բուրժուազիայի թեվի տակ։

Լեհական բուրժուազիայի «խաղաղասիրությունը» պարզ յերեվում ե նույնպես մի շարք հակախորհրդային կամպանիաներից, վոր կազմակերպում ե համաշխարհային կապիտալը։ Լեհական մամուլը ինչպես նաև լեհական բուրժուական հասարակայնությունը ամենայեռանդուն մասնակցություն ցույց տվեցին ԽՍՀՄ դեմ Հռոմի պապի կազմակերպած «խաչակիր արշավանքին», [illegible] և խորհրդային «դեմպինգի» դեմ կամպանիաներին։

Խորհրդային կառավարության խաղաղ քաղաքականության բազմաթիվ ապացույցները պատշաճ պատասխան չեն գտնում Վարշավայում։ Բավական ե հիշել Լեհաստանի դիմադրությունը, յերբ նրան մեր կողմից առաջարկված եր 1929 թվին ստորագրել Կելլոգի պակտի Մոսկվայի արձանագրությունը։ Այդ առաջարկն անելով, Խորհրդային կառավարությունն իրեն պարզ հաշիվ եր տալիս, վոր արձանագրության ստորագրումն ամենեվին չի նվազեցնում ռազմական ռեալ վտանգը. սակայն նա այդ արավ նրա համար, վորպեսզի ստիպի լեհական կառավարությանը ստորագրելու մի փաստա-



թուղթ, վորը պետք ե վորոշ պարտավորություն հանդիսանար հասարակական կարծիքի առաջ, ուստի և վորոշ չափով հետաձգում լիներ թեկուզ՝ անմիջորեն մեր դեմ հարձակվելու համար։

«Պրոմպարտիայի» դատավարությունը ցույց տվեց, վոր անգլիական ու ֆրանսիական իմպերիալիզմն ունի մեր դեմ զինված ինտերվենցիայի կոնկրետ մշակված պլան և վոր գլխավոր ու հիմնական զենքն այդ պլաններում հանդիսանում ե Լեհաստանը։

Իզուր չե, վոր ֆրանսիական մամուլը Լեհաստանի մասին խոսում ե, վորպես «Յեվրոպայի արեվելքում Ֆրանսիայի բաստիոնի մասին»։

Վորչափ ավելի հաջող ե ընթանում ԽՍՀՄ սոցիալիստական շինարարությունը, այնչափ ավելի յե սրվում կապիտալի նենգությունն ու ատելությունը, և այնքան ավելի կուժեղանան նրա փորձերը՝ խանգարելու համար մեր աճմանն ու զարգացմանը։ Այս պատճառով ավելի քան յերբեվե պետք ե ուժեղացնենք մեր աչալրջությունը մեր արեվմտյան սահմանների վրա։

## 4. ԼԵՀԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Համաձայն արտաքին քաղաքականության նպատակներին ու խնդիրներին լեհական բուրժուազիան կառուցում է իր ներքին քաղաքականությունը, վորը հիմնված է լեհական ֆաշիզմի դաժան հարձակման վրա յերկրում հարաճուն հեղափոխական շարժման դեմ և ամբողջ տնտեսական օրգանիզմը պատերազմի շահերին հարմարեցնելու վրա։

Վերջին յերկու տարվա ընթացքում Լեհաստանի տնտեսությունը գտնվում ե սուր ճգնաժամի ճիրաններում։ Գյուղատնտեսությունը, վորը հանդիսանում ե յերկրի բարեկեցության հիմքը, քայքայված ե հացահատիկային մթերքների չտեսնված ցածր գներով, վորոնք միայն վերջին տարում իջել են 35 տոկոսով (ցորեն, վարսակ) և մինչեվ իսկ 50 տոկոսով (տարեկան—ռոժ)։ Այդ մթերքների արտահանությունը 1929 թվին կազմել ե հազիվ 1926 թվի արտահանու-

թյան 13 տոկոսը։ 1930 թվին արտահանությունը մնացել է 1929 թվի մակարդակի վրա, և ապագան առայժմ վոչ մի բարելավում չի դուշակում։ Խոզերի արտահանությունը, վորը կազմում է Լեհաստանի գյուղատնտեսական արտահանության 37 տոկոսը, ընկել է 1927 թվին մինչև 975·000 հատի, ընդդեմ 1926 թվի 1·320·000 հատի, այսինքն՝ կրճատվել է 27 տոկոսով։ Նախընթաց (1930 թ.) տարվա արդյունքները տակավին հրապարակված չեն, բայց նայած լեհական մամուլի նախնական յեզրակացություններին, դրությունն ավելի է վատթարացել։

Լեհաստանի արդյունաբերությունը ցնցվում է անընդհատ ճգնաժամից։ 1929 թվի հետ համեմատած 1930 թվին քարածխի հանույթն իջել է 30 տոկոսով, յերկաթի հանքինը՝ 27 տոկոսով, մետաղաձուլությունն ու մեքենաշինարարությունն իջել են 35 տոկոսով, տեքստիլ արդյունաբերությունը (վորը քարածխի հետ հավասար կազմում է լեհական արդյունաբերության վողնաշարը) իջել է 22 տոկոսով։ Վագոնների որվա միջին բարձումը 21·300-ից իջել է 18·000-ի։ Արտաքին առեվտրի շրջանառությունները 1930 թվի 9 ամսում կազմել են 3 միլիարդ 562 միլիոն զլոտի (մի զլոտը հավասար է 22 կոպեկի), ընդդեմ 1929 թվի նույն ամիսների 4 միլիարդ 419 միլիոն զլոտի, այսինքն՝ կրճատվել է 19 տոկոսով։ Սարքավորման ու գյուղատնտեսական մեքենաների ներմուծումը 1930 թվին հազիվ կազմել է 1929 թվի ներմուծման 50 տոկոսը։

«Զուտ» գործազուրկների քանակը 31 թ. հունվ. վերջում անցել է 350 հազ. հոգի, ընդդեմ նախընթաց «նորմալ» տարիների 50·000–60·000-ի, իսկ «մասամբ» գործազուրկների հետ միասին նա ընդգրկում է ամբողջ բանվոր դասակարգի 50 տոկոսին։ Գյուղում գործազուրկների թիվը 2 միլիոն հոգուց ավելի է։

Ճգնաժամի ֆոնի վրա յերկրում աճում և ամրանում է հեղափոխական շարժումը։ Բանվոր դասակարգն ավելի ու ավելի հաճախ է դուրս գալիս փողոցային պայքարի։ 1930 թվին Լեհաստանի 80 քաղաքներում տեղի ունեցան գործազուրկների ու գործադուլավոր բանվորների յելույթներ։ Զոհերի թիվը 200 հոգուց ավելի յեր։ Արեվմտյան Բելոռուսիայում և մանավանդ Արեվմտյան Ուկրայնայում 1930 թվի աշնանը տեղի ունեցավ աշխատավոր գյուղացիության հուժկու ընդվզում, վորը ճնշվեց ֆաշիզմի կողմից բացառիկ դաժանությամբ։ Հեղափոխական տրամադրությունը սկսում է մտնել և բանակի շարքերը, վորը մինչեվ այժմ յեղել եր ֆաշիզմի կույր գործիքը։ Խռովությունները ծավալված են Ռեմբերտովի, Վարշավայի ու Կրակովի զորամասերում։ Լեհական ֆաշիզմը, վորին աջակցում է ՊՊՍ սոցիալ դավաճանական կուսակցությունը, մոբիլիզացիայի յե յենթարկել պետական բռնության ամբողջ ապարատն արյան մեջ խեղդելու համար հեղափոխական շարժումը բանվոր դասակարգի մեջ ու ձախացումը գյուղացիական մասսաների մեջ։ Միակ կուսակցությունը, վորն իրոք մարտնչում է աշխատավորների շահերի համար, Լեհաստանի Կոմկուսակցությունն է. Կոմկուսակցությունը հետապնդվում է անլուր դաժանությամբ։ Կուսակցության անդամների 13·000 հոգուց 6·500 գտնվում է բանտերում, տաժանքում։

Հեղափոխական շարժումը ճնշելու հետ միաժամանակ լեհական ֆաշիզմը կռվում է նաև ազգայնական շարժման դեմ։ Լեհական բուրժուազիայի ազգային քաղաքականությունն ուղղված է՝ յերկրի և մանավանդ արեվելյան ռայոնների առավելագույն չափով «լեհացմանը»։ Բելոռուսների և ուկրայնացիների ազգային ճնշումն ընթանում է դպրոցների, լեզվի, ինքնավարության մարմինների ու այլ ուղղությամբ։ Լեհերը, վորոնք ամբողջ բնակչության զգալի փոքրամասնությունն են կազմում Արեվմտյան Բելոռուսիայում և Արեվմտյան Ուկրայնայում (10–25 տոկոս), ունեն չորս անգամ ավելի շատ ժողովրդական դպրոցներ, քան ազգային փոքրամասնությունները։ Լեհական կառավարությունը բնակեցնում է լեհական բանակի սպա-

ներին և յենթասպաներին, այսպես կոչված «օսադնիկներին» ռազմական գաղութայիններին, վորոնք պետք է հանդիսանան խաղաղ ժամանակ «հենարան», իսկ պատերազմի ժամանակ նրանք պետք է Կարմիր բանակի դեմ գալիք պարտիզանական ջոկատների կորիզը լինեն։

Լեհական պատժիչ եքսպեդիցիաների գազանություններն Արեվմտյան Ուկրայնայում 1930 թվին պերճախոս կերպով վկայում են, թե լեհական ֆաշիզմն ինչպիսի միջոցներով է մտադիր լուծելու «ազգային» խնդիրը։

Ճգնաժամի հետագա անխուսափելի խորացումը պետք է ուժեղացնի դասակարգային հակասությունների աճումը, իսկ դրա հետեվանքով պետք է արագացնի պատերազմի պատրաստությունը, վորպես միակ միջոցի, վորով ֆաշիզմը հույս ունի լուծելու կապիտալիստական Լեհաստանի հակասությունները։

Չնայած ճգնաժամին, լեհական բուրժուազիայի տնտեսական քաղաքականությունն ամբողջովին ծառայում է գալիք պատերազմի նպատակներին։ Ժամանակակից Լեհաստանի գոյության տասներկու տարվա ընթացքում մենք չենք տեսնում վոչ մի շինարարություն, վորը համապատասխաներ յերկրի իսկական տնտեսական շահերին. բայց դրա փոխարեն կառուցվում են արդյունաբերության այնպիսի ճյուղեր, վորոնք անմիջապես կամ կողմնակի ձևով ծառայում են նրա մարտական կարողի ամրացմանը։

Ամենից առավել զարգացում է ստացել զուտ ռազմական ու քիմիական արդյունաբերությունը։ Այդ յերկու ճյուղերն էլ աշխատում են ծայրահեղ բեռնվածությամբ, ամենեվին չզգալով արտադրանքի ճգնաժամային վոչ մի անկում։ Վերջին տարիներս կառուցված է 19 նոր ռազմական գործարան (6 փամփշտա-արկային, 3 հրացանագնդացրային, 5 ավիագործարան և 2 ավտոմոբիլային)։ Ռազմական արդյունաբերության արտադրանքը վոչ միայն արդեն լիովին բավարարում է լեհական բանակի խաղաղ ժամանակվա պահանջներին, այլև մասամբ սկսում են հայթայթել



հարեվան պետություններին։ Պատերազմի ժամանակ նա կկարողանա բավարարել բանակի պահանջների 25–40 տոկ.։ Ռազմ. արդյունաբերությունը լիովին ապահովված է պատվերներով ու մեծ չափերով նպաստներով։

Ռազմական արդյունաբերության հետ միասին ամենից ուժեղ չափով աճել է քիմիական արդյունաբերությունը։ 1930 թվի փետրվարին բացված է հսկայական քիմիական գործարան Տարնովայի շրջանում, վորի արժեքն է 100 միլիոն զլոտ (22 միլիոն ռուբլի)։ Բորակածնային (ազոտի) նյութերի արտադրանքն աճել է 1923 թվի 39.000 տոննից 1930 թվին 160.000 տոննի, այսինքն՝ այդ ժամանակամիջոցում աճել է 4 անգամ։ Ծծմբային թթվի արտադրանքը 1923 թվի 218.000 տոննից 1930 թվին աճել է 330.000 տոննի, արհեստական մետաքսինը՝ 400.000 տոննից հասել է 2.510 հազար տոննի, այսինքն՝ աճել է ավելի քան 6 անգամ։ Քիմիական արդյունաբերության մեջ ներկայումս աշխատում են 40.000 բանվորից ավելի։ Միեվնույն ժամանակ քիմիական պարարտանյութերի արտադրանքը մնում է չափազանց ցածր մակարդակի վրա. Լեհաստանում մեկ հեկտար հողին ընկնում է միջին թվով 8,8 կիլոգրամ քիմիական պարարտանյութ (ընդդեմ հարեվան Գերմանիայի 45–50 կիլոգրամի), և գոյություն ունեցող գործարաններն աշխատում են 50 տոկոս բեռնավորումով։

Լեհական ֆաշիզմի բոլոր ջանքերն ուղղված են պատերազմի պատրաստության ապահովմանը։ Ռազմական պաշտոնական բյուջեն ավելացել է, 1926–27 թվի 28 տոկոսից հասնելով 1931 թվին 34 տոկոսի, իսկ վոչ պաշտոնական ռազմական բնույթի հատկացումների հետ միասին կազմում է պետական ամբողջ բյուջեյի 50 տոկոսը, և միեվնույն ժամանակ գործազուրկների նպաստների ֆոնդն այդ ժամանակամիջոցում նվազել է 53,6 միլիոն զլոտից հասնելով 50 միլիոն զլոտի։ «Ռազմականացված է» ամբողջ քաղաքացիական ապարատը։ Պիլսուդսկու հուսալի սպաները

ժամկետից շուտ զորացրվում են ու նշանակվում են քաղաքացիական վարչական պաշտոնների, նպատակ ունենալով ամբողջ պետական ապարատը հարմարեցնելու պատերազմին: Հսկայական զարգացում է ստացել ֆաշիստական միությունների կազմակերպումն ու ամրացումը, վորոնց անդամների քանակը հասնում է 1·250·000 հոգի պատկառելի թվին:

Տնտեսական ճգնաժամը, ազգային-ազատագրական շարժումը Լեհաստանի արեվելյան նահանգներում և սեյմի վերջին ընտրությունները—այս բոլորն աճող քաղաքական ճգնաժամի նշաններն են: Համաշխարհային ընդհանուր կոնյունկտուրա չի տալիս վոչ մի նախադրյալ դրությունը բարելավելու համար, բայց ֆաշիստական դիկտատուրայի ամրացումն ու սրումը անկասկած կարագացնի պատերազմի պատրաստությունը, վորպես յելք ճգնաժամից, վորին դրդում են թե՛ իր սեփական ֆաշիստական խմբավորումները և թե՛ Անգլիայի և մանավանդ Ֆրանսիայի իմպերիալիզմը,—նոր պատերազմի գլխավոր նախաձեռնողը:

## 5· ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՈՒ ՏՎՅԱԼՆԵՐ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

1· Լեհաստանը գրավում է 388·400 քառակուսի կիլոմետր տարածություն: 1931 թվին բնակչությունը հաշվվում եր մոտ 31 միլիոն մարդ: Ազգային կազմը միատեսակ չէ: Լեհերն ամբողջ յերկրում կազմում են 60–65 տոկոս, բայց վորում Արեվմտյան Բելոռուսիայում և Արեվմտյան Ուկրաինայում այդ տոկոսը 30-ից չի անցնում, իսկ տեղ-տեղ հասնում է մինչեվ իսկ 12-ի, ուկրաինացիները կազմում են 15 տոկոս, բելոռուսները՝ 5 տոկոս, հրեաները՝ 8 տոկոս, գերմանացիք՝ 4 տոկոս, այլ ազգությունները՝ 5 տոկոս:

2· Լեհաստանը տնտեսապես ներկայացնում է իրենից ագրարային արդյունաբերական յերկիր: Գյուղատնտեսությամբ զբաղված է ամբողջ բնակչության 75 տոկոսը: Ագրարային հարաբերություններում նա



տակավին չի վերացրել ֆեոդալիզմի մնացորդները: Գյուղացիությունը շնչահեղձ է լինում սակավահողությունից և նստած է գաճաճային հողաբաժինների վրա: Գյուղացիների 20 տոկոսը միանգամայն զուրկ է հողից: Գյուղացիական տնտեսությունների հիմնական մասսայի 60 տոկոսն ունի հողի 12 տոկոսը, մինչդեռ կալվածատերերի չնչին խմբակի ձեռքում (0,5 տոկոս) կենտրոնացված է լավագույն հողի 27 տոկոսը: Բացի կալվածատերերից բարձր է ունեվորների ու կուլակների խավը (12 տոկոս):

1920 թվին Սեյմի ընդունած, այսպես կոչվող, «հողային ռեֆորմը» ծառայեց հողատեր կուլակության ու ռազմական գաղութացման ամենափոքր չափով անգամ չթեթևացրեց չքավորագույն ու միջակ գյուղացիության կարիքը:

Ֆեոդալիզմի մնացորդները կապված գյուղացիության ստորին շերտի սուր հողային սովի ու չքավորության հետ պատճառ են հանդիսանում գյուղացիական տնտեսության ցածր արտադրողականությանը: Դաշտերի բերքատվությունն Յեվրոպայում ամենացածր բերքատվություններից մեկն է. ցորենը տալիս է մեկ հեկտարից 12,5 կվինտալ (Գերմանիայում՝ 22,3 կվինտալ). գարին՝ 13,2 կվինտ. (Գերմանիայում՝ 22), տարեկանը (ռոժ)՝ 11,4 կվինտ. (Գերմանիայում՝ 18,4), կարտոֆիլը՝ 110,4 կվինտ. (Գերմանիայում՝ 145): Արվեստական պարարտացումները գործադրվում են 5–7 անգամ պակաս, քան Գերմանիայում: Մշակվող հողի ընդհանուր տարածությունից 12,5 միլիոն հեկտարը (1928 թվին) տարեկանի ցանքերը կազմել են 5,5 միլիոն հեկտար, կարտոֆիլինը՝ 2,5 միլ. հեկտ., գարունը՝ 2 միլիոն հեկտ., վարսակինն ու ցորենինը՝ 2–3 միլ. հեկտ.: Տարեկանի արտադրությամբ, 61 միլիոն կվինտալ, Լեհաստանը գրավում է 3-րդ տեղը (ԽՍՀՄ՝ 119 միլ. կվինտ., Գերմանիան՝ 85,2 միլ. կվինտ.), կարտոֆիլով (276 միլ.) գրավում է դարձյալ 3-րդ տեղը ԽՍՀՄ-ից (546 միլ. կվինտ.) և Գերմանիայից (412 միլ. կվինտ.) հետո:

Լեհաստանի գյուղատնտեսության մեջ զգալի տեղ է գրավում ճակնդեղ-շաքարային արդյունաբերությունը, վորի արտադրանքը կազմում է 750·000 տոնն (Գերմանիայում՝ 1·864·000 տոնն, ԽՍՀՄ՝ 1·425 հազար տոնն): Անասնաբուծության ասպարեզում խիստ զարգացած է խոզաբուծությունը: Լեհաստանի ընդհանուր արտահանման մեջ գյուղատնտեսության բաժինը կազմում է 50 տոկոսից ավելին:

3· Լեռնային արդյունաբերության հիմքը Լեհաստանում կազմում է քարածուխը, նավթն ու յերկաթե հանքը (Վերին Սիլեզիա և Արևմտյան Ուկրայնա): Մշակողական արդյունաբերության մեջ առաջին տեղը բռնում է տեքստիլ արդյունաբերությունը (160 հազար բանվոր), մետաղագործականը՝ (95·000 բանվոր), սննդային՝ (90·000), անտառային՝ (60·000), քիմիական՝ (40·000):

Արդյունաբերության արտադրանքը վոչ մի անգամ դեռ չի բարձրացել նախապատերազմյան մակարդակից, և 1928 թվին (ամենաբարձր կոնյունկտուրայի տարին) կազմել է 1913 թվի նկատմամբ 75–90 տոկոս: Վերջին յերկու տարում անընդհատ տեղի յե ունենում արտադրության կրճատում արդյունաբերության բոլոր ճյուղերում, բացառությամբ ռազմականի ու քիմիականի:

## ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ·

ա) «Կառավարության հետ աշխատակցության անկուսակցական բլոկ» (կրճատ՝ «Բեբեկի»)—ֆաշիստական քաղաքական խմբավորում, վորը ստեղծել է Պիլսուդսկին 1927 թվին: Կորիզը կազմում են գնդապետները՝ Պիլսուդսկու հին զինակիցները: «ԲԲ» միացնում է զանազան տարրեր, սկսած ագրարներից ու միապետականներից մինչև կուլակներն ու «սոցիալիստների» մի մասը ներառյալ: Նրանք արտահայտում են խոշոր ագրարային ու բուրժուազիայի, ինչպես նաև գյուղացիության վերնախավի շահերը: Արտաքին քաղաքական



ծրագիրն է «Մեծ Լեհաստան» ստեղծելն ի հաշիվ ԽՍՀՄ: Ներքին քաղաքականության մեջ՝ դաժան ճնշում հեղափոխական և ազգային-հեղափոխական շարժման: Վերջին ընտրություններում նրանք «ստացան» 248 մանդատ (1928 թվին՝ 122 մանդատ):

բ) «Ազգային-ժողովրդական Միություն» (կրճատ՝ «Էնդեկ»)—անցյալում խոշոր բուրժուազիայի կուսակցություն, ներկայումս արտահայտում է մանր բուրժուազիայի և մասամբ միջին բուրժուազիայի շահերը: Մեծ ազդեցություն ունի Լեհաստանի արևմտյան մասում: Վերջին ընտրություններում ստացել է 63 մանդատ, ընդդեմ 1928 թ· 38 մանդատի:

գ) «Քրիստոնեական դեմոկրատներ» (այսպես կոչվող «Խադեկ»)—մանր-բուրժուական, խիստ կղերական կուսակցություն, վորն ազդեցություն ունի նաև բանվորների ամենից հետամնաց վորոշ մասի վրա: Անցյալ սեյմում նա ներկայացված եր 21 պատգամավորներով, վերջին ընտրություններում ստացավ միայն 14 մանդատ:

դ) «Պյաստ», «Վիզվոլենիյե» և «Ստրոնիցտվո խլոպսկե» գյուղացիական կուսակցություններ, վորոնք արտահայտում են կուլակային-միջակային տրամադրություններ և թրև են գալիս «ոպոզիցիայի» ու «պիլսուդչիկների» միջև: Ամենից հաճախ աջակցում են վերջիններիս:

ե) «Սոցիալիստների լեհական կուսակցություն» («Պեպեես»)—լեհ սոցիալ-ֆաշիստներ, բանվոր դասակարգի դավաճաններ: Ձևականորեն Պեպեեսը «ոպոզիցիա յե» կազմում կառավարության դեմ, բայց փաստորեն ոգնում է Պիլսուդսկուն և արգելակ է հանդիսանում յերկրում հեղափոխական շարժման աճման դեմ: Նրա ազդեցությունը բանվոր դասակարգի միջև խիստ ընկնում է վերջին ժամանակներս: Անցյալ սեյմում նա ուներ 175 պատգամավոր, իսկ վերջին ընտրություններում հազիվ ստացավ 79 մանդատ գյուղացիական կուսակցությունների հետ միասին:

զ) Ազգային-բուրժուական կուսակցություններ

(Ուկրաինական ՈՒՆԴՈ և ՈՒՆՐՈ, բելոռուսական ազգայիններ)—արտահայտում են ազգային բուրժուազիայի և կուլակության շահերը: Լեհ ֆաշիզմի վերջին դաժանությունների ժամանակ Արևմտյան Ուկրաինայի գյուղացիության դեմ հիմնականում ոգնում էր Պիլսուդսկուն:

## ԼԵՀԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Լեհ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական պայքարի, ինչպես նաև Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի աշխատավորների ազգային հեղափոխական շարժման պատմության մեջ Լեհաստանի կոմկուսակցությունը միանգամայն բացառիկ տեղ է գրավում:

Իր գոյության առաջին իսկ օրերից (1918 թ. դեկտեմբերից) ԼԿԿ բռնել է անխնա ու անհաշտ պայքարի ուղին լեհական բուրժուազիայի ու նրա «սոցիալիստական» լակեյների Պեպեեսի դեմ, որի համար նա մի քանի շաբաթվա կիսալեգալ գոյությունից հետո 1919 թվի հունվարի կեսին քշված է ընդհատակ և այդ գրությունից դուրս չի յեկել մինչև այժմ: Լեհական կոմկուսակցությունը գործով ապացուցեց իր նվիրվածությունը պրոլետարական հեղափոխության գործին: 1920 թվի լեհ—Խորհրդային պատերազմի շրջանում նա միակ կուսակցությունն էր, որը բացահայտ կերպով կանգնել էր խորհրդային հանրապետության շահերի պաշտպան: Ներկայումս, յերբ լեհական բուրժուազիայի մեջ աճում են իմպերիալիստական տենդենցները, ուղղված մեր դեմ, յերբ յերկրում սրվում են դասակարգային հակասությունները, ԼԿԿ հանդիսանում է միակ ուժը, որը չի վախենում իրեն հակադրել ֆաշիստական դիկտատուրայի ռեժիմին, չնայած դաժանագույն տերրորին, տանջանքներին ու հալածանքներին, որոնց նա յենթարկվում է: Ընդհակառակը, յերբեք կոմկուսակցության ազդեցությունը բանվոր դասակարգի ու գյուղացիության լայն խավերի վրա այնչափ ուժեղ չի յեղել, որչափ այժմ: Բավական է մատնանշել, որ սեյմի 1930 թվի վերջին ընտրություններում ԼԿԿ ստացավ



մոտ 140.000 ձայն, այսինքն՝ մեկ կոմունիստը իր հետևվից տանում է հարյուրից ավելի անկուսակցականների: Ֆաշիստական տերրորի պայմաններում, դա բացառիկ նշանակության հաղթանակն է, ընդ որում ամենակարևորն այն է, որ ԼԿԿ ազդեցության աճումը մասսաների վրա կատարվում է ՊԵՊԵԵՍԻ—սոցիալ դավաճանական կուսակցության ազդեցության անկման հաշվին: Առօրյա պայքարի պրակտիկայում աշխատավորների լայն մասսաները քանի գնում ավելի ու ավելի յեն ազատագրվում «համաշխարհային պայքարի» ցնորքից, որ քարոզում են ֆաշիստական բանակի «սոցիալիստները», և քանի գնում այդ մասսաները ավելի ակտիվ կերպով են անցնում փողոցային մարտերին ու ցույցերին կոմկուսակցության ղեկավարությամբ: Ի պատասխան լեհական ֆաշիզմի իմպերիալիստական ծրագրի, ԼԿԿ պայքար է մղում Խորհրդային Լեհաստանի համար: Ազգային հարցում, որն այնքան նշանավոր տեղ է գրավում Լեհաստանի ներքին կյանքում, ԼԿԿ Արևմտյան Ուկրաինայի կոմկուսակցության և Արևմտյան Բելոռուսիայի կոմկուսակցության յեղբայրական կազմակերպությունների հետ մեկտեղ պայքար է մղում բելոռուսական և ուկրաինական մասսաների ազատագրության համար ընդդեմ սեփական ազգայնական բուրժուազիայի և նացիոնալ ֆաշիզմի, ընդդեմ լեհական օկկուպացիայի և կանգնած է ինքնորոշման համար մինչև անգամ նույնիսկ առանձնացման և ՈՒԽՍՀ յեվ ԲԽՍՀ կցման համար:

ԼԿԿ բռնած կայուն ու անհաշտ դիրքը, նրա մասսաներին ղեկավարելու ճշմարիտ գիծը գազանային ատելություն է առաջացնում դեպի նա ամբողջ ֆաշիստական բանակի կողմից: Կուսակցության անդամների 50 տոկոսը (6500 մարդ 13 հազարից) բանտերն են քշված և տաժանակիր աշխատանքի ուղարկված, որտեղ նրանք «դեմոկրատիկ» կառավարության կողմից, սոցիալ-ֆաշիստների լռելյայն համաձայնությամբ, մատնված են ամենադաժանական կտտանքների, ինչպես այդ տեղի ունեցավ Լուցկի բանտում: Կոմկուսակցությունը պատկա-

նելու համար միջին հաշվով դատավճիռ են հանում 4–5 տարի տաժանակիր աշխատանքի։ Բանտարկվածների մեծ տոկոսը յերիտասարդներ են։

Ձերբակալությունները, հետապնդումները, տաժանակիր աշխատանքն ու կտտանքները անկարող են յետ կասեցնելու կոմկուսակցությանը իր գործունեությունից։ Չնայած իր հարաբերական սակավաքանակ թվին, վորը գլխավորապես կախված է ընդհատակյա գործունեության բացառիկ պայմաններից, ԼԿԿ Արևմ. Ուկ. կոմկուսակցության և Արևմ. բելոռուսական կոմկուսակցության յեղբայրական կազմակերպությունների հետ միասին կազմում է այն իրական ուժը, վորն այսօր խիստ ուժեղ տագնապ է առաջացրել լեհական բուրժուազիայի շրջանում։

Կոմյերիտականների թիվը այժմ հաշվում են մոտ 6000 մարդ։ Այդ մի խիզախ մարտական կազմակերպություն է, վորի ազդեցությունը քանի գնում ավելի յե տարածվում բանվոր յերիտասարդության շրջանում։ Վերջին ժամանակներս կոմյերիտմիությունը ուժեղ թափով ներխուժում է և գյուղը։

## ԼԵՀԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

1931 թ. հունվար 1-ին լեհական բանակի թիվը հետևյալն էր.—ցամաքային բանակ—273 հազար 200 մարդ ծովային տորմիղ—3 հազար 450 մարդ, սահմանապահ կորպուս—27 հազար 450 մարդ, ընդամենը—304 հազար 100 մարդ։

Բացի դրանից, զինված ուժերի թվին պետք է ավելացնել և սահմանապահ զորքի թիվը, վորը սահմանների պահպանության ծառայություն է տանում գերմանական, չեխո-սլավակյան և ռումինական սահմանների վրա, և վոստիկանության թիվը։ Սահմանապահ զորքի թիվն այժմ հասնում է 6 հազար 100 մարդու, իսկ վոստիկանությանը—32 հազար 300 մարդու։ Այսպիսով Լեհաստանի զինված ուժերի ընդհանուր թիվն է՝ 342 հազար 500 մարդ, վորը կազմում է Լեհաստանի ամբողջ բնակչության 1,2 տոկոսը (Լեհաստանը ունի 30 միլիոն



բնակչություն)։ Մեր Միության մեջ բանակը կազմում է ամբողջ բնակչության 0,4 տոկոսը։ Լեհաստանում յուրաքանչյուր 1000 մարդուն ընկնում է 11,4 մարդ-զինվոր, այն ժամանակ, յերբ մեր Միության մեջ ընկնում է միայն 4 կարմիր բանակային։

Մեկ կիլոմետր սահմանի համար ընկնում է Լեհաստանում 64,1 զինվոր, իսկ մեզանում 16։

Լեհական բանակի զորքերի տեսակների հարաբերակցությունը հետևյալն է (առանց սահմանապահ զորքի և առանց վոստիկանության)՝ հետևակը սահմանապահ կորպուսի հետ միասին կազմում է 53 տոկոսը, հեծելազորը— 13 տոկ., հրետանին— 18 տոկ., ճարտարագիտական-տեխնիկական զորքերը— 8 տոկոս, ոդային տորմիղը— 3,5 տոկ., ծովային տորմիղը— 1,2 տոկոս, ծառայություններ, դպրոցներ և այլն միասին —2,3 տոկոսը։

Լեհական հետևակի մեջ է մտնում՝ 1) 90 հետևակային գնդերը, վորոնք ամփոփված են 30 հետևակային յերեքգնդանի դիվիզիաներում 2) 2 առանձին հրաձգային գումարտակներ և 3) 1 մանեվրական գումարտակ։

Հետևակի ընդհանուր թիվը ամառը հասնում է մինչև 168 հազար մարդու, ձմեռը—մինչև 108 հազար մարդու։ [1])

Լեհական հեծելազորը կազմված է 40 հեծգնդերից, վորոնք ամփոփված են վեցգնդանի կազմ ունեցող մեկ հեծդիվիզիայում, 2 հեծբրիգադ 4-գնդանի կազմով, 8 հեծբրիգադ 3-գնդանի կազմով և 1 հեծբրիգադ 2-գնդանի կազմով։

Հեծելազորի ընդհանուր թիվն հասնում է մինչև 38 հազար մարդու։

[1]) Ամառվա և ձմեռվա հետևակի թվի մեջ յեղած տարբերությունը բացատրվում է նրանով, վոր նորեկները զորամաս են գալիս մարտ ամսին, իսկ զորացրումը (հին ծառայողների) կատարվում է հոկտեմբերին։ Այսպիսով հոկտեմբերից մինչև մարտ հետևակի թիվը պակասում է մեկ կոնտինգենտով։

Լեհական բանակի հրետանին կազմում են՝ 1) 30 թեթև հրետագունդ, որոնք մեկական մտնում են հետևակ դիվիզիաների կազմի մեջ. գնդերն ունեն 3-ական բաժնյակ 2 բաժնյակը թնդանոթային, 1-ը հոբիցային) բաժնյակը (դիվիզիոնը) կազմված է 3 մարտկոցից, մարտկոցը՝ 4 հրանոթից:

2) 3 բաժնյակի կազմով (ծանր հերտանու 10 գունդ. բաժնյակը—3 մարտկոցից, մարտկոցը—4 հրանոթից, բաժյակները խառն են.

3) 3 բաժնյակի կազմով (ծանր հրետանու 10 գունդ. յուրաքանչյուրը 3-ական մարտկոցով, մարտկոցում 4-ական հրանոթ.

4) 2 բաժնյակի կազմով մեկ լեռնահրետանական գունդ.

5) 3 մարտկոցի կազմով 13 հեծհրետանական բաժնյակներ. Փ

6) 3 բաժնյակի կազմով 1 մանեվրական գունդ.

7) 1 զենիթային գունդ:

8) 6 առանձին զենիթային բաժնյակներ.

9) բերդային հրետանու 1 վաշտ.

10) տեխնիկական չափումների բաժնյակ:

Հրետանու ընդհանուր թիվը խաղաղ ժամանակ հասնում է 48 հազար մարդու, 890 թեթև թնդանոթներ, 370 թեթև հոբիցներ, 134 ծանր թնդանոթներ, 268 ծանր հոբիցներ և 40 զենիթային հրանոթներ:: Պատերազմի ժամանակ հրանոթների թիվը կավելանա 2–2½ անգամ:

Լեհաստանի օդային տորմիղը կազմված է՝ 6 ավիագնդերից, 2 օդաչուական գումարտակներից և 1 հիդրոբաժնյակից:

Օդային տորմիղի ընդհանուր թիվը հասնում է 9 հազար մարդու:

Ընդամենը Լեհաստանում զինվորման մեջ և պահեստում կա մինչև 2 հազար [illegible], որա մեջ հաշվելով և մարզական ու վարժական ապարատները:



## Ճարտարագիտական-տեխնիկական զորքերը.

| | |
|---|---|
| Ճարտարագիտական -սակրավորական մասեր | 8 սակրավորական գումարտակ,<br>1 կամրջային գումարտակ,<br>1 էլեկտրատեխնիկ. գումարտակ,<br>2 կամրջային յերկաթուղային գումարտակ,<br>1 [illegible] գումարտակ |
| Կապի զորքեր | 2 հեռագրական գունդ,<br>3 առանձին հեռագրական գումարտակ,<br>1 ռադիո հեռագրական գունդ,<br>6 աղավնատարական դասակներ: |
| Ավտոզորքեր | 10 ավտոբաժնյակներ,<br>1 քիմիական զորքերի գումարտակ |

Վերոհիշյալ զորքերի ընդհանուր թիվն է 21 հազար:

Զրահավոր զորքերը կազմված են՝

1) 3 գումարտականի կազմով (3-ական վաշտ յուրաքանչյուրում) մեկ տանկային գնդից.

2) 3 և 2 ավտոզրահեսկադրային կազմով (յուրաքանչյուր ավտոզրահեսկադրայում 12-ական մեքենա) յերկու ավտոզրահբաժնյակներից.

3) յերկու զրահագնացքների բաժնյակներից, յուրաքանչյուրում 2-ական զրահագնացք և.

4) փորձական զրահական խմբակից:

Զրահավոր զորքերի ընդհանուր թիվը հասնում է մինչև 2400 մարդու:

Զրահավոր զորքերի համար նյութական մասը լեհերը գնում են արտասահմանում, գլխավորապես Ֆրանսիայից: Զինվորման մեջ կան փոքր տանկեր «Ռոնո» տիպի: Ընդամենը լեհերի տանկերի թիվն է մինչև 250 հատ, զրահագնացքներ մինչև 30 հատ և զրահավտոմոբիլներ—մինչև 120 հատ: Վերջին ժամանակներս— 1½–2 տարվա ընթացքում լեհերն սկսել են արագ տեմպերով զարգացնել իրենց զրահամասերը: Մինչայդ զրահամասերի զարգացումը թույլ էր ընթանում: Վերջին ժամանակներս արդեն ձեռք են բերել տանկետկաներ և ավելի նոր տիպարի տանկեր:

Լեհաստանի սահմանապահ կորպուսը բաղկացած է 29 սահմանապահ գումարտակներից և 2 հեծելավաշտերից, վորոնք ամփոփված են 6 սահմանապահ բրիգադներում: Բրիգադներում ամփոփված գումարտակների ու հեծելավաշտերի (էսկադրոնների) թիվը տարբեր է. և դա կախված է նրանից թե ինչ յերկարության սահման է պահպանում այս կամ այն բրիգադը: Սահմանապահ կորպուսը հանդիսանում է, վորպես մի ինքնուրույն զորական միավոր. ունի իր ոգնական ծառայությունները, դպրոցները և այլն:

Այդ կորպուսը պահվում է ներքին գործոց մինիստրության հաշվին: Ոպերատիվ տեսակետից նա յենթարկվում ռազմական մինիստրին: Կորպուսը համալրվում է բանակի շարքային ու հրամանատարական լավագույն կազմից: Անձնական կազմը 80 տոկոսով կազմված է լեհերից և կանչվում են ամենից ավելի նվիրված տարրերից: Իր մարտական պատրաստությամբ կորպուսը վոչ թե յետ է մնում է, այլ ավելի շուտ գերազանցում է շատ հետևակային զորամասերից:

Լեհաստանի ծովային ուժերը կազմում են ծովային և գետային տորմիղները: Ծովային տորմիղը կազմում են.

1) 2 էսկադրային ականակիրներ 1,540 տ. ջրատարողությամբ, 33 հանգույց արագությամբ, զինված չորս 13 սանտիմետրանոց թնդանոթներով և 55 սանտիմետրանոց տորպեդային վեց ապարատներով.

2) 3 ջրասուզական խափանիչներ, ջրատարողությամբ 980/1250 տ., և 14/9 հանգույցի արագությամբ, վորոնք ունեն մեկ 10 սմ. թնդանոթ, մեկ 4 սմ. թնդանոթ, վեց 55 տորպեդային ապարատներ (լեհական ջրերում առայժմ կա միայն մեկ խափանիչ, մնացած յերկուսը 1931 թ. մտնում են տորմիղի կազմի մեջ).

3) 5 ականակիր, վոր ստացել են գերմանացիներից Վերսալյան դաշնագրի համաձայն 375-ական տ. ջրատարողությամբ յուրաքանչյուրը, 22 հանգույց արագությամբ մեկ ժամում, զինված է յերկու 4,7 սմ. թնդանոթ



ներով, 2 գնդացրով և մեկ 45 սմ. տորպեդային ապարատով յուրքանչյուրի վրա.

4) 4 տրալշչիկ և

5) 5 ոգնական նավեր:

Մոտիկ ապագայում (արդեն միջոցներ են հավաքում) նշված է կառուցել ևս 2 սուզանավ և 2 էսկադրային ականակիր:

Գետային տորմիղ (այսպես կոչված Պինյան նավախումբ) կազմված է՝

1) 8 գետային մոնիտորներից, ջրատարողությամբ 70 տ., 8,5 հանգույց մի ժամում արագությամբ, վորոնք ունեն մեկական 10 սմ. հոբից, յերկուական 75 մմ. թնդանոթ և յերեքական գնդացիր (4 մոնիտորների վրա 5-ական գնդացիր).

2) 5 գետային ամբանված նավակներից (զինված անվային նավեր), ջրատարողությամբ 35–110 տ., 8–9 հանգույց արագությամբ մի ժամում. զինված է՝ յերկուական 75 մմ. թնդանոթներով և չորսական գնդացրով յուրաքանչյուրը.

3) Մի քանի մոտորային զանազան տիպի կատերներից 5–12 տ. ջրատարողությամբ, զինված է մեկ 37 մմ. թնդանոթով և գնդացրերով (4-ից մինչև 2).

4) 4 ոգնական նավերից, 30-ական տ. ջրատարողությամբ, 7–9 հանգույց արագությամբ մի ժամում. զինված է յերկու 37 մմ թնդանոթներով և 2 գնդացրով:

Լեհաստանի առևտրական տորմիղը ներկայումս կազմված է 26 միավորներից 35 բրուտո-ռեգիստր տ. բեռնամբարձությամբ: 1931 թվի ընթացքում սպասվում է առևտրական տորմիղի մեծացում ևս 25–30 միավորով:

Միաժամանակ զարգացնելով իր ռազմական և առևտրական տորմիղները, լեհերը ձեռնամուխ են յեղել իրենց նավահանգիստ Գդինի կառուցմանը, վորի կառուցումն արդեն վերջանալու վրա յե: Նավահանգստի բռնած տերրիտորիան հասնում է մինչև 700 հեկտարի, ջրային մակերեսը—մինչև 300 հեկտար: Նավահանգիստն ունի 8 հազար 900 մ. նավակայքի գիծ առև-

տրական նավերի համար, 6-ից մինչև 10 մ. խորությամբ:

Ռազմական նավահանգստում նավակայի գծեր կան 1300 մ. 8 մ. խորությամբ: Նավահանգստում կան նույնպես այլ հարմարանքներ.—կրաններ. ածխաբարձ, պահեստներ և այլն:

Ներկայումս իր սարքավորումով Գդինի նավահանգիստն արդեն հանդիսանում է վորպես լավ բազա խոշոր տորմիղի համար, վորի նավային կազմի մեջ կարող են մտնել գծային ուժերը:

Բացի վերևում հիշված զորքերի հիմնական տեսակներից, լեհական բանակում կան դեռ ամբողջ մի շարք զորքեր ոգնական նշանակություն ունեցող. ինչպես օրինակ՝ սանիտարական զորքեր, գումակային, ժանդարմեական, վարչական գումարտակներ, հեծանվորդների վաշտերը և վերջապես ծառայություններ, այսինքն՝ մարմիններ, վորոնք բանակի հայթայթման գործն են կատարում:

Այսպիսով, վերևի ասածներից մենք այն յեզրակացությանն ենք հանում, վոր լեհերը, համեմատած մյուս պետությունների հետ, մասնավորապես մեր Միության հետ, ունենալով վոչ մեծ յերկրամաս և բնակչություն, պահում են չափազանց ուժեղ և լավ սպառազինված և սովորած կադրային բանակ, վորը հնարավորություն կտա նրանց պատերազմի սկզբից բանակն ընդարձակել մոտավորապես 2 անգամ ավելի: Այդքան բազմամարդ բանակ պահելը լեհերի վրա շատ թանգ է նստում:

Բանակի վրա և նոր պատերազմի համար պատրաստության վրա ծախսերը խլում են ամբողջ բյուջեյի յելքի 50 տոկոսը, վոր մոտավորապես կազմում է 350 միլիոն վոսկի ռուբլի: Այդ գումարի մեջ են մտնում վոչ միայն ռազմական մինիստրի ծախսերը, այլ և մյուս մինիստրությունների այն ծախսերը, վորոնք արվում են սահմանապահ կորպուսը պահելու վրա (Ներքին գործոց մինիստրություն), կենսաթոշակ և նպաստ են տալիս պատերազմի հաշմանդամներին և զինվորա-



կան ծառայողներին, վորոնք զորացրված են (սոցիալական ապահովագրության մինիստրություն): Այս գումարի մեջ են մտնում և ռազմական արդյունաբերության ծախսերը, վոր վերջին ժամանակներս հասնում է մինչև 42 միլիոն վոսկու ռուբլու: Ռազմական մինիստրության պաշտոնական բյուջեն կազմում է ընդհանուր պետական բյուջեյի մինչև 37 տոկոսը, վոր մոտավորապես հավասար է 150 միլիոն վոսկու ռուբլու:

Ռազմական ծախսերի ամենախոշոր մասը առաջին հերթին արվում է, ի հարկե, բանակը պահելու վրա, այսինքն՝ բանակի բավարարման և մատակարարման վրա, և յերկրորդ հերթին, սպառազինման նյութական մասի մոբիլիզացիոն պաշարների կուտակման վրա: Մոբիլիզացիոն պաշարների համար գնում է ամբողջ ռազմական ծախսերի համարյա 14–15 տոկոսը, վորը մոտավորապես կազմում է 25–26 միլիոն վոսկի ռուբլի:

Այնուհետև նշանավոր գումար է ծախսվում ոդային և ծովային տորմիղների վրա:

Ընդհանուր առմամբ Լեհաստանի բնակչության մի անձին ընկնում է մինչև 12 վոսկի ռուբլի տարեկան, այն ժամանակ յերբ մեր Միության մեջ այդ ծախսերը կազմում են 3 ռուբլի, Ամերիկայում—6 ռուբլի, Գերմանիայում—մոտ 5 ռուբլի, իսկ Ֆրանսիայում հասնում է 17 ռուբլու:

Այդ ծախսը ավելի ցուցադրական և տեսանելի յէ հետևյալ թվերից. մեկ զինվորի վրա մի տարում ռազմական ծախս է արվում մինչև 700 ռուբլի, այնինչ այդ զինվորին միայն կերակրելու, պահելու վրա ծախս է արվում (այստեղ հաշված և նրա բոլոր տեսակի բավարարումը, բնակարանի և տեխնիկական հայթայթման ծախսերը)—400 ռուբլի: Այդպիսով 300 ռուբլի մնում է սպառազինման նյութական մասի կուտակման համար, ռազմական արդյունաբերությունը զարգացնելու համար, ռազմական դպրոցներ պահելու համար և այլ ծախսեր:

Վերևի ասածներից մենք տեսնում ենք, վոր պետական ծախսերի $2/3$-ը կլանում է բանակը և ռազմական

արդյունաբերությունը: Չնայած ծանր տնտեսական դրություն են ապրում, լեհերը չեն նվազեցնում իրենց ռազմական ծախսերը, այլ ընդհակառակը, տենդենցներ կան տարեցտարի ավելացնելու այդ ծախսերը: Տնտեսական ճգնաժամի ազդեցության շնորհիվ լեհական արդյունաբերությունը աշխատում է վոչ լրիվ թափով, ձեռնարկությունները կրճատվում են: Աճում է գործազրկությունը, իսկ ռազմական արդյունաբերությունը ընդհակառակը, ընդարձակվում է և աշխատում լրիվ թափով մասսաների աղքատացման հետ ավելանում են տուրքերը, վորովհետև լեհական բուրժուազիայի համար անհրաժեշտ են, ինչպես մենք տեսանք վերեվում, հսկայական միջոցներ իրենց զինված ուժերը պահելու համար:



# IX. ՌՈՒՄԻՆԻԱ

1. Ռումինիան պատերազմից հետո 2. Ռումինիայի տնտեսական ու քաղաքական դրությունը: 3. Քաղաքական կուսակցություններն ու նրանց քաղաքականությունը: 4. Յերկրի փաշիստացումը և պալատական հեղաշրջումը: 5. Ռումինիան և ԽՍՀՄ: 6. Ռումինիան պատրաստվում է ինտերվենցիայի:

## 1. ՌՈՒՄԻՆԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Ռումինիան համաշխարհային պատերազմի հետեվանքով յերկու անգամ մեծացավ ինչպես իր բռնած տարածությամբ, այնպես էլ բնակչության թվով: Ռումինիայի այդպիսի նշանավոր չափով աճումը պետք է բացատրել նրանով, վոր նա համաշխարհային պատերազմի ժամանակ մասնակցում էր պատերազմին Անտանտի հետ (հաղթող յերկրների հետ), իսկ պատերազմից հետո ոգնում էր Անտանտայի կապիտալիստներին՝ Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարում և գրավեց Բեսարաբիան: Այժմ Ռումինիան բռնում է 296 հազար քառակուսի կիլոմետր տարածություն և ունի 17,5 միլիոն բնակչություն: Անտանտան Ռումինիային շատ հողեր տվեց նախկին Ավստրո-Հունգարիայից: Այդպիսի բռնագրավումների և ընդարձակումների հետեվանքով ռումինական բոյարների իշխանության տակ ընկան բազմաթիվ շրջաններ, վորոնք բնակեցված եյին վոչ-ռումինական ազգություններով: Այժմյա Ռումինիայում ազգային փոքրամասնությունները կազմում են ամբողջ բնակչության մոտ $^{1}/_{3}$ մասը: Առանձնապես խոշոր ազգային փոքրամասնություններ են կազմում ռուս մոլդավները (Բեսարաբիայում), հունգարացիներն ու գերմանացիները (Տրանսիլվանիայում), ուկ-

րայնացիները (Բուկովինում) և հրեաները: Ազգային փոքրամասնությունների նկատմամբ ռումինական իշխանությունը ճնշման խստագույն քաղաքականություն է վարում: Հատկապես դաժան կյանք է վարում Բեսարաբիայի բնակչությունը, վորը ձգտում է կրկին միանալու ԽՍՀՄ:

## 2. ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռումինիան գյուղատնտեսական յերկիր է: Բնակչության 80 տոկոսը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Յեկամտի հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունն է: Այդ հաստատում է այն փաստը, վոր որինակ՝ 1927 թ. ամբողջ արտահանության հացահատիկային մթերքները կազմում եր 51,6 տոկոս, իսկ կենդանաբուծական մթերքների տոկոսը — 9,2: Գյուղատնտեսական տուրքերը կազմում են 9 միլիարդ լեյ (լեյը կոպեկից քիչ ավելի յե), իսկ ամբողջ մի տարվա յեկամտի գումարն է 13 միլիարդ լեյ:

Ռումինիայի գյուղատնտեսությունը խստագույն ճգնաժամ է ապրում: Համաշխարհային ագրարային ճգնաժամը առանձնապես ուժեղ հարված հասցրեց մանր հողագործական յերկրներին, ֆեոդալական մնացորդներով և աղքատացած յերկրներին, ինչպես Լեհաստանը, Ռումինիան և այլն: Յեթե դեռևս ցորենի համաշխարհային գինը ոգտաբեր ե Կանադայի, Հյուս. Ամերիկայի Միաց. Նահանգների և Ավստրալիայի խոշոր ձեռնարկությունների համար, այնինչ Ռումինիայի մանր արտադրողների համար այդ գները միանգամայն քայքայիչ նշանակություն ունեն:

Ճգնաժամի պատճառով թագավորական դեկրետով հարկ յեղավ իջեցնել արտահանվող հացահատիկի վրա դրվող մաքսը: Այսպես՝ ցորենի մաքսը 2.800 լեյից իջեցվեց մինչև 1000 լեյի՝ ամեն մի վագոնի համար. յեգիպտացորենի մաքսը բոլորովին վերացվեց: Այս բոլորը ոգուտ եր միայն կալվածատերերին, կուլակներին և հացի սպեկուլյանտներին:

Գյուղացիության ճնշող մասսայի դրությունը վա-



տանում է և՛ նրանով, վոր նրանք ունեն սակավազոր տնտեսություններ, վորոնք ցածր կուլտուրական մակարդակի վրա յեն գտնվում: Այդ տնտեսությունները խեղդված են կալվածատերերից և բարձր գյուղատնտեսական տուրքերից այնքան, վոր վոչ միայն նրանք չեն կարող բարձրացնել իրենց տնտեսությունը, այլ ընդհակառակը, տարեցտարի վատթարանում են:

Պատերազմից հետո հայտարարված հողային ռեֆորմը, հողի մի մասի կալվածատերերից յետ գնումը) ավելի ուժեղացրեց միայն կուլակային խավերին, վորոնք կալվածատերերի հետ գլխավորում են ռումինական գյուղը: Խոշոր տնտեսությունների բաժան-բաժան անելը և գյուղացիական տնտեսությանը արտադրության միջոցներով անբավարար հայթայթումը մեծ չափով իջեցրին բերքատվությունը: Այսպես, ցորենի բերքը նախապատերազմյանի համեմատությամբ իջավ 23 տոկոսով, վարսակը — 19,4 տոկ., գարին 19,2 տոկոսով, յեգիպտացորենը — 12,4 տոկ.: Դրա հետևանքով գյուղացիության ճնշող մեծամասնությունը տառապում է աղքատությունից և միանգամայն իրավազուրկ է:

Ռումինիայում, ինչպես և Լեհաստանում սկսված անտեսական ճգնաժամի ուժեղ սրման պատճառով, ավելի շուտ քան Արևմտյան Յեվրոպայի մյուս յերկրներում, սկսվեցին խոշորագույն դասակարգային ճակատամարտեր ռումինական գյուղում (ապստամբական շարժում, Յուլիյի գյուղացիական արշավը դեպի Ալբերը, և այլն):

Ռումինիայի արդյունաբերությունը թույլ է զարգացած: Արդյունաբերության ամենից ավելի կարևոր ճյուղը նավթայինն է, վորի արտադրանքի արտահանումը կազմում է Ռումինիայի ամբողջ եքսպորտի մոտ 20 տոկոսը: Սակայն այստեղ նույնպես համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով վատացավ դրությունը, վորի պատճառով ընկավ նավթի գինը: Ռումինիայի ամբողջ արդյունաբերությունը սուր ճգնաժամ է ապրում, վորի հետևանքով ավելացավ գործազուրկների թիվը, (300 հազարից ավելի) և վատա-

ցավ բանվոր դասակարգի նյութական դրությունը:

Բանվորների աշխատավարձը սովի մինիմումի 50–60 տոկոսից չի անցնում: Լեռնային ռայոններում աշխատավարձը տրվում է բնամթերքով, մի հանգամանք, վորը բանվորին կես ստրկական դրության մեջ է դնում: Բանվորական օրը 10–11 ժամից անցնում է: Բնակարանային պայմանները սարսափելի յեն: Ի լրումն այդ բոլորի, ռումինական բանվորները համարյա իրավազուրկ են: Կազմալուծված է հեղափոխական արհշարժումը: Կոմունիստական կուսակցությունը ճըշված է գաղտնագործության: Նրա լավագույն առաջնորդները բանտերում են նստած կամ սպանված են: Կոմունիստների նկատմամբ գոյություն ունի կատարյալ քմահաճություն: Կոմունիստները հարկադրված են հացադուլ հայտարարել, հասցնելով մինչև 40 օրվա (Դոբրոջեանու և մյուսները): Նրանցից շատերը մահանում են սովամահ լինելով: Բազմաթիվ հեղափոխական բանվորների հետ ռումինական ժանդարմները իրենց հաշիվները մաքրում են առանց դատի ու առանց հետաքննության: Ռումինիայում բացարձակ աշխատում են միայն սոցիալ-ֆաշիստները, վորոնք բազմաթիվ անգամ դավաճանել են ռումինական բանվորներին: Այդ սոցիալ-ֆաշիստները ոգնում են այժմյա ֆաշիստական ազգային-ցարանիստական կառավարության:

Ռումինիայի բանվոր դասակարգի ծանր դրությունը հարկադրում է նրան պայքար մղել իրեն ճնշողների դեմ: Իմպերիալիստական պատերազմից հետո (1918–1919 թ. թ.) բանվոր դասակարգի հզոր մի վերելք սկսվեց: Սակայն ռումինական ռեակցիային հաջողվեց սոցիալ-դավաճանների ոգնությամբ խեղդել այդ շարժումը:

1929 թ. Ռումինիայում տեղի ունեցան նոր արյունալի դեպքեր: Լեռնարդյունաբերության ռայոնում (Ժիլավյան հովիտ) գործադուլ արին հանքափորները, յերբ կապիտալիստները փորձ արին կրճատել առանց այն էլ չնչին աշխատավարձը:

Գործադուլավոր բանվորներին գնդակահար արին ժանդարմներն ու զորքերը, վորոնք կանչված եյին ձեռնարկատերերի կողմից: Նույնիսկ կուլակա-բուրժուական կառավարությունն անգամ ստիպված յեղավ (մասսաների ճնշման տակ) ճանաչել կապիտալիստների քըմահաճույքն այդ գործում: Ժիլավում սպանվեցին մի քանի տասնյակ բանվորներ և վիրավորվեցին հարյուրավոր բանվորներ: Այդ գնդակահարությունները խոշոր նշանակություն ունեցան հեղափոխական շարժման վերելքի համար: Այդ գնդակահարությունները (ինչպես և Լենայի գնդակահարությունները 1912 թվին Ռուսաստանում), ել ավելի կբարձրացնեն բանվոր դասակարգի հեղափոխական տրամադրությունը և հեղափոխական շարժման նոր վերելքը Ռումինիայում: Ռումինական բանվոր դասակարգը նոր դաս ստացավ կապիտալիստներից: Նա կրկին համոզվեց նրանում, թե դավաճանական ինչ դեր են խաղում սոցիալ-դեմոկրատները:

### 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հին Ռումինիայի քաղաքական կուսակցություններից ամենից խոշորը նացիոնալ-լիբերալ կուսակցությունն է: Մինչև պատերազմը այդ կուսակցությունը կոնսերվատորների հետ (պատերազմից հետո քայքայված խոշոր կալվածատերերի կուսակցության հետ) փոխեփոխ իշխանության գլուխ եր անցնում: Նացիոնալ-լիբերալները (կարճ՝ լիբերալները) պաշտպանում եյին և դեռ շարունակում են խոշոր չափով պաշտպանել նացիոնալ արդյունաբերական և բանկային կապիտալի շահերը:

Ամբողջ ժամանակ կուսակցությունը գլխավորում է բոյարական ցեղի «դինաստիան» Բրատիանու: Բրատիանուի և նրա մոտիկ ազգականների ձեռքին են գտնվում համարյա ռումինական բոլոր բանկերը, ներառյալ և ազգային էմիսիոն բանկը, և ամբողջ մի շարք տպագրական որգաններ: Ամբողջ հետպատերազմյան շրջանում համարյա միշտ իշխանությունն իր ձեռքում ունենալով լիբերալ կուսակցությունը ամենահետադեմ քաղաքականությունն է վարել, մա-

նավանդ ազգային փոքրամասնությունների նկատմամբ, չենք խոսում արդեն հեղափոխական շարժման ամենախիստ ճնշման մասին: Լիբերալների կուսակցության տնտեսական ծրագիրը յերկրի ինդուստրացումն ե առանց օտարերկրյա կապիտալի ղեկավար մասնակցության:

Արտաքին քաղաքականության նկատմամբ նույնպես, ինչպես ենդեկները Լեհաստանում, լիբերալները հանդիսանում են Ֆրանսիայի օրիենտացիայի կողմնակիցներ: Ինչպես ենդեկները, լիբերալները նույնպես խիստ շովինիստական, հակասեմիտական կուսակցություն են, և արհամարհանքով են վերաբերվում դեպի բոլոր ազգային փոքրամասնությունները:

Նոր շրջաններ գրավելով, վորոնք արդյունաբերությամբ ավելի բարձր զարգացած շրջաններ են, ռումինական բուրժուազիան, հանձին լիբերալ կուսակցության, նպատակ ե դրել՝ յենթարկել իրեն այդ շրջանների տնտեսությունը բանկային ապարատի միջոցով:

Հետպատերազմյան տարիների հեղափոխական շարժման ճնշման տակ ռումինական խոշոր բուրժուազիան, լիբերալների ղեկավարությամբ, կուլակային տիպի հողային ռեֆորմ մտցրեց:

Յեվրոպայի մնացած մասում վալյուտայի կայունացումն անցկացնելուց հետո և մասնակի կայունացումից հետո ակնահայտի դարձավ, վոր լիբերալների տնտեսական ծրագիրը,— այսինքն՝ մենաշնորհ կերպով շահագործել Ռումինիայի բանվոր դասակարգին ու գյուղացիությանը,— չի կարող իրականացվել: Դրա գլխավոր պատճառներն եյին ռումինական արդյունաբերության թույլ զարգացումը, կապիտալներով աղքատ լինելը և հումույթային միջոցների սահմանափակ լինելը (բացի նավթից): Վերջիվերջո լիբերալներին չհաջողվեց վոչ կայունացնել վալյուտան, վոչ վերականգնել յերկաթուղային տրանսպորտը և վոչ էլ քիչ թե շատ զարգացնել արդյունաբերությունը: Իսկ գյուղատնտեսությունը, ինչպես վերեվում ասացինք, սկսեց ակնահայտնի կերպով հետադիմել: Լիբե-



րալների միակ յելքը այդ դրությունից դուրս գալու համար մնաց արտաքին խոշոր փոխառությունը, թեկուզ օտարերկրյա կապիտալին անձնատուր լինելու գնով և թեկուզ կապիտալիստների հետ Ռումինիայի աշխատավոր մասսաների վրա իշխանությունը բաժանելու գնով: Սակայն փոխառության մասին բանակցությունները հաջողություն չունեցան, վորովհետև օտարերկրյա կապիտալիստները լիբերալներից պահանջում եյին լիակատար կապիտուլյացիա, մի բան վոր լիբերալները անհնար եյին համարում իրենց համար: Այդ պատճառով, և վոր գլխավորն ե, յերկրում ուժեղ անբավականության պատճառով, նրանք հարկադրվեցին զիջել իշխանությունը (1928 թ. վերջին) նացիոնալ-ցարանիստական կուսակցությանը:

Նացիոնալ-ցարանիստական (նացիոնալ-գյուղացիական) կուսակցությունը, վորն այժմ կառավարական կուսակցությունն ե հանդիսանում, կազմակերպվել ե 1926 թվի սկզբին, նացիոնալ կուսակցության, վորը ստեղծվել եր Սեմիգրադում դեռ վենգերական տիրապետության ժամանակ և ցարանիստական կուսակցության միացումից, ցարանիստական կուսակցությունը վորպես բազա ուներ հին Ռումինիան և Բեսարաբիան:

Ազգային (նացիոնալ) կուսակցությունը բավականին ամրացավ ավստրո-վենգերական միահեծանության դեմ մղած պայքարում, պաշտպանելով ռումինական ազգային փոքրամասնության շահերը: Այդ կուսակցությունը գլխավորում եր նացիոնալ-ցարանիստական կուսակցության նախկին մինիստր նախագահ և առաջնորդ Սեմիգրադի կալվածատեր Մանիուն:

Տրանսիլվանիան Ռումինիային կցելուց հետո, ազգային կուսակցությունը նպատակ դրեց՝ սահմանափակել տեղական բուրժուազիայի մենաշնորհ-շահագործական ձգտումները՝ լիբերալների կենտրոնացման միտումները: Լիբերալների դեմ մղած պայքարում ազգային կուսակցությունը համախմբեց վոչ միայն Տրանսիլվանիայի բուրժուազիային, այլև ազգային փոքրամասնությունների բուրժուազիային, նույնպես և այն շրջաններին, վորոնք կապված եյին օտարերկրյա կա-

պետալի հետ: Բացի դրանից 1926 թ. սկզբին Մանիուին հաջողվեց ցարանիստական կուսակցության հետ միանալով խաբեական ճանապարհով իր ազդեցության տակ առնել և հին Ռումինիայի գյուղացիական մասսաների մի մասին:

Իշխանության գլուխ անցնելով, նացիոնալ-ցարանիստական կուսակցությունը արագորեն մերկացրեց իրեն վորպես զուտ ֆաշիստական կուսակցություն: Նացիոնալ-ցարանիստական կուսակցությունն իր ծրագրում առաջադրեց՝ խորտակել հեղափոխական շարժումը, կանոնավորել օտարերկրյա կապիտալի հետ փոխհարաբերությունը և ներգրավել այդ կապիտալը Ռումինիա՝ ռումինական կապիտալի հետ հավասար իրավունքներով, կայունացնել լեյը, ուժեղացնել խոշոր հողագործների և կուլակների կարողությունը, վոչնչացնել լիբերալների քաղաքական և տնտեսական մենաշնորհը:

Արտաքին քաղաքականության նկատմամբ նացիոնալ-ցարանիստական կուսակցությունը, պիլսուդչիկների նման Լեհաստանում, ձգտում է ավելի ինքնուրույնության՝ դեպի Ֆրանսիայի ունեցած իր վասալական հարաբերությունների շրջանակներում:

Շատերը կարծում էին, վոր Մանիուի կառավարության գլուխ անցնելով, Ռումինիայում կսկսվի «դեմոկրատիայի» շրջանը, կլինի ազգային ազատություն, պայքար կմղվի կաշառակերության, շահագործումների դեմ և այլն: Այդ ցնորքների շնորհիվ նացիոնալ-ցարանիստները 1928 թ. 12/XII տարան մանդատների մեծամասնություն (բոլոր 481-ից 349-ը):

Ռումինական պայմաններում կառավարական կուսակցությունը միշտ ձայների ճնշող թիվ է ստանում. սակայն պետք է ընդունել, վոր այս անգամ ռումինական պայմանների համար ընտրությունները բավական «ազատ» էին, և վորոշ չափով նացիոնալ-ցարանիստների հաջողությունը արտացոլում էր մանր-բուրժուազիայի լայն մասսաների տրամադրությունը և նրանց ատելությունը դեպի լիբերալները:

Համենայն դեպս, նացիոնալ-ցարանիստների բնակչության լայն մասսաների վրա ունեցած ազդեցությունը շուտով հօդս ցնդեց, հենց վոր նրանք իրենց ցույց տվին գործով: Յերկրի տնտեսական դրությունը յերբեք չլավացավ, չնայած օտարերկրյա փոխառություն ստացան 100 միլիոն դոլլարի չափով (մոտ 195 միլիոն ռուբլի): Փոխառության հետեվանքով միայն կայունացավ ռումինական վալյուտան և ուժեղացավ օտարերկրյա ազդեցությունը ռումինական տնտեսության վրա: Հատկապես նացիոնալ-ցարանիստների իշխանության օրոք սկսվեցին խոշոր դասակարգային ճակատամարտեր (հանքափորների գործադուլը Ժիլավյան հովտում) և էլ ավելի լայն չափերով ազատագրական շարժումը—գլխավորապես Բեսարաբիայում:

Մնացած բուրժուական կուսակցությունները յերկրի քաղաքական կյանքում խոշոր դեր չեն խաղում:

Կոմունիստական կուսակցությունը գաղտնագործության է մատնված: Իր թվական կազմով այնքան էլ մեծ չէ:

## 4. ՅԵՐԿՐԻ ՖԱՇԻՍՏԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՊԱԼԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

Ռումինիայի կողմից ԽՍՀՄ դեմ տարվող թշնամական քաղաքականությունը իր տերերի դրդումով և յերկրի ներսում կատարվող անդադար խռովությունները հարկադրում են Ռումինային 207 հազարանոց մեծ բանակ պահել և ամբողջ ժամանակ ավելացնել սպառազինումը: Ռումինիայում ամեն մի հազար բնակչին ընկնում է 12 զինվոր (ԽՍՀՄ-ում 3,8):

Ռումինիան հարկադրված է մեծ բանակ պահել և այն պատճառով, վոր նրա հարաբերությունները սրված են մի քանի պետությունների հետ, վորոնցից նա յերկրամասեր է խլել և միացրել իրեն պատերազմից հետո: Ռումինիան ռազմական ծախսերի համար հատկացնում է իր պետական բյուջեի նշանավոր մասը—28,9 տոկոսը: Ամենից իրավազուրկ դրությունը, դա զինվորի դրությունն է: Մինչև այժմ էլ գոյություն ունի ծեծն ու դենշչիկությունը: Ռումինիան ունի վոչ մեծ ծովի վրա և Դունայ գետի վրա: Վեր-

ջին տարիներում Ռումինիան մեծ ուշադրություն է դարձնում իր բանակի ու նավատորմի ուժեղացման վրա։

1929 թվի վերջից սկսած, մանավանդ Կարոլի վերադառնալուց հետո, առանձնապես ուժեղացվում է ռումինական բանակը, կազմակերպում են նոր հետևակային, հեծելազորային և հրետանական գնդեր, ավելացնում են գնդացրերի ու տանկերի թիվը, լավացնում են զինվորների մարտական պատրաստության վիճակը․ գոյություն ունեցող ավիո-ջոկատների փոխարեն կազմակերպում են ավիո-գնդեր․ գնում են նոր ռազմածովային նավեր․ ընդարձակում են ռազմական արդյունաբերությունը, հրետանին վերազինում են նոր տիպի հեռահար հրանոթներով։ Այս բոլորը հսկայական ծախսեր են պահանջում։ Եվ իսկապես, Ռումինիայի ռազմական բյուջեն աճում է արտակարգ արագությամբ․— 1926 թ․ ռազմական մինիստրության ծախսերը հասնում եյին 5 միլիարդ լեյի (մոտ 50 միլիոն ռ․) կամ ընդհանուր պետական բյուջեյի 16 տոկոսը, 1931 թ․ ռազմական բյուջեն հասել է արդեն 10,2 միլիարդ լեյի (114 միլիոն ռուբլի) կամ պետական բյուջեյի 28,9 տոկոսը, այսինքն՝ 5 տարվա ընթացքում աճել է յերկու անգամ։ Բացի դրանից, Ռումինիան խոշոր փոխառություններ է ստանում արտասահմանում և յերկարատեվ վարկեր՝ ռազմական նյութեր գնելու համար։

Ռումինիայի զինված ուժերը Անգլիայի և Ֆրանսիայի գլխավոր շտաբների մեծ ազդեցության տակ են գտնվում։ Անգլիան հանձն է առել վերակազմել ծովային տորմիղը, Ֆրանսիան հանձն է առել վերակազմել ու վերազինել ցամաքային զորքերին և ավիացիան։ Գեներալ Գուրոն, ֆրանսիական գլխավոր շտաբի ներկայացուցիչները և բազմաթիվ ռազմական միսիաները ըստ եյության հանդես են գալիս վորպես ռումինական բանակի իսկական ղեկավարներ։ Շատ մոտիկ կապ գոյություն ունի նույնպես լեհական ու ռումինական բանակների միջև։ Այդ յերկու յերկրների միջև կնքված է հատուկ ռազմական դաշինք, վորը վերակնքված է 1931 թ․ հուն․, և վորն ուղղված է բացառապես ԽՍՀՄ դեմ։



# X. ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ՅԵՐԿՐՆԵՐ

1․ Ընդհանուր տեղեկություններ։ 2․ Աշխատավորների դրությունը։ 3․ Մերձբալթյան յերկրներն ու Խ․Ս․Հ․Մ․։ 4․ Մերձբալթյան պետությունների բանակները։

## 1․ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մերձբալթյան մեր հարեվանները—Ֆինլանդիան, Եստոնիան, Լատվիան և Լիտվան ինքնուրույն պետություններ դարձան շնորհիվ Հոկտեմբերյան հեղափոխության, վորը հայտարարեց ժողովուրդների ինքնորոշում։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո առաջին ամիսներին Մերձբալթյան յերկրների ապստամբած պրոլետարիատը իշխանությունն իր ձեռքը վերցրեց, սակայն չկարողացավ պահել իր ձեռքում, վորովհետեվ Մերձբալթյան յերկրների բուրժուազիան Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և մյուս յերկրների ոգնությամբ քաղաքացիական կատաղի պատերազմից հետո տապալեց Խորհրդ․ իշխանությունը։ Մերձբալթյան յերկրներում պրոլետարիատի դահիճներ հանդիսացան տեղական բուրժուազիայի փափկասուն գավակներն ու կուլակները («ռամիկ բարոնները»), ռուս սպիտակ գվարդիականները, գերմանական բարոնները (կալվածատերերը)՝ Մաններգեյմի (Ֆինլանդիա), Լայդոների (Եստոնիա), սպիտակ գեներալներ Ռոձյանկոյի, Յուդե-
կահեղափոխությունը վեր կարող ճնշել պրոլետարական
նիչի, Ֆոնդեր-Հոլցի, իշխան Ավալով-Բերմոնտի և ուրիշների ղեկավարությամբ։ Սակայն տեղական հակահեղափոխությունը չեր կարող ճնշել պրոլետարական հզոր շարժումը, վորին պաշտպան եյին կանգնած գյուղացիության չքավորական շերտերը, յեթե հակահեղափոխությանը ոգնության չգային ինտերվենտները հան-

ձինս Գերմանիայի (1918 թվի սկզբին) և Անգլիայի (1918 և 1919 թ.թ. վերջին) իմպերիալիզմի: Առանձնապես ակտիվություն եյին հայտաբերում անգլիական ռազմածովային տորմիղը, որ գործում եր Բալթիկ ծովում, և ֆաշիստների ջոկատները (օրինակ շվեդական), որոնք օգնում եյին սպիտակ զորամասերին պայքար մղելու Կարմիր բանակի դեմ: Մանավանդ հըրապաշարների և զենքի հայթայթման տեսակետից, Մերձբալթյան բուրժուազիայի բանակները կատարելապես գտնվում եյին կապիտալիստական մեծ պետությունների—Ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի խնամքի տակ:

Հեղափոխական պրոլետարիատի դեմ պայքարում Գերմանիայի բուրժուազիայի ներկայացուցիչները մի կողմից և մյուս կողմից Անտանտի ներկայացուցիչները մի ընդհանուր լեզու գտան, թեև նրանք դեռ 1918 թվի ընթացքում պատերազմական դրության մեջ եյին գտնվում:

Մերձբալթյան բոլոր երկրներում ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղն է հանդիսանում գյուղատնտեսությունը, ինչպես այդ ապացուցում են հետևյալ թվերը. գյուղատնտեսության մեջ զբաղված են՝ Ֆինլանդիայում ամբողջ բնակչության մոտ 65 տոկոսը, Եստոնիայում—մոտ 59 տոկոսը, Լատվիայում— մոտ 68 տոկոսը, և Լիտվայում—մոտ 76 տոկոսը:

Մերձբալթյան երկրներում հողի ու կլիմայական պայմաններն այնքան էլ բարենպաստ չեն հացահատիկային կուլտուրաների զարգացման համար. բացի դրանից, հացահատիկի գները նույնպես շահավետ չեն: Այդ պատճառով գյուղատնտեսության մեջ գլխավոր ուշադրություն են դարձնում կենդանաբուծության վրա: Կենդանաբուծական մթերքների (առավելապես կովի յուղի) քանակը կազմում է մերձբալթյան երկրներից արտահանվող եքսպորտ մթերքների ամբողջ արժեքի մոտ 1/5—1/4 մասը:

Մերձբալթյան երկրներում արդյունաբերությունը թույլ է զարգանում: Այդ տեսակետից փոքր բացառու-



թյուն է կազմում Ֆինլանդիան, որտեղ արդյունաբերության արտադրանքը նախահեղափոխական շրջանի համեմատությամբ բավականին աճել է: Վերջին 1930 թվի ընթացքում, համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ կապված Մերձբալթյան երկրների ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը աճման ոչ մի տենդենց չեն հայտաբերել, այլ ընդհակառակը—արդեն անկման հատկանիշներ են ցուցաբերում: Նույնիսկ ոչ մի հեռանկար էլ չկա թե արագորեն կարող են դուրս գալ տնտեսական դժվարություններից 1931 թվին:

1929 թ. արդյունաբերության մեջ մոտավորապես զբաղված էր ամբողջ բնակչության Ֆինլանդիայում—մոտ 16 տոկոսը, Եստոնիայում—մոտ 25 տոկոսը, Լատվիայում—մոտ 11 տոկոսը և Լիտվայում—մոտ 6 տոկոսը:

Ֆինլանդիայի տնտեսության մեջ խոշոր նշանակություն ունի անտառանյութը: Ֆինլանդիայի անտառանյութերի տարեկան արտահանումը կազմում է ֆինլանդական եքսպորտի ամբողջ արժեքի մոտ 55 տոկոսը. անտառանյութը խոշոր դեր է խաղում նաև Մերձբալթյան մյուս երկրների տնտեսության մեջ, կազմելով ամբողջ եքսպորտի արժեքի 10—ից մինչև 15 տոկոսը:

## 2. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Մերձբալթյան երկրները գյուղատնտեսական երկրներ են: Յեվ տեղական բուրժուազիան ամբողջ իր ներքին քաղաքականությունը հիմնում է «ամուր տնտեսավար գյուղացու», կուլակի վրա: Տիրող դասակարգի, բուրժուազիայի ամբողջ ձեռնարկումներն ուղղված են կուլակներ ստեղծելուն և նրանց պաշտպանելուն: Այսպես, քաղաքացիական պատերազմից հետո, Մերձբալթյան բոլոր երկրներում անցկացվեց հողային ռեֆորմ, որի համաձայն գերմանական բարոնների նախկին հողերից ստեղծվեցին նոր գյուղացիական տնտեսություններ մոտ 25 հեկտար հողի տարածությամբ: Բացի դրանից, այդ հողերից առանձնացվեցին հատուկ ֆոնդեր սակավահող գյուղացիներին ամրացնելու հա-

մար: Հողերը բաշխելիս բացահայտորեն անցկացվեց դասակարգային գիծ՝ առաջին հերթին հող ստացան ունևոր գյուղացիների վորդիները, իսկ մնացած հողերն ստացան նրանք, ովքեր քաղաքացիական պատերազմի ժամանակ ավելի աչքի էին ընկել ապստամբած պրոլետարիատի դեմ մղած պայքարում: Ներկայումս Մերձբալթյան յերկրների բուրժուական կառավարությունները բանվորներին ու բատրակներին շահագործելու հաշվին զանազան արտոնություններ են տալիս կուլակներին, ինչպես օրինակ՝ վարկ են տալիս, արհեստական ճանապարհով ավելացնում են գները հացի վրա և այլն:

Բանվոր դասակարգը մշտական հետապնդման է յենթակա. հենց միայն կոմունիստական կուսակցությանը պատկանելու համար բանվոր դասակարգի ներկայացուցիչները յենթարկվում են տաժանակիր աշխատանքի 3–4 տարի ժամկետով: Բանվորների աշխատավարձը Մերձբալթյան յերկրներում համարյա ամենացածրն է ամբողջ Յեվրոպայում:

## 3. ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՆ ՈՒ ԽՍՀՄ

Մերձբալթյան յերկրները չափազանց թույլ են. նրանք չեն կարող ինքնուրույն քաղաքականություն վարել: Նրանց առաջ յերկու ճանապարհ կա՝ կամ 1) պետք է խաղաղասիրական քաղաքականություն վարեն ԽՍՀՄ նկատմամբ և այդպիսով վերականգնեն նոր ձևով այն տնտեսական հարաբերությունները, վորոնք գոյություն ունեյին մինչև 1917 թ., կամ 2) պետք է իմպերիալիստական մեծ պետությունների դաշնակով պարեն և դառնան նրանց ձեռքին վորպես զենք զինված հարձակում գործելու համար ԽՍՀՄ դեմ: Առայժմ Մեձբալթյան պետությունները հակված են դեպի իմպերիալիստների կողմը, չնայած նրան, վոր բարի հարևանական հարաբերությունները ԽՍՀՄ հետ նրանց մեծամեծ տնտեսական օգուտներ կարող են տալ:

Մեծ պետությունների կապիտալիստները—մանավանդ ֆրանսիական բուրժուազիան— ձգտում են Մերձբալթյան յերկրներին ստորադասել լեհական իմպերիալիզմին, վորովհետև ֆաշիստական Լեհաստանն է հանդիսանում ԽՍՀՄ ամենից ուժեղ արևմտյան հարևանը: Եստոնական բուրժուազիան արդեն ընկել է լեհական քաղաքականության ազդեցության տակ: Լատվիական ֆաշիստները, դեռևս չեն կարողանում Լատվիայի քաղաքականությունը յենթարկել բուրժուական Լեհաստանին, վորովհետև Լատվիայի աշխատավորական մասսաները համառ դիմադրություն են ցույց տալիս այդ ավանտյուրային:



Լեհաստանի ղեկավարությամբ բալթիական միություն (բլոկ) ստեղծելու արգելառիթ գլխավոր պատճառներից մեկը Լիտվայի դեպի Լեհաստանն ունեցած թշնամական վերաբերմունքն է Վիլենսկու շրջանի համար, վորը լեհական իմպերիալիստները բռնագրավեցին 1920 թվին:

Հատկապես ԽՍՀՄ նկատմամբ թշնամական քաղաքականություն է վարում Ֆինլանդիան: Մեր փոխհարաբերությունները այդ պետության հետ առանձնապես «բարեկամական» չեն յեղել սկսած 1930 թվի ամառվանից, ֆաշիստական հեղաշրջումից հետո, վոր տեղի ունեցավ այդ պետության մեջ, և յերկրում Լապուասյան սև բլուզավորների ազդեցության ամրացումից հետո ֆինլանդական ղեկավար շրջանների քաղաքականությունը ուղղված է մեր հետ հարաբերությունները խզելուն և հակախորհրդային պատերազմ պատրաստելուն: Յերկրի ֆաշիստացումը, ինչպես և մեզ հարևան մյուս յերկրների ֆաշիստացումը նախադրյալ է հանդիսանում ավելի յեռանդուն ու բացարձակ պատերազմի պատրաստության ԽՍՀՄ դեմ: Համարյա ամեն օր մենք նոր ապացույցներ ենք ստանում, թե ինչպես ֆինլանդական բուրժուազիայի շրջանում քանի գնում աճում են իմպերիալիստական տենդենցները՝ խլելու մեզանից խորհրդային Կարելիան: Ֆինլանդական գլխավոր շտաբը քանի գնում ավելի ու ավելի յե կապեր հաստատում ֆրանսական ռազմական շրջանների ներկայացուցիչների հետ: Ֆինլանդական բուրժուազիայի ավանտյուրիստական քաղաքականությունն ամբողջությամբ պաշտպանություն է գտնում Ֆրանսիայի և Անգլիայի իմպերիալիստական շրջանների կողմից:

## 4. ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԿՆԵՐԸ

*Մերձբալթյան պետությունները, չնայած իրենց տնտեսական սուղ միջոցներին, պահում են համեմատաբար բազմամարդ բանակներ. այսպես՝ Ֆինլանդիան ունի 32 հազար մարդուց բաղկացած բանակ, Եստոնիան 14 հազար, Լատվիան—20 հազար, Լիտվան—18 հազար: Ընդամենը— 84 հազար մարդ:*

*Մեզանում բնակչության յուրաքանչյուր 1000 մարդուն ընկնում է մոտ 4 կարմիր բանակային, իսկ նրանցում—մոտ 10 զինվոր: Ռազմական կարիքների համար ծախսած գումարները նույնպես համեմատաբար խոշոր են: Այսպես՝ 1930 թ. Ֆինլանդիան ռազմական կարիքների վրա ծախսել է 16,9 միլիոն դոլլար կամ ամբողջ բյուջեյի 14,2 տոկոսը, Եստոնիայում 6,4 միլիոն դոլլար, կամ բյուջեյի 29,8 տոկոսը, Լատվիայում—9,6 միլիոն դոլլար կամ բյուջեյի 28 տոկոսը:*

*Այստեղ մեջբերած գումարները դեռևս լրիվ չեն հայտաբերում ռազմական ծախսերի իսկական պատկերը, վորովհետև բուրժուազիան ռազմական կարիքների համար բաց է թողնում խոշոր գումարներ թե՛ քաղաքացիական մինիստրությունների բյուջեներից և թե՛ գաղտնի ֆոնդերից:*

*Մերձբալթյան յերկրների բուրժուազիան վերջին տարիները մեծ ուշադրություն է դարձնում զինված ուժերի շինարարության վրա: Մերձբալթյան յերկրների բուրժուազիան առանց ավելացնելու բանակների թվական քանակը իսկական ծառայության ժամկետների կրճատումով կարողանում է բանակների շարքերն ընդունել և արձակել ամեն տարի համարյա իր զինակոչական ամբողջ կոնտինգենտին:*

*Կանոնավոր բանակներից զատ, Մերձբալթյան յերկրների բուրժուազիան ստեղծել է բազմաթիվ լրացուցիչ զինված ջոկատներ: Այդպիսի դասակարգային զինված ջոկատներ են հանդիսանում՝ Ֆինլանդիայում— «Շյուցկորը»՝ 100 հազար մարդ, Եստոնիայում— «Կայցելիտը»՝ 27 հազար մարդ, Լատվիայում—«Այզսարգի»՝ 25 հազար մարդ և Լիտվայում—«Շաուլիս»՝ 30 հազար մարդ:*



*Ընդամենը— 182 հազար մարդ:*

*Բանակների վերազինման ասպարեզում նույնպես ուժեղ աշխատանք է կատարվում. այսպես՝ զենքի հին տեսակները, վորոնք մնացել էյին Մերձբալթյան յերկրներին համաշխարհային պատերազմից հետո, փոխարինվում են նոր ժամանակակից զենքով:*

*Այս բոլոր ռազմական միջոցառումները վկայում են այն մասին, վոր Մերձբալթյան յերկրների բուրժուազիան աշխատավոր մասսաներին պատերազմի յե պատրաստում ԽՍՀՄ դեմ: Ֆրանսիան, Անգլիան և մյուս մեծ գիշատիչները զենք ու կռվի այլ տեխնիկական միջոցներ կտան, իսկ Մերձբալթյան յերկրները,— Լեհաստանն ու Ռումինիան—կտան կենդանի ուժ, այսինքն՝ մարդկանց կազմ («թնդանոթի միս»):*

---

# XI. ՉԻՆԱՍՏԱՆ

1. Ընդհանուր տեղեկություններ: 2. Իմպերիալիստները և չինական բուրժուազիան: 3. Չինական բանակը: 4. Չինական հեղափոխությունը: 5. ԽՍՀՄ և Չինաստանը:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Չինաստանը հսկայական հողագործական յերկիր է: Չինաստանը բռնում է $11\frac{1}{4}$ միլիոն քառ. կիլոմետր տարածություն. բնակչության թիվը 450 միլիոնից ավելի յե:*

*Չինաստանը գյուղատնտեսական յերկիր է: Ամեն տարի Չինաստանից գյուղատնտեսական մթերքներ է արտահանվում մոտ մեկ միլիարդ ռուբլու: Արտահանության գլխավոր մթերքներն են՝ բամբակը, արջընկույզը (բոբ), արջընկույզի յուղը, ջուտը, կանեփի թելը, մորթիներ, հում մետաքս և այլն:*

Չնայած նրան, վոր հողագործության մթերքները Չինաստանի հիմնական հարստությունն են կազմում, այնուամենայնիվ, ամեն տարի Չինաստան է ներմուծվում պարենավորման կուլտուրաներ, վորոնք Չինաստանին չեն բավարարում (ցորեն, ալյուր) 100 միլիոն ռուբլուց ավելի գումարով:

Չինաստանը փաստորեն իմպերիալիստների գաղութն է: Չին գյուղացին յերկու տեսակ հարստահարման է հանդուրժում՝ միջազգային իմպերիալիստների և իր կալվածատերերի հարստահարմանը:

Չինաստանում մինչև այժմ գոյություն ունեն ֆեոդալական— ճորտատիրական հարաբերություններ: Հողի մեծ մասը գտնվում է միջին ու խոշոր կալվածատերերի ձեռքին: Բնակչության 80 տոկոս կազմող գյուղացիությունն ունի մշակելի հողի վոչ ավելի միայն 35 տոկոսը: Կալվածատերը գյուղացուց վերցնում է ընդհանուր բերքի մինչև 80 տոկոսը կապալավարձի, տուրքերի, վաշխառուական փոխառությունների միջոցով և այլն: Իմպերիալիստների ամբողջ քաղաքականությունը Չինաստանում նպատակ ունի ամրացնելու ֆեոդալական—ճորտատիրական հարաբերությունները, վորովհետև իմպերիալիստների շահն այդ է պահանջում: Կալվածատերերի, գեներալների և իմպերիալիստների ճնշումն ու ճորտությունը առաջացնում են գյուղատնտեսության ճգնաժամային դրություն: 1929 թ. Չինաստանում սովի յեր մատնված ավելի, քան 60 միլիոն մարդ: Նույնիսկ հետադիմական բուրժուական մամուլը չկարողացավ թաքցնել այն, վոր գյուղացիները մի քանի շրջաններում հարկադրված եյին հողի տակից դիակներ հանել և կերակրվել նրանցով:

Արդյունաբերությունը Չինաստանում գլխավորապես կենտրոնացած է ծովափնյա քաղաքներում: Տեղական բուրժուազիայի ձեռքում է գտնվում միայն մանր մշակողական արդյունաբերությունը: Չինական արդյունաբերության հիմնական ճյուղերը, ինչպես՝ յերկաթի հանույթը, ածուխի հանույթը, այլև տրանսպորտը, չինական ֆինանսները—գտնվում են իմպերիալիստ-



ների ձեռքին: Չինաստանում համարյա արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերություն գոյություն չունի, այսինքն՝ մեքենաներ արտադրող և այլն:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը խիստ կերպով անդրադարձել է Չինաստանի վրա: Ճգնաժամի ազդեցության շնորհիվ մեծապես ընկել է արծաթի գինը (2½ անգամ ավելի եժան է, քան 1929 թ. սկզբին եր), վորը հիմնական վալյուտան է Չինաստանում: Մեծապես ընկել են և գաղութային հումույթի գները: Այս հանգամանքը վոչ միայն սնանկացրեց արտադրական ձեռնարկություններին, այլև ցայտուն կերպով անդրադարձավ և՛ Չինաստանի գյուղատնտեսության վրա: Ճգնաժամը Չինաստանում զուգակցվում է գյուղացիական տնտեսության քայքայման և լիակատար հյուծող, ուժից վեր տուրքերի հետ: Ճգնաժամը խստորեն անդրադարձավ նաև տեղական արդյունաբերության վրա և դրա հետևանքով թեթև արդյունաբերության մի շարք ճյուղեր անցան ոտարերկրյա կապիտալիստների ձեռքը:

## 2. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԸ ՅԵՎ ՉԻՆԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ

Արդյունաբերության և գյուղատնտեսության ճգնաժամն առաջ բերեց հակասությունների խիստ սրում և աճում Չինաստանում:

Վերևում մենք ասացինք, վոր Չինաստանը այնպիսի մի յերկիր է, վորտեղ տեր ու տնորեն են իմպերիալիստները: Չինական շուկայի համար, չին գյուղացուն թալանելու իրավունքի համար իմպերիալիստներն անընդհատ պայքար են մղում իրար միջեվ: Ներկայումս միջազգային դրությունը Չինաստանում բնորոշ է նրանով, վոր Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգները, վորոնք տնտեսական սոսկալի ճգնաժամն են ապրում, փորձում են իրենց յենթարկել ամբողջ չինական շուկան և դուրս քշել այնտեղից մյուս իմպերիալիստներին, առաջին հերթին Ճապոնիային և Անգլիա-

Չնայած նրան, որ հողագործության մթերքները Չինաստանի հիմնական հարստությունն են կազմում, այնուամենայնիվ, ամեն տարի Չինաստան է ներմուծվում պարենավորման կուլտուրաներ, որոնք Չինաստանին չեն բավարարում (ցորեն, ալյուր) 100 միլիոն ռուբլուց ավելի գումարով:

Չինաստանը փաստորեն իմպերիալիստների գաղութն է: Չին գյուղացին յերկու տեսակ հարստահարման է հանդուրժում՝ միջազգային իմպերիալիստների և իր կալվածատերերի հարստահարմանը:

Չինաստանում մինչև այժմ գոյություն ունեն ֆեոդալական–ճորտատիրական հարաբերություններ: Հողի մեծ մասը գտնվում է միջին ու խոշոր կալվածատերերի ձեռքին: Բնակչության 80 տոկոս կազմող գյուղացիությունն ունի մշակելի հողի ոչ ավելի միայն 35 տոկոսը: Կալվածատերը գյուղացուց վերցնում է ընդհանուր բերքի մինչև 80 տոկոսը կապալավարձի, տուրքերի, վաշխառուական փոխատվությունների միջոցով և այլն: Իմպերիալիստների ամբողջ քաղաքականությունը Չինաստանում նպատակ ունի ամրացնելու ֆեոդալական–ճորտատիրական հարաբերությունները, որովհետև իմպերիալիստների շահն այդ է պահանջում: Կալվածատերերի, գեներալների և իմպերիալիստների ճնշումն ու ճորտությունը առաջացնում են գյուղատնտեսության ճգնաժամային դրություն: 1929 թ. Չինաստանում սովի յեր մատնված ավելի, քան 60 միլիոն մարդ: Նույնիսկ հետադիմական բուրժուական մամուլը չկարողացավ թաքցնել այն, որ գյուղացիները մի քանի շրջաններում հարկադրված եյին հողի տակից դիակներ հանել և կերակրվել նրանցով:

Արդյունաբերությունը Չինաստանում գլխավորապես կենտրոնացած է ծովափնյա քաղաքներում: Տեղական բուրժուազիայի ձեռքում է գտնվում միայն մանր մշակողական արդյունաբերությունը: Չինական արդյունաբերության հիմնական ճյուղերը, ինչպես՝ յերկաթի հանույթը, ածուխի հանույթը, այլև տրանսպորտը, չինական ֆինանսները—գտնվում են իմպերիալիստ-



ների ձեռքին: Չինաստանում համարյա արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերություն գոյություն չունի, այսինքն՝ մեքենաներ արտադրող և այլն:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը խիստ կերպով անդրադարձել է Չինաստանի վրա: Ճգնաժամի ազդեցության շնորհիվ մեծապես ընկել է արծաթի գինը (2½ անգամ ավելի եժան է, քան 1929 թ. սկզբին եր), որը հիմնական վալյուտան է Չինաստանում: Մեծապես ընկել են և գաղութային հումույթի գները: Այս հանգամանքը ոչ միայն սնանկացրեց արտադրական ձեռնարկություններին, այլև ցայտուն կերպով անդրադարձավ և՛ Չինաստանի գյուղատնտեսության վրա: Ճգնաժամը Չինաստանում զուգակցվում է գյուղացիական տնտեսության քայքայման և լիակատար հյուծող, ուժից վեր տուրքերի հետ: Ճգնաժամը խստորեն անդրադարձավ նաև տեղական արդյունաբերության վրա և դրա հետևանքով թեթև արդյունաբերության մի շարք ճյուղեր անցան օտարերկրյա կապիտալիստների ձեռքը:

## 2. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԸ ՅԵՎ ՉԻՆԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ

Արդյունաբերության և գյուղատնտեսության ճգնաժամն առաջ բերեց հակասությունների խիստ սրում և աճում Չինաստանում:

Վերևում մենք ասացինք, որ Չինաստանը այնպիսի մի յերկիր է, որտեղ տեր ու տնօրեն են իմպերիալիստները: Չինական շուկայի համար, չին գյուղացուն թալանելու իրավունքի համար իմպերիալիստներն անընդհատ պայքար են մղում իրար միջև: Ներկայումս միջազգային դրությունը Չինաստանում բնորոշ է նրանով, որ Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգները, որոնք տնտեսական սոսկալի ճգնաժամն են ապրում, փորձում են իրենց յենթարկել ամբողջ չինական շուկան և դուրս քշել այնտեղից մյուս իմպերիալիստներին, առաջին հերթին Ճապոնիային և Անգլիա–

յին: ՀԱՄ Նահանգներին չի բավարարում «ըստ ազդեցության շրջանների» Չինաստանը բաժանելու իմպերիալիստական հին քաղաքականությունը. ՀԱՄՆ-ի համար Չինաստանը հարկավոր է վորպես մի մենաշնորհ շուկա:

Համաշխարհային ճգնաժամի աճման հետ քանի գնում ավելի յե սրվում հակասությունները իմպերիալիստների միջև, և առաջին հերթին Ճապոնիայի և ՀԱՄ Նահանգների միջև:

1925—1927 թ.թ., չինական հեղափոխության ճնշումից հետո, Չինաստանում իշխանության գլուխն անցավ միությունը (բլոկ), կազմված կալվածատերերից, գեներալներից, բուրժուազիայից: Այդ միությունը հենվում է իմպերիալիստների վրա և նրանց քաղաքականությունն է անցկացնում, բանվորների ու գյուղացիների հարստահարման քաղաքականությունը: Այդ տիրապետող միությունն ընդունակ չէ համախմբելու յերկրի ուժերին և կանոնավորելու յերկրի տնտեսական կյանքը: Չինական իշխանությունները չեն կարող վճռել նաև հողային խնդիրը, վորովհետև չինական կալվածատերերն ու բուրժուազիան շահագրգռված են պահպանելու ճորտատիրական հարաբերությունները չինական գյուղում, և վոչ թե վոչնչացնելու այդ հարաբերությունները:

Չինաստանի ֆեոդալա-ճորտատիրական բաժանբաժան լինելը մի շարք առանձին միմյանցից անկախ շրջանների ստիպում է նրան տիրող միության ներսում անընդհատ պատերազմներ վարել յերկրամասի համար, հարկեր հավաքելու իրավունքի համար, գյուղացիներին ու բանվորներին ճնշելու իրավունք ձեռք բերելու համար:

Իմպերիալիստներն իրենց տիրապետության համար մղվող պայքարում հենվում են այդ բազմազան միլիտարիստական խմբավորումների վրա՝ չինական բուրժուազիայի և գեներալշչինայի շրջանում:

Այդպիսի քաղաքականություն անցկացնելու հա-



մար Հ. Ա. Միացյալ Նահանգները վորպես գործիք օգտագործում են Նանկինյան կառավարությանը: Միաժամանակ Մուկդենյան խմբավորումը հանդիսանում է վորպես զենք, վորի միջոցով Ճապոնիան փորձում է ամրապնդել իր ազդեցությունը Չինաստանի վրա:

## 3 ՉԻՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Բանակը հարկավոր է իրար միջև պայքարի համար, տարբեկրյա իմպերիալիստների շահերը պաշտպանելու համար, չինական բուրժուազիայի հեղափոխական շարժումը ճնշելու համար: Չին գյուղացին և բանվորը տանջվում են վոչ միայն կապիտալիստների և կալվածատերերի հարստահարումից, այլև նրանց ագենտներ—գեներալների հարստահարումից, վորոնք իրենց համար բանակներ են կազմակերպում, վորոնք գյուղացուց բռնագրավում են պարեն, ստիպում են գյուղացիներին իրենց ուսերի վրա կրել—տեղափոխել բանակի իրերն ու ռազմամթերքը:

Նանկինյան կառավարությունը փորձեր արեց կըրճատելու իր բանակը, բայց վոչ մի հաջողություն չունեցավ: Ընդհակառակը, Չինաստանում քանի գնում մեծ չափերով աճում են զինված ուժերը: 1911 թ. Չինաստանում կար 400 հազար զինվոր, 1922 թ.՝ մեկ միլիոն 200 հազար, 1928 թվին՝ 2 միլիոն, 1930 թ.՝ յերկուս ու կես միլիոն:

Չինական բանակի բնորոշ կողմն այն է, վոր նա իրենից չի ներկայացնում միասնական ամբողջական մի բանակ: 2 ու կես միլիոն զինվորները բաժանված են մի շարք առանձին բանակների վրա, վորոնց գլուխն են կանգնած ֆեոդալները:

Այդ միլիտարիստները մեկմեկուց անկախ են: Նրանք բռնում են Չինաստանի այս կամ այն ռայոնը, վարում են ինքնուրույն ներքին ու արտաքին քաղաքականություն: Հաճախ այս կամ այն յերկրամասի վրա ազդեցություն ունենալու համար, այսինքն՝ գյուղացիներին թալանելու իրավունք ձեռք բերելու համար, պատերազմ են հայտարարում միմյանց: Հենց այդպիսի

ֆեոդալական բաժան-բաժան դրությունն է, որ անընդհատ առաջ է բերում պատերազմներ միլիտարիստների միջեվ Չինաստանում. այդպիսի ֆեոդալական բաժան-բաժան լինելու հիմքում ընկած է ճորտատիրական հարաբերությունների տիրապետությունը:

Միլիտարիստների բանակները սովորաբար համալրվում են վարձու զինվորներով. այդ բանակների զինվորները հավաքագրվում են քաղաքի և գյուղի լյումպեն-պրոլետարներից. այսինքն՝ իրենց քայքայված անտեսության հետ կապերը խզած և նշանավոր չափով ապադասակարգայնացած և բարոյալքված արհեստավորներից ու գյուղացիներից: Այդպիսի բանակը սակավ մարտունակ է: Նրանում թագավորում է մահակի դիսցիպլինան: Զինվորներին դաստիարակում են իրենց գեներալներին հնազանդվելու ոգով: Հաճախ զինվորների ռոճիկները չտալու պատճառով նրանք թալանով են զբաղվում: Քիչ չեն այնպիսի դեպքեր, յերբ գեներալները զինվորների քմահաճույքին են հանձնում ամբողջ քաղաքներ, վորոնք յենթարկվում են գլխովին ալան-թալանի:

Միլիտարիստների բանակներին սովորաբար զենք ու զինասարք են հայթայթում իմպերիալիստները: Իրենք զինանոցներ քիչ ունեն Չինաստանում:

## 4. ՉԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.

Տնտեսական ճգնաժամը հակասությունները միայն չի սրում իմպերիալիստների և բուրժուազիայի շարքերում: Ե՛լ ավելի կտրուկ կերպով նա սրում է հակասությունները իմպերիալիստների և չինական բուրժուազիայի միջև մի կողմից՝ և Չինաստանի բանվորների ու գյուղացիների միջեվ՝ մյուս կողմից:

1928 թվի ընթացքում, փոքր դադարից հետո, մենք ականատես յեղանք գյուղացիական հսկայական շարժմանը, վորը այժմ գերաճել, վեր է ածվել գյուղացիական պատերազմի: Ագրարային հեղափոխությունը ընդգրկել է համարյա Չինաստանի ամբողջ յերկրա-



մասի կեսը: Չին գյուղացիներն իրենք իրենց սեփական ձեռքերով են լուծում ագրարային խնդիրը: Ագրարային հեղափոխությունը Չինաստանում այժմ ընթանում է հողի «սև վերաբաժանում» լոզունգի տակ: Ամբողջ հողը, ում էլ վոր պատկանելիս լինի, յենթակա յե վերաբաժանման չքավորների, միջակ գյուղացիների և բատրակների միջև: Միայն այսպիսի ճանապարհով, սև վերաբաժանման ճանապարհով, կարելի յե լուծել ագրարային խնդիրը Չինաստանում:

Կալվածատերերի հողերը բռնագրավելով և բաժանելով իրար միջև, գյուղացիները կազմակերպում են իրենց իշխանությունը—Խորհուրդների իշխանությունը: 1930 թվի կեսերին խորհուրդների իշխանությունը Չինաստանում տիրապետում եր 140 հազար քառ. կիլոմետր տարածությամբ յերկրամասերի, 50 միլիոնից ավելի բնակչությամբ:

Կալվածատերերի դեմ մղած պայքարում աճեց չինական Կարմիր բանակը: Չինաստանում հաշվվում են մինչև 300 հազար զինված գյուղացիներ:

Յեթե մենք չին գյուղացիներից բաղկացած այդ ամբողջ զինված ուժից ընտրեյինք ամենից ավելի դիմացկուններին և լավ կազմակերպվածներին ու կազմեյինք կարմիր բանակային զորամասեր, այն ժամանակ մենք կստանայինք 50 հազար սվին ունեցող մի բանակ:

Չինական Կարմիր բանակի կորպուսների մեծամասնությունը կազմով 40–85 տոկոսը գյուղացիներ են: Կան այնպիսի կորպուսներ, վորտեղ գերակշռող թիվը զինվորներ են: Յուրաքանչյուր կորպուսում կան կուսակցական և կոմյերիտական կազմակերպություններ: Մի քանի (4,8,6,) կորպուսներում կուսակցականների և կոմյերիտականների տոկոսը հասնում է 10-ի:

Կարմիր բանակը սպառազինված է ժամանակակից հրացաններով, վոր սովորաբար խլում են հակառակորդից:

Մի քանի կորպուսներ ունեն հրետանի: Ամեն մի կորպուս բաղկացած է 2–3 դիվիզիայից, դիվիզիան-3

գնդից, գունդը—3 գումարտակից, գումարտակը—3 վաշտից, վաշտը—3 դասակից, դասակը—3 ջոկից:

Այս է չինական հեղափոխության ուժը: Չինական գյուղացիները պայքարի յեն դուրս յեկել կալվածատերերի ու բուրժուազիայի դեմ, ունենալով իր զինված ուժը, վորն ընդունակ է խոշոր ճակատամարտներ վարել միլիտարիստների բանակների դեմ:

Հեղափոխական պայքարի կողքին մենք Չինաստանում ականատես ենք բանվորական շարժման աճմանը: 1930 թ. Չինաստանը գործադուլներին մասնակցողների թվով ամբողջ աշխարհում առաջին տեղն եր բռնում (750 հազար մարդ 1930 թ. առաջին 6 ամսում): Չինաստանի պրոլետարիատը, վոր 5 միլիոնից ավելի մարդ են հաշվում, պայքար է մղում վոչ միայն ամենօրյա տնտեսական պահանջների համար, այլև համարյա գործադուլ չի լինում, վոր չանցնի քաղաքական բնույթի լոզունգների տակ: Բանվորների գլխավոր քաղաքական լոզունգն է՝ խորտակել ֆեոդալների, բուրժուազիայի և Գոմինդան կուսակցության լուծը. Գոմինդան կուսակցությունը պաշտպանում է այդ կալվածատերերի ու բուրժուազիայի շահերը: Ռեակցիայի առաջին շրջանում, 1927 թվին հեղափոխությունը ճնշելուց հետո, չինական հակահեղափոխական Գոմինդանը փորձում եր իր կողմը գրավել բանվոր դասակարգին մեզ հայտնի զուբատովյան քաղաքականության մեթոդներով, կաշառելով Միության առաջնորդներին: Չինական կոմկուսակցության ղեկավարությամբ Չինաստանի բանվոր դասակարգը սկսում է արագորեն ազատագրվել այդ զուբատովշչինայի լծից:

Գյուղացիների պայքարը գյուղում և բանվորների պայքարը քաղաքներում ընթանում է չինական կոմկուսակցության ղեկավարությամբ: Միայն բանվոր դասակարգը, վորպես հեղափոխության հեգեմոնը (գերիշխողը) կոմկուսակցության ղեկավարությամբ կարող է ավարտել բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը (հողային հարցի լուծումը և կալվածա-



տերերի, բուրժուազիայի ու իմպերիալիստների լծի խորտակումը), այնպես վոր համաշխարհային պրոլետարիատի պաշտպանությամբ կկարողանա Չինաստանին հնարավորություն տալ զարգանալու վոչ կապիտալիստական ճանապարհով: Այստեղ պետք է մատնանշել այն, վոր չնայած ռեակցիային, չնայած խստագույն սպիտակ տեռորին, վորն սկսվեց Չինաստանում 1927 թվին, չինական Կոմկուսակցությունն այդ փորձություններից դուրս յեկավ, վորպես Կոմունիստական Ինտերնացիոնալի խոշոր մարտական ջոկատներից մեկը: Կոմկուսակցությունը վոչ միայն պահպանեց իր կադրերին, այլև աճում է այժմ բանվոր դասակարգի առաջավոր տարրերի հաշվին: Չինական կոմկուսակցության անդամների թիվն այժմ հասնում է 100 հազարի:

### 5. ԽՍՀՄ ՅԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԸ

Չինաստանի բանվորների ու գյուղացիների պայքարը համակրանք է առաջացնում ԽՍՀՄ գյուղացիների ու բանվորների և ամբողջ աշխարհի աշխատավորների մեջ: Մեր Միությունը հանդիսանում է չին աշխատավորների հեղափոխական պայքարի դրոշակը: Չին աշխատավորները մեր հեղափոխության փորձով սովորում են, թե ինչպես պետք է հեղափոխական պայքար մղել: Մեր Միության Խորհրդային Իշխանությունը վորպես որինակ է հանդես գալիս Չինաստանի բանվորների ու գյուղացիների համար: Ահա թե ինչու մեր յերկիրը ոգտվում է Չինաստանում հսկայական ազդեցությամբ և համակրանքով չին բազմամիլիոն ժողովրդի շրջանում:

Հեղափոխության աճումը Չինաստանում, ընդհակառակը, վատացնում է մեր և չինական ռեակցիայի միջև հարաբերությունները: Չինական տիրող միությունը (բլոկ) իմպերիալիստների ճնշման տակ փորձեր է անում ամեն կերպ պատերազմ հրահրել սոցիալիզմ կառուցող յերկրի դեմ: Անցյալ տարի իմպերիալիստների

ճնշման տակ և ՉԱ. Երկաթուղագիծը գրավելու պատրվակով չինական ռեակցիան փորձում եր մեզ զինված պայքարի մեջ քաշել: Շնորհիվ մեր Կարմիր բանակի ամրակուռության, ոգտվելով վոչ միայն ԽՍՀՄ բանվորների ու գյուղացիների ոգնությունից, այլև Չինաստանի աշխատավորների և ամբողջ աշխարհի աշխատավորների ոգնությունից, մենք վճռական հակահարված տվինք չին գեներալների սուտ փորձերին, վորոնք մեզ ուզում եյին պատերազմի մեջ քաշել: Միջադեպից հետո մենք Խաբարովսկում կնքեցինք մի դաշնագիր, վորի համաձայն վերականգնվեցին դիվանագիտական և առևտրական նորմալ հարաբերությունները Չինաստանի հետ: Չնայած դրան, Չինաստանը մինչև այժմ ել չի ցանկանում մեզ հետ համաձայնության գալ: Չինաստանի ներկայացուցիչ Մոդե-Գույը իմպերիալիստների ազդեցության տակ մեկնեց Չինաստան, առանց բանակցությունները վերջացնելու:

Չինաստանը իմպերիալիստների շահերին համեմատ քաղաքականություն վարելով, չի դադարում պայքար մղելուց ԽՍՀՄ դեմ, վորը միակ յերկիրը յեղավ, վոր հրաժարվեց Չինաստանում ցարական կառավարության բոլոր արտոնություններից, և Չինաստանի նկատմամբ վորպես հավասար և անկախ մի յերկրի հետ վարում է իր քաղաքականությունը:

Հեղափոխական շարժումը Չինաստանում, իմպերիալիստական յերկրներում յեղած սուր ճգնաժամը, վերջիններիս միջև չինական շուկայի համար մղվող պայքարը,—ահա այս բոլորը ե՛լ ավելի յե սրում ռազմական վտանգը Միության համար մեր արևելյան սահմաններում: Իմպերիալիստները փորձեցին և կփորձեն իրենց հակասությունները լուծել մեր Միության հաշվին: Ահա թե ինչու ԽՍՀՄ աշխատավորների ուշադրությունը պետք է բևեռված լինի ռազմական վտանգի վրա, վորպիսի վտանգը վոչ միայն արևմուտքից, այլև Արևելքից է գալիս:



# XII. ՃԱՓՈՆԻԱ

1. Ընդհանուր տեղեկություններ: 2. Արտաքին քաղաքականությունը: 3. Ճափոնիան և ԽՍՀՄ: 4. Ճափոնական կապիտալիզմի հակասությունները: 5. Բանակն ու նավատորմիղը:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ճափոնիան գտնվում է Ասիայի ամենաարևելքում, կղզիների վրա:

Տարածությունն է 388 հազար քառ. կիլոմետր, այսինքն՝ մոտավորապես հավասար է Լեհաստանին: Ճափոնիայի բնակչության թիվն է 64½ միլիոն: Ճափոնիայի գաղութների տարածությունն է մոտ 300 հազար քառ. կիլոմետր, բնակչության թիվը մոտ 26 միլիոն: Գաղութներից գլխավորը Կորեան է, վորը գտնվում է Ասիական մայր ցամաքում, վորն ունի 21 միլիոնից ավելի բնակչություն: Ճափոնիայի բնակչության ընդհանուր թիվը 90 միլիոնից ավելի յե: Բնակչության 55 տոկոսն ապրում է գյուղերում, 45 տոկոսը քաղաքներում: Քաղաքային բնակչությունը ամբողջ ժամանակ ավելանում է գյուղական բնակչության հաշվին:

Ճափոնիան համեմատաբար վոչ այնքան ուշ (մոտ կես դար սրանից առաջ) թևակոխեց կապիտալիստական արդյունաբերության զարգացման ուղին, սակայն արդեն հսկայական հաջողություններ է ձեռք բերել: Համաշխարհային պատերազմին համարյա չմասնակցելու շնորհիվ կարողացավ խոշոր ներդրումներ անել իր արդյունաբերության մեջ: պատերազմի ժամանակ Ճափոնիայի արդյունաբերական արտադրանքը ըստ հիմնական ճյուղերի (չուգուն, պողպատ, մեքենաշինարարություն, նավաշինարարություն) ավելացավ հինգ

անգամ։ Ճապոնական արդյունաբերության բնորոշ կողմըն այն է, որ նա զարգացավ և աշխատում է այժմ առավելապես ներմուծվող հումույթով։ Ճապոնիայում այժմ պահանջվող նավթի միայն 1/4-ն է հանվում, յերկաթի 2/3-ը։ Բամբակը ամբողջությամբ ներմուծվում է, չկան ածուխի լավ տեսակներ։ Ճապոնական իմպերիալիզմը աշխատում է, վորքան հնարավոր է, խորը ներթափանցել Չինաստան, վորտեղ նա փաստորեն տիրապետում է հարուստ հանքերի։ Չինաստանը Ճապոնիային հարկավոր է նաև վորպես ընդարձակ շուկա իր արդյունաբերության բանվածքները վաճառահանելու համար։ Ներկայումս Ճապոնիան հանդիսանում է աշխարհի խոշորագույն կապիտալիստական յերկրներից մեկը, բարձր զարգացած արդյունաբերությամբ և տեխնիկայով։ Մետաքսի արտահանությամբ աշխարհում առաջին տեղն է բռնում։

Ճապոնիայի գյուղատնտեսությունը նույն նշանակությունն ունի, ինչ վոր արդյունաբերությունը։ Ամբողջ մշակելի հողի համարյա կեսը (2/5) պատկանում է կալվածատերերին և մանր կալվածատեր ազնվականներին, վորոնք իրենց հողը կապալով են տալիս գյուղացիներին։ Գյուղացիության հսկայական մեծամասնության դրությունը չափազանց ծանր է։ Յեկամտի կեսը կապալավարձ են տալիս։ Համաշխարհային պատերազմից հետո, Ճապոնիայի գյուղացիությունը սկըսում է կամաց կամաց հետադիմել, ցանքատարածները կրճատվում են, ընկնում է բերքատվությունը։ Հետադիմության հիմնական պատճառը գյուղատնտեսական մթերքների գների անկումն է, վորը կատարելապես քայքայում է մանր գյուղացիական տնտեսությունը։

## 2. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յերկրի անապահով լինելը հումույթով, պարենավորման միջոցների պակասությունը Ճապոնիայի բուրժուազիայի առաջ դնում են շուկաների հարցը։ Ճապոնական իմպերիալիստների համար ամենից ավելի շահավետ յերկիրը Չինաստանն է, վորը ներկայանում



է վորպես ամենահարուստ շուկան հումույթով և վաճառահանման համար, մանավանդ Հյուսիսային Չինաստանը (Մանջուրիան)։ Սակայն Ճապոնիայի շահերը Չինաստանում ընդհարվում են Անգլիայի և Հ.Ա. Միացյալ Նահանգների շահերի հետ և ավելի մեծանում է նոր համաշխարհային պատերազմի սպառնալիքը։

Ճապոնիան ամեն կերպ նպաստում է Չինաստանի քաղաքականապես բաժան-բաժան լինելուն և առաջվա գեներալիտետի պահպանմանը, արգելք է հանդիսանում չինական հեղափոխության աճմանը։ Բացի չինական կառավարիչների վրա ազդեցություն գործելուց, վոր նրանք լինեն ավելի՛ վճռական և ճնշեն հեղափոխական շարժումը, Ճապոնիան շատ անգամ իր զինված ուժերով (գլխավորապես նավատորմիղով) օգնել է չին գեներալներին, նրանց՝ ապստամբած պրոլետարիատի,—գյուղացիության ու կարմիր բանակների դեմ մղած պայքարում։

## 3. ՃԱՊՈՆԻԱՆ ՅԵՎ ԽՍՀՄ

Ճապոնական իմպերիալիստների ուշադրությունը դարձված է և՛ մեր Հեռավոր Արևելքի վրա։ Քաղաքացիական պատերազմի ժամանակ Ճապոնիան գործոն մասնակցություն ունեցավ ինտերվենցիայի մեջ, օգնեց չեխո-սլովակներին և Կոլչակին, գրավեց իր զորքերով մեր Հեռավոր Արևելքը համարյա մինչև Բայկալը։ Միայն 1922 թվին կարմիր զորքերի ճնշման տակ և իր իմպերիալիստական ախոյանների ազդեցության տակ, վորոնք չեյին ցանկանում, վոր Ճապոնիան ուժեղանա, նա հարկադրված յեղավ մաքրել մեր յերկրամասը։ 1925 թվի սկզբին մի դաշնագիր կնքվեց, վորով կանոնավորվեցին Ճապոնիայի և ԽՍՀՄ միջև հարաբերությունները։ Համենայն դեպս, Ճապոնիան շահագրգռված լինելով մեր Հեռավոր Արևելքի ծովերի հարստությամբ, շարունակում է հակախորհրդային իր քաղաքականությունը։ Նա կառուցում է ստրատեգիական նշանակություն ունեցող յերկաթուղագծեր Մանջուրիայում, պաշտպանում է իր ձկնարդյունաբերողների գիշատիչ

ձգտումները մեր ձկնորսարանների նկատմամբ Ախոտի ծովում և Կամչատկայի ափերում, Հեռավոր Արևելքում խորհրդային փողի սիստեմը քայքայելու քաղաքականությունն է վարում, սպեկուլյացիա անելով մեր դրամանիշներով, ձգտում է ներխուժել Հյուսիսային Սախալինը, վորը հարուստ է նավթով, և այլն:

## 4. ՃԱՓՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական և քաղաքական համաշխարհային ճգնաժամը 1929/30 թթ. չափազանց ուժեղ կերպով անդրադարձավ Ճափոնիայի վրա:

Արդյունաբերության ներդրումները, նույնպես և պողպատի արտադրությունը կրճատվեց յերկու անգամ: Գործվածքային արտադրությունը կրճատվեց 30 տոկոսով, մետաքսի գները,—վորը գլխավոր արտահանման առարկան է Ճափոնիայում,—ընկան 55 տոկոսով: Գործազուրկների թիվը ավելացավ 1½ միլիոն մարդով: Արտաքին արեվտուրը կրճատվեց համարյա 30 տոկոսով: Քանի գնում աճում են կառավարության ֆինանսական դժվարությունները: Կրճատվում է պետական բյուջեն: 1931 թվին դրությունը լավանալու հեռանկարներ չկան. ավելի շուտ կարելի յե սպասել, վոր քանի գնա հետագայում ավելի կդժվարանա դրությունը, մանավանդ գյուղատնտեսության մեջ:

Բանվոր դասակարգի դրությունը Ճափոնիայում ավելի վատթար է, քան Յեվրոպայի կապիտալիստական յերկրներում: Բանվորական օրվա տևողությունը հասնում է մինչև 11 ժամի (միջին բանվորական օրը—10—10½ ժամ): Աշխատավարձը ցածր է և շարունակում է նվազել: Գործադուլային շարժումը քանի գնում աճում է: 1928 թ. յեղել է մոտ 750 գործադուլ, 82 հազար մասնակցողներով, 1929 թ. 1 հազար 255 գործադուլ 150 հազար մասնակցողներով, իսկ 1930 թվի առաջին կիսում ավելի շատ գործադուլներ են յեղել քան ամբողջ 1929 թվի ընթացքում: Չնայած մասսայական շարժումներին, բանվորական շարժման կազմակերպված ձևերը



շատ թույլ են զարգացած: Պրոֆմիությունների մեջ են մտած բանվորների միայն 6 տոկոսը: Բանվորների նըշանավոր մասը Ճափոնիայում կանայք են: Նրանց կազմակերպվածությունը դեռ մեկ տոկոսից էլ քիչ է: Հեղափոխական պրոֆմիությունների մեջ կազմակերպվածների թիվը այնքան էլ մեծ չէ: Թույլ կազմակերպության պատճառը վոստիկանական խստագույն տերորն է ու ռեֆորմիստների ուժեղ ազդեցությունը:

Գյուղացիական շարժումը զարգանում է տարերայնորեն: Հաճախակի յեն դառնում կոնֆլիկտները վարձակալների հետ: Քիչ չեն այնպիսի խոշոր ընդհարումները, վորտեղ տասնյակներով զոհեր են լինում: Հետագայում, գյուղատնտեսության ճգնաժամի պատճառով անխուսափելի յե հեղափոխական շարժման ուժեղացումն ու զարգացումը:

Ճափոնիայի Կոմկուսակցությունը մեծ չէ, նա աշխատում է խստագույն տերորի պայմաններում: Շատ անգամ են ձերբակալվել կենտրոնական և տեղական կոմիտեների աշխատակիցները:

## 5. ԲԱՆԱԿՆ ՈՒ ՆԱՎԱՏՈՐՄԻՂԸ

Իր հետադիմական քաղաքականությունը մայր ցամաքում պաշտպանելու համար ճափոնական իմպերիալիզմին հարկավոր են ուժեղ բանակ և նավատորմիղ:

Ճափոնիայի բանակը թեև առանձնապես բազմամարդ չէ (220 հազար), բայց ավելի շուտ նրա կադրերը պատերազմի ժամանակվա միլիոնավոր բանակը ղեկավարելու համար է: Ճափոնական իմպերիալիզմը պատերազմից անմիջապես հետո ձեռնամուխ յեղավ իր զինված ուժերի ռազմական պատրաստության և ամբողջ բնակչությունը ռազմական գործը սովորեցնելուն: Այդ նպատակով լայնորեն ծավալված է նախակոչյան և արտադպրոցային պատրաստությունը. պահեստիների կանոնավոր վերապատրաստում է կատարվում:

Մշտական բանա[illegible]արերում և վորոշ թվական ա[illegible]ակցած



ՀՀ Ազգային գրադարան
NL0935379

եր 198 հազար մարդուց, 1930 [illegible]
դուց) և չափազանց զարկ է տալ[illegible]
ապրիմանը: 1914 թ. Ճապոնիան[illegible]
ներ, 1930 թ. մոտ հազար հատ (չհաշված 180 հատ քաղաքացիական ավիացիայի սավառնակները)։ 1914 թ. ամեն մի դիվիզիայում կար 24 հրանոթ, 1930 թ.—60 հրանոթ, 1914 թ. դիվիզիան ուներ (թեթև և ծանր) 24 գնդացիր, 1930 թ.—264 գնդացիր:

Ճապոնական բանակի կազմակերպության բնորոշ առանձնահատկությունն այն է, որ դիվիզիան ունի 4 հետևակային գունդ՝ ամփոփված 2-ական բրիգադի մեջ 2-ական գնդով: Հետևակային գունդը կազմված է 3 գումարտակից, գումարտակը 4 հրաձգային վաշտից և մեկական գնդացրային դասակ յուրաքանչյուրում: Վաշտը կազմված է 3 դասակից, դասակը—6 ջոկից—3 թեթև գնդացրային և 3 հրաձգային ջոկեր:

Ճապոնիան առաջին հերթին—առաջնակարգ ծովային պետություն է:

Ճապոնիայի ռազմածովային տորմիղը տոննաժով յերրորդ տեղն է բռնում աշխարհում (Անգլիայից և Հ. Ա. Մ. Ն. հետո)։ Իսկ մարտական ուժով նա մրցում է Ամերիկայի հետ: Ճապոնիայի նավատորմիղն աճում է այնպես արագ, ինչպես նրա բանակը, իսկ տեխնիկական ու մարտական հատկություններով նրա հետ մրցող չկա: 1914 թ. ռազմածովային նավերի թիվը հասնում եր 143-ի, 591 հազար տոննաժով, 1930 թ. նավերի թիվը հասավ 231-ի՝ մինչև 746 հազար տոննաժով:

Այդ նույն շրջանում եր նշանավոր չափով աճեց ճապոնական նավատորմիղի գծային նավերի հզորությունը: Գծային նավերի տարողությունն ավելացավ 13 հազար տ. մինչև 25 հազար տոնն[illegible]մեքենաների հզորությունը 12 հազար ձիու ուժից մինչև 28 հազար ձիու ուժի. արագությունը 17-ից մինչև 23 հանգույցի, գլխավոր հրետանական արտադրողականությունը՝ 1 րոպեում [illegible] մինչև 10 տոնն[illegible] թնդանոթների, շրջերի համազարկի կշիռը 1,1-ից մինչև 6 տ.:



1
2921